Հրաչ Բայադյան
Դավիթ Ստեփանյան
Վահրամ Սողոմոնյան

Հասարակագիտություն

7

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Հրաչ Բայադյան
Դավիթ Ստեփանյան
Վահրամ Սողոմոնյան

Հասարակագիտություն

7

Դասագիրք
հանրակրթական
դպրոցի համար

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ
ԴՊՐՈՑ
Երևան • 2023

ՀՏԴ 373:30(075.3)
ԳՄԴ 60g72
Բ 260

Հեղինակներ՝ Հրաչ Բայադյան, Դավիթ Ստեփանյան, Վահրամ Սողոմոնյան

Խմբագիր՝ Սաթենիկ Մկրտչյան

Ձեւավորող՝ Նորա Գալֆայան

Նկարիչ՝ Մեգգի Արարատյան

Կազմի ձևավորող՝ Լուսինե Նավասարդյան

Համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ ընդունված Հանրակրթության պետական չափորոշչին: Դասագիրքը ստեղծվել է «Մասնակցային դպրոց» ԿՀ միջգիտակարգային նախագծի շրջանակում:

Նախագծի ղեկավար՝ Վահրամ Սողոմոնյան:

Բայադյան Հրաչ, Ստեփանյան Դավիթ, Սողոմոնյան Վահրամ

Բ 260 Հասարակագիտություն: 7-րդ դասարանի դասագիրք / Հ. Բայադյան, Դ. Ստեփանյան, Վ. Սողոմոնյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023.- 144 էջ:

ՀՏԴ 373:30(075.3)
ԳՄԴ 60g72

Երաշխավորված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

Դասագրքում բովանդակային եւ տեխնիկական խնդիրներ հայտնաբերելու դեպքում կարող եք նամակ գրել հետեւյալ էլփոստին՝ masnakcayindproc@gmail.com:

© Բայադյան Հ., 2023
© Ստեփանյան Դ., 2023
© Սողոմոնյան Վ., 2023
© «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023
© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

ISBN 978-9939-1-1725-6

Սիրելի աշակերտ,

այս գիրքն առաջինն է «Հասարակագիտություն» առարկայի քո դասագրքերի շարքում: Այն կօգնի քեզ հասկանալ, թե ինչ է հասարակությունը, կարդալ ու քննարկել հասարակությանը վերաբերող հետաքրքիր թեմաներ:

Ինչպե՞ս են մարդիկ և բնությունը փոխադարձաբար ազդում միմյանց վրա: Ի՞նչ խմբերից է բաղկացած հասարակությունը: Ի՞նչ կանոններով է գործում հասարակությունը: Ինչպե՞ս է իրավունքը կարգավորում մեր կյանքը: Ի՞նչ նշանակություն ունեն ընտանիքը և համայնքը մեզ համար: Ի՞նչ է տնտեսությունը, և ինչպե՞ս է մարդը մասնակցում քաղաքական կյանքին:

Մենք ձգտել ենք, որ այս դասագիրքը քեզ համար լինի ոչ միայն օգտակար տեղեկությունների ու գիտելիքների աղբյուր, այլև իսկապես հետաքրքրի քեզ և արթնացնի թվարկված թեմաների մասին մտածելու, բանավիճելու ցանկություն:

Մաղթում ենք հաճելի և օգտակար ուսումնառություն:
Հեղինակային խումբ

Ինչպես աշխատել այս դասագրքով

ԳԼՈՒԽ 1

Մարդ և բնություն

Սովորելով այս գլուխ բովանդակությունը, կկարողանաս՝

1) ներկայացնել բնության, մարդու և հասարակության միջև կապերը ուրվագծերի միջոցով,
2) նկարագրել մարդու պահանջմունքները,
3) դիմանալով մեծության անհարմարությանը մարդու և հասարակության կյանքում,
4) ներկայացնել մեծ մասություն հարաբերությունների զարգացման փուլերը և սեփական դիրքորոշումներ ունենալ այդ հարաբերությունների մասին,
5) բացատրել բնապահպանական շարժումների առաջացման պատճառները,
6) առանձնացնել քայլեր, որոնք կարող են նվազեցնել բնության և հասարակության ներգործությունը իրենց վրա:

Դասագրքի յուրաքանչյուր գլուխ սկսվում է երկու էջերի բացվածքով: Այստեղ դու կարող ես տեղեկանալ, թե ինչ կիմանաս և ինչ կկարողանաս: Պատկերներն ու տեքստերը քեզ կհուշեն, թե ինչի մասին է խոսքը:

*Մենք կարևոր գործողություն կատարելուց առաջ հաճախ մտածում ենք՝ ճի՞շտ է արդյոք մեր որոշումը, թե՞ սխալ: Երբեմն նման հարցեր տալիս ենք նաև ինչ-որ գործողություն կատարելուց հետո՝ արժե՞ր նման բան անել, թե՞ ոչ, դրանից ավելի շատ օգո՞ւտ կլինի, թե՞ վնաս, ի՞նչ են ուրիշները կարծում իմ արարքի մասին: Ամեն անգամ, երբ մտածում ենք նման հարցերի մասին, մենք գործ ունենք մարդկային կյանքի մի ոլորտի հետ, որ կոչվում է բարոյականություն: Իսկ թե ի՞նչ է **բարոյականությունը**, ի՞նչն է դրա դերը հասարակության կյանքում. այս ամենը կիմանաս շուտով:*

Բացվածքին հաջորդում է կարճ տեքստ, որն ընդհանրական գծերով նկարագրում է թեման և հարցեր առաջարկում: Սրանք տրված են շրջանակի մեջ: Տեքստն օգնում է, որ տրամադրվես նյութը կարդալուն և ուսումնասիրելուն:

3.3 Հույզերի կառավարում և արդյունավետ հաղորդակցություն

Սոցիալական ճանաչողության կողքին կարևոր է ինքնաճանաչումը: Մարդը շրջակա միջավայրի մի մասնիկն է: Երբ նա մասնակցում է ինչ-որ իրադարձության, նրա ստացած տպավորությունները ինչ-որ բան «ասում են» նաև հենց իր մասին: Այդ տպավորությունների մեջ մարդ կարող է գտնել նաև իր գործողությունների բացահայտ կամ անբացահայտ գնահատականներ՝ մի քաջալերող խոսք, համակրանք կամ հիասթափություն արտահայտող հայացք: Այդ գնահատականները հատկապես արժեքավոր են, երբ գալիս են նրա համար կարևոր մարդկանցից:

Ենթագլուխները նշված են թվերով: Ենթագլխի վերնագիրը քեզ կօգնի պատկերացում կազմել այդ մասին:

Ն2 «Սասնա ծռերը» արվեստի ու գրականության մեջ

«Սասունցի Դավիթ» («Սասնա ծռեր») էպոսին անդրադարձել են բազմաթիվ հայ գրողներ և արվեստագետներ: Էպոսի գրական մշակումներից ամենահայտնին Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմն է: Շատ հայտնի են այդ պոեմի համար նկարիչ Հակոբ Կոջոյանի կատարած նկարազարդումները:

Իսկ լրացուցիչ նյութերը միշտ նշված են **Ն** տառով և համարակալված են:
Օրինակ՝ **Ն2**, այսինքն՝ նյութ համար **2:**

Սակայն միջնադարում քրիստոնեության մեջ այս հավասարական և անխտրական մոտեցումն այլևս գոյություն չուներ, և կանոնն ավելի շատ կիրառվում էր նախքրիստոնեական իմաստով՝ իբրև նույն դիրքի մարդկանց միջև հարաբերությունները կարգավորող կանոն, որը կարող էր չվերաբերել կանանց, այլ էթնոսի կամ կրոնի մարդկանց: Վերը նշվածի լավագույն ապացույցն ինկվիզիցիան կամ հավատաքննությունն է:

Հետաքրքիր է քննարկել, թե ինչ դեր ունի ոսկե կանոնը մեր առօրյա կյանքում: Օրինակ՝ այն ավելի շատ նպաստում է հասարակակության մեջ ընդունված վարքի պահանջմունքը, թ՞ե խթանում է անձնական կարեկցանքը և ուրիշներին օգնելու միտումը: Կամ ընդհանուր, համամարդկային բարոյականություն, թվ՞ ամեն անգամ պիտի փորձենք հասկանալ տվյալ ժամանակի, տվյալ հասարակության և ամեն առանձին դեպքին հատուկ հանգամանքները: Փորձե՞ք գտնել այս հարցերի պատասխանը:

S1

Ժոզեֆ-Նիկոլա Ռոբեր-Ֆլորի, Գալիլեոն ինկվիզիցիայի առջև, 1847

Ինկվիզիցիա

Ինկվիզիցիան կամ հավատաքննությունը զրոցի հատատատություն էր, որ ստեղծվել էր կաթոլիկ եկեղեցու ներսում XII դարում՝ արմատախիլ անելու և պատժելու հերձվածողությունը (աղանդավորությունը) ողջ Եվրոպայում և Ամերիկայում: 1633 թ. ինկվիզիցիան հայտնի գիտնական Գալիլեո Գալիլեին դատապարտեց տնային կալանքի այն բանի համար, որ վերջինս պնդում էր, թե երկիրը պտտվում է արևի շուրջը: Գալիլեոն տնային կալանքի տակ մնաց մինչև իր մահը՝ 1644 թ., սակայն գիտության հետագա զարգացումներն ապացուցեցին նրա ճշմարտացիությունը:

61

Թեմայի մեջ նյութերից բացի կարող ես գտնել նաև լրացուցիչ տեղեկություն: Դրանք նշված են **S** տառով և նույնպես համարակալված են: Օրինակ՝ **S1**, այսինքն՝ տեղեկություն համար **1:** Տեղեկությունը թույլ է տալիս ավելի լավ պատրաստվել դասին և օգնում է կատարել առաջադրանքները:



ԻՐԱՎԱՀԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է: Ծննդյան պահից մարդն ունենում է իրավունքներ, սակայն որոշ իրավունքներ նա ձեռք է բերում տարիքի ընթացքում:

ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, պայմանագրեր կնքելուև աշխատանքային պարտականություններ ստանձնելու ունակությունն է:

ՀՀ օրենք երեխայի իրավունքների մասին (29 մայիսի, 1996 թ.)
ՀՀ ընտանեկան օրենսգիրք (9 նոյեմբերի, 2004 թ.)

Ընթացքում կիանդիպես նաև տարբեր երևույթների սահմանումների, որոնց զուգահեռ ձախ կողմում կտեսնես գծիկ:



Առաջադրանք

1. **Նշիր** մարդու պահանջմունքները, կարիքները և ցանկությունները:
2. Կազմիր աղյուսակ և մի սյունակում գրիր ձեր տան այն առարկաները, որոնք վերաբերում են պահանջմունքներին, մյուսում այն առարկաները, որ կարիքները բավարարելու համար են, երրորդում նշիր ցանկություններին վերաբերող առարկաները: Համեմատելով երեք սյունակի պարունակությունը՝ արդյոսակի հիման վրա **պարզաբանիր** պահանջմունքների, կարիքների և ցանկությունների տարբերությունը:
3. **Ն4**-ի հիմա վրա **առանձնացրու** ամենաշատը հանդիպող բժշկական կարիքները:
4. **Ն5**-ի հիման վրա **դիրքորոշում հայտնիր** սպառողականության վերաբերյալ՝ բերելով կոնկրետ օրինակներ և փաստարկելով դիրքորոշումդ:
5. **Բացատրիր** սակավության մասին երկու տեսակետների տարբերությունը: Դասարանում բոլորով **քննարկեք** ի՞նչ կլիներ, եթե ռեսուրսները լինեին անսահմանափակ և սակավություն չլիներ, արդյոք հնարավո՞ր է նման բան:

Առաջադրանքներում օգտագործվում են նյութերի **(Ն)** և տեղեկատվության **(Տ)** նշանները: Բացի դրանից՝ առաջադրանքներն ըստ բարդության բաժանված են երեք մակարդակի և նշված են տարբեր գույներով: Առաջին մակարդակը նշված է կանաչով, երկրորդը՝ նարնջագույնով, իսկ երրորդը՝ կապույտով: Երբեմն մեկ առաջադրանքի մեջ կիանդիպի միաժամանակ երկու մակարդակի խնդիր:

Պայմանական նշաններ

- Գիտելիքի հաղորդում և ներկայացում
- Վերադասավորում և փոխանցում
- Ինքնանդրադարձում և խնդիրների լուծում

I. Գիտելիքի հաղորդում և ներկայացում
(հաղորդել ու ներկայացրել)

Առաջադրական բաժին	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
Նշիր	Ցվարկիր պահանջվող տեղեկություններն ու տերմինները՝ ըստ դրանց կարևորության և հերթականության:	**Օրինակներ.** *Առաջինը, պետք է նշել ...: Հատկապես կարևոր է ...: Բացի այդ, ...*
Մշակիր	Քաղիր տեղեկություններ նյութից և հաղորդիր դրանք:	***Նյութից դուրս բեր կարևոր կետերը:***
Ներկայացրիր	Իրողությունը հաղորդիր այնպես, որ ուրիշները լավ պատկերացնեն այն: Դա կարող ես անել տեսական գիտելիքի նամենամների ու	Կիրառիր պատկերավոր խոսք, գիշատ տերմիններ: Խուսափիր ավելորդ բառերից: **Օրինակներ.**



մասին: Կիտեք, թե ինչ է «Կարսրր գրրքը» կա
արգելոցներ: Ձեզ ծանոթ են «օրգանական գյուղա*
մաքուր սնունդ», «գենետիկորեն ձևափոխված

ԳԼՈՒԽ 1 ՄԱՐԴ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Արգելոց, գ. Բնության տարածքների հատուկ պահպանման տեղամասեր, որոնք ունեն գիտական, մշակութային, պատմական և կենդանիներն ու բույսերը պաշտպանելու նշանակություն:

Կարդալիս կիանդիպես աստղանիշով բառեր. դա նշանակում է, որ բացատրությունը կարող ես գտնել գրքի վերջում զետեղված բացատրական բառարանում, որտեղ ամեն գլխում հանդիպող բառերը առանձնացված են համապատասխան բաժնում:

Գրականություն

Դասագրքի յուրաքանչյուր գլխում օգտագործված գրականության ցանկը կարող ես գտնել հետևյալ շտրիխ կոդի միջոցով:

Պայմանական նշաններ

- Գիտելիքի հաղորդում և ներկայացում
- Վերադասավորում և փոխանցում
- Ինքնանդրադարձ և խնդիրների լուծում

I. Գիտելիքի հաղորդում և ներկայացում

(հաղորդել ու նկարագրել)

Առաջադրական բայեր	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
Նշիր	Թվարկիր պահանջվող տեղեկություններն ու եզրույթները՝ ըստ դրանց կարևորության և հերթականության:	***Օրինակներ՝*** *Առաջինը, պետք է նշել ...:* *Հատկապես կարևոր է ...:* *Բացի դրանից, ...:*
Մշակիր	Քաղիր տեղեկություններ նյութից և հաղորդիր դրանք:	***Նյութից դուրս բեր կարևոր կետերը:***
Նկարագրիր	Իրողությունը հաղորդիր այնպես, որ ուրիշները լավ պատկերացնեն այն: Դա կարող ես անել սեփական գիտելիքի հիման վրա կամ նկարների ու գրաֆիկների օգնությամբ:	Կիրառիր պատկերավոր խոսք, ճիշտ եզրույթներ: Խուսափիր ավելորդ բառերից: ***Օրինակներ՝*** *Ես այստեղ տեսնում եմ ...:* *... ից հետո տեղի է ունեցել ...:*
Բնութագրիր	Նշիր իրողության բնորոշ հատկանիշները:	***Օրինակ՝*** *Այս շրջանն աչքի է ընկնում ...:*
Ամփոփիր, վերապատմիր	Հավաքիր նյութի ամենակարևոր տեղեկությունները, դրանք ներկայացրու սեփական կապակցված խոսքով:	Նախ պետք է լավ հասկացած լինես տեքստը կամ իրողությունը: ***Օրինակներ՝*** *Քաղաքապետն իր խոսքում ներկայացնում է վերջին դեպքը:* *Վթարի պատճառը ... :*
Ներկայացրու, ուրվագծիր	Որոշակի կառուցվածքով վերապատմիր իրողությունները, ուրվագծիր համատեքստերը, մեթոդներն ու կախվածությունները: Նշիր դրանց ընդհանուր գծերը:	***Օրինակ՝*** *Ներկայացրու Վերածննդի դարաշրջանում հայտ եկած փոփոխությունները:* *Ուրվագծիր պատերազմի ընթացքը:*

II. Վերադասավորում և փոխանցում

(ինքնուրույն բացատրել, դասակարգել ու կիրառել)

Առաջադրական բայեր	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
ստեղծիր	Ցույց տուր իրողություններն ու դրանց միջև կապերը նկարի կամ ուրվագծի միջոցով:	Կարող ես օգտագործել սլաքներ, աղյուսակներ կամ մտապատկեր:
դասակարգիր	Իրադարձությունները, անձանց գործելաոճն ու թեմայի մյուս տարրերը դասավորիր՝ որոշակի պատմական իրավիճակում (համատեքստում):	**Պատասխանիր հետևյալ հարցերին** **| Ուրիշ էլ ի՞նչ է տեղի ունեցել այդ ժամանակաշրջանում:** **| Ե՞րբ եմ արդեն հանդիպել այդ իրադարձությանը կամ թեմային:**
բացատրիր, պարզաբանիր	Իրողությունը ներկայացրու դրանք դիտարկելով այնպես, որ ակնհայտ լինեն բովանդակային կապերը:	Բարդ իրողությունները մանրամասն բացատրության՝ պարզաբանման կարիք ունեն: Օգտագործիր շաղկապներ՝ որպեսզի, որովհետև, քանի որ:
հիմնավորիր	Փաստարկնե՛ր, տվյալնե՛ր կամ պատճառնե՛ր բեր պնդումը հաստատելու համար:	***Օրինակ՝*** *Այդ հասարակարգը ստրկատիրական, քանի որ ...:*
բնորոշիր	Նկարագրիր իրողությունը՝ առանձնացնելով դրա առանձնահատկությունները:	Գտիր, թե ինչն է աչքի զարնող և հատկանշական: Կիրառիր փաստեր:
վերլուծիր, ուսումնասիրիր	Քննիր նյութը՝ բաժանելով այն մասերի և վերհանելով դրանց փոխադարձ կապերը:	**Տեքստի վերլուծություն.** Ուշադրությունդարձրու գոյականներին, թվականներին, մարդկանց ու վայրերի անուններին: **Նկարի վերլուծություն.** Ուշադրությունդարձրու խորհրդանիշներին, գույներին, ընգծված առարկաներին:
համեմատիր, տարբերակիր	Գտիր երկու նյութերի տարբերություններն ու ընդհանրությունները:	Այդ նպատակով կարող ես կազմել աղյուսակ:
բացահայտիր, առանձնացրու, ցույց տուր	Նյութից վերհանիր որոշակի տեղեկություններ և արդյունքները ներկայացրու սեփական մասնագիտական ձևակերպումների միջոցով:	Ուշադրությունդարձրու հիմնական մտքին, քանի որ հիմնականում կարևոր տեղեկատվությունը ոչ թե հստակ, այլ անուղղակի կերպով է նշվում:
քննիր	Դիտարկիր տեքստը, պատկերը, քարտեզը կամ գրաֆիկը որևէ տեսանկյունից:	Ցանկացած դիտարկման համար անհրաժեշտ են որոշակի տեսանկյուն և դիրքորոշում:

III. Ինքնանդրադարձ և խնդիրների լուծում

(կշռադատել, կարծիք ձևավորել ու միասին խնդիրներ լուծել)

Առաջադրական բայեր	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
գնահատի՛ր	Դատի՛ր որոշակի իրողության մասին՝ հենվելով փաստերի և պայմանների վրա: Կիրառի՛ր քո առարկայական գիտելիքը՝ առանց քո անձնական դիրքորոշումն արտահայտելու:	***Օրինակ՝*** *Գրերի գյուտը ...., քանի որ ...:*
դատի՛ր, դիրքորոշո՛ւմ հայտնիր	Ձևավորի՛ր դիրքորոշում պատմական իրողության մասին՝ հաշվի առնելով քո սեփական գնահատականը:	***Օրինակ՝*** *Ստալինյան շրջանը բավարար վերագնահատված չէ, քանի որ ...:*
քննարկի՛ր	Կազմի՛ր որոշակի դիրքորոշում ինչ-որ պնդման մասին և փորձիր համոզել մյուսներին՝ ձևակերպելով փաստարկներ:	***Օրինակ՝*** *Կարծում եմ, որ արդարությունը կարևոր է, քանի որ ...:*
ստուգի՛ր, վերստուգի՛ր	Ուսումնասիրի՛ր արդյոք ճշմարիտ է պնդումը և ձևակերպի՛ր քո եզրահանգումը՝ նախապես քննելով համապատասխան նյութեր:	Վերստուգելու համար կարող ես գնահատել, դատել և քննարկել:
մեկնաբանի՛ր	Ուսումնասիրի՛ր որևէ տեքստի, պատկերի կամ գրաֆիկի մեջ առկա պնդումներն ու պարզի՛ր դրանց նշանակությունը:	***Օրինակ՝*** *Հեղինակն իր գրքում ցանկանում է ասել, որ ...:* *Այդ մասին են վկայում ...:*
կշռադատի՛ր	Կշեռքի նժարներին դի՛ր և քննի՛ր խնդրի հետ կապված փաստարկները: Դատի՛ր, թե որ նժարի վրա են ավելի ծանրակշիռ փաստարկները:	***Օրինակ՝*** *Դրա օգտին է խոսում ...: Դա հերքվում է ...:* *Այսպիսով, հանգում եմ այն եզրակացության, որ ...:*
նախագծի՛ր	Ստեղծի՛ր ինչ-որ բան, ձևակերպի՛ր ելույթի տեքստ կամ նախաձեռնի՛ր բանավեճ տարբեր անձանց միջև:	Այստեղ հատկապես կարևոր է ստեղծագործականությունը և այն, թե ում համար և ինչ նպատակով ես անում:
մշակի՛ր լուծում	Փնտրի՛ր խնդրի լուծման տարբերակ:	Քո լուծումը պետք է հենված լինի առկա նյութերում եղած փաստերի վրա:

Բովանդակություն

ԳԼՈՒԽ 1 | Մարդ և բնություն **12**

1.1 Մարդը որպես բնության մաս, մարդու պահանջմունքները **14**

1.2 Հասարակության ու բնության փոխհարաբերությունների էվոլյուցիան **18**

1.3 Բնություն և շրջակա միջավայր **25**

ԳԼՈՒԽ 2 | Մարդ և հասարակություն **28**

2.1Հասարակական կյանքի առանձնահատկությունները **30**

2.2 Տպագրության գյուտը և դրա հետևանքները **36**

2.3 Սոցիալականացում և սոցիալական խմբեր **39**

ԳԼՈՒԽ 3 | Մարդ, ճանաչողություն և վարքագիծ **42**

3.1 Սոցիալական ճանաչողություն **44**

3.2 Վերաբերմունք և վարքագիծ **49**

3.3 Հույզերի կառավարում և արդյունավետ հաղորդակցում **52**

ԳԼՈՒԽ 4 | Մարդ և բարոյականություն **56**

4.1 Բարոյականությունը և դրա գործառույթը. բարոյական նորմերի դերը **58**

4.2 Բարոյագիտությունը և բարոյականության հիմնական հասկացությունները **63**

4.3 Էգոիզմ և ալտրուիզմ **70**

ԳԼՈՒԽ 5 | Մարդ և գեղեցկություն **72**

5.1 Ի՞նչ է գեղեցկությունը **74**

5.2 Գեղեցկությունն արվեստում և բնության մեջ **79**

5.3 Բարձր արվեստ և ցածր արվեստ **85**

5.4 Ի՞նչ է ճաշակը. լավ ճաշակ և վատ ճաշակ **88**

ԳԼՈՒԽ 6 | Իրավունքը մեր կյանքում **90**

6.1 Ի՞նչ է իրավունքը **92**

6.2 Իրավական և բարոյական նորմեր **95**

6.3 Մարդու իրավունքների և ազատությունների պատմությունը **97**

ԳԼՈՒԽ 7 | Մարդ և տնտեսություն **102**

7.1 Տնտեսության նշանակությունը մարդու կյանքում և մեր դերը տնտեսության մեջ **104**

7.2 Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները **116**

7.3 Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողությունների դերը ներկայում և ապագայում **125**

ԳԼՈՒԽ 8 | Մարդ և քաղաքականություն **128**

8.1 Մարդը որպես քաղաքական էակ **130**

8.2 Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում **134**

Բացատրական բառարան **140**

ԳԼՈՒԽ 1

Մարդ և բնություն

Ուսումնասիրելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1| ներկայացնել բնության, մարդու և հասարակության միջև կապերը օրինակների միջոցով.

2 | նկարագրել մարդու պահանջմունքները.

3 | հիմնավորել բնության անհրաժեշտությունը մարդու և հասարակության կյանքում.

4 | ներկայացնել մարդ-բնություն հարաբերությունների զարգացման փուլերը և տեխնոլոգիաների դերն այդ հարաբերություններում.

5 | բացատրել բնապահպանական շարժումների առաջացման պատճառները.

6 | առաջարկել քայլեր, որոնք կարող են կանխել բնության և հասարակության ներդաշնակության խախտումը:



Ի՞նչ լուրեր եք հաճախ լսում կամ կարդում մարդու և բնության հարաբերության մասին: Գլոբալ տաքացումն ու կլիմայի փոփոխությունը հաճախ քննարկվող թեմաներից մեկն է: Հավանաբար ձեզ հայտնի են էկոլոգիական աղետների մասին տեղեկությունները: Գործարանների արտանետումներն աղտոտում են օդը, հողը, գետերը, ծովերն ու օվկիանոսները: Վստահաբար տեղյակ եք կենդանիների ու բույսերի անհետացող տեսակների, երկրի երեսից վերացող անտառների մասին: Գիտեք, թե ինչ է «Կարմիր գիրքը», կամ ինչի համար են ստեղծվում արգելոցներ: Ձեզ ծանոթ են «օրգանական գյուղատնտեսություն», «էկոլոգիապես մաքուր սնունդ», «գենետիկորեն ձևափոխված օրգանիզմ» և նմանօրինակ այլ արտահայտություններ: Դրանք հուշում են, որ մեր օրերում խնդիրներ կան մարդու և բնության հարաբերություններում: Գիտեք նաև, որ աշխարհի շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, արդեն բավական ժամանակ գոյություն ունեն «բնապահպանական շարժումներ». ինչպես անունն է հուշում, դրանք զբաղված են բնության պահպանությամբ: Նույն նպատակն ունեն նաև շատ միջազգային նախաձեռնություններ:*

Ի՞նչ սպառնալիքներից են նրանք ձգտում պահպանել բնությունը: Ի՞նչ պատահեց, որ մի ժամանակ բնության ուժերի առաջ անպաշտպան մարդն այսօր պայքարում է հանուն բնության պահպանության: Ի՞նչ դժվարությունների են բախվում բնապահպանական նախաձեռնություններն ամբողջ աշխարհում:

1.1 Մարդը որպես բնության մաս, մարդու պահանջմունքները

Որպես կենդանի օրգանիզմ՝ մարդը բնության մի մասնիկն է: Ուրիշ կենդանիների նման մարդու մարմինն առաջացել է և զարգացել բնության հետ երկարատև փոխազդեցության պայմաններում: Իրենց գոյությամբ մարդիկ հիմնավորապես կախված են բնությունից և կարող են ապրել միայն բնության մեջ: Բայց մարդն ունի երկակի բնույթ: Ծնվելով որպես կենսաբանական էակ՝ նա հասակ է առնում և ձևավորվում հասարակական միջավայրում: Այսինքն՝ մարդը միաժամանակ կենսաբանական և հասարակական էակ է:

Մարդիկ, մարդկանց հանրույթները* հարմարվում և ապրում են որոշակի բնակլիմայական պայմաններում՝ իրենց կարիքների համար օգտագործելով այն պաշարները, որ գտնում են բնության մեջ: Մյուս կողմից, դարձյալ ելնելով իրենց կարիքներից, նրանք շարունակ վերափոխում են բնական աշխարհը. հատում են անտառը, մշակում հողը, կառուցում ճանապարհներ, ջրանցքներ, բնակավայրեր, շահագործում* երկրի ընդերքը: Մեր օրերում ավելի ու ավելի մեծ հրատապություն են ստանում հետևյալ հարցերը՝ մարդու այս գործունեությունն ինչ-որ սահման ունի՞, թե՞ ոչ, ինչքա՞ն և ի՞նչ ձևերով կարող է շարունակվել բնական աշխարհի շահագործումը: Մարդու և բնության փոխհարաբերությունների

ժամանակակից պատմությունը վկայում է հասարակությունների* արագ զարգացման, կյանքի պայմանների բարելավման մեծ հնարավորությունների մասին: Միաժամանակ մենք արդեն շատ բան գիտենք այդ ընթացքի աղետալի հետևանքների, բնությանը հասցված անդառնալի կորուստների մասին: Թվում է, թե այսօր դեռ դժվար է գտնել հասարակությունների և բնության փոխհարաբերության այնպիսի իրական եղանակ, որը թույլ կտա բավարարել մարդկանց կարիքները՝ առանց բնության վրա կործանարար ազդեցություններ թողնելու:

Հասկանալի է ուրեմն, որ առանձին մարդու և ընդհանուր առմամբ հասարակության կենսագործունեության համար անհրաժեշտ են որոշակի պայմաններ: Գոյատևելու և զարգանալու համար մարդիկ պետք է բավարարեն իրենց տարատեսակ պահանջմունքները կամ կարիքները:

S1

Բնության մասին

Բնությունն այն նախաստեղծ բնական աշխարհն է, որ չի կրել մարդկային գործունեության ազդեցությունները: Հենց դա նկատի ունենք, երբ ասում ենք «խոպան հող», «կուսական անտառ» և այլն: Այն ունի իր օրենքներն ու ուժերը, որ ստեղծում են բնական երևույթները: «Բնություն» բառը կազմված է «բուն» արմատից, որն ունի *ծագում, սկիզբ, նախապատճառ* իմաստներ: Իհարկե, այսօր դժվար է գտնել մարդու ազդեցությունից ազատ վայրի կամ կուսական բնություն: Ուստի, խոսքը համեմատաբար լավ պահպանված, կոպիտ միջամտության չենթարկված բնության մասին է:

Ն1 Մարդու պահանջմունքները

Մարդու պահանջմունքներն ընդունված է բաժանել երեք խմբի:

1. Մարդն ունի **բնական կամ կենսաբանական պահանջմունքներ**, որոնց թվում են օդի, ջրի, սննդի, կացարանի, հագուստի, քնի ու հանգստի պահանջմունքները: Սրանց բավարարումը մարդու և հասարակության առաջնահերթ խնդիրներից են: Չէ՞ որ հաճախ նույնիսկ մաքուր օդն ու ջուրը մատչելի չեն մարդկանց:

2. Երկրորդ խմբի մեջ մտնում են **սոցիալական* (հասարակական) պահանջմունքները** կամ **կարիքները**: Աշխատանքի մեջ և առօրյայում մարդիկ կարիք ունեն տարատեսակ սոցիալական հարաբերությունների, շփման և հաղորդակցության: Կյանքի ընթացքում նրանք դառնում են տարբեր խմբերի անդամ և մասնակցում հասարակական կյանքին: Այդպիսի գործունեության

մեջ ներգրավվածությունը թույլ է տալիս բավարարել նաև այնպիսի կարևոր պահանջմունք, ինչպիսին պատկանելության և ապահովության զգացումն է:

3. Վերջապես մարդն ունի **մշակութային կամ հոգևոր պահանջմունքներ**: Հասարակության մեջ շրջանառվող հին ու նոր մշակույթին առնչվելը նաև զորացնում է մարդու պատկանելության զգացումը: Մարդը կարիք ունի մասնակցելու հասարակության մշակութային կյանքին թե՛ որպես սպառող*, թե՛ որպես ստեղծագործող: Նրա հոգևոր պահանջմունքների մեջ հատուկ տեղ է գրավում շրջակա աշխարհը, հասարակական կյանքը և ինքն իրեն ճանաչելու պահանջմունքը: Այս վերջինը թելադրված է նաև գոյատևելու, կյանքի պայմանները բարելավելու ձգտմամբ:

Տարբեր ժամանակաշրջաններում և տարբեր հասարակություններում մարդու պահանջմունքներն ու կարիքները փոխվում են: Փոխվում են նաև դրանք բավարարելու հնարավորություններն ու եղանակները: Այդ տարբերությունները հաճախ դրսևորվում են որպես անհավասարություններ թե՛ տարբեր հասարակությունների, թե՛ նույն հասարակության մեջ առկա տարբեր սոցիալական շերտերի միջև:

Առաջադրանք

1. **Նշիր**, թե ինչ դժվարություններ է ստեղծում մոլորակի բնակչության աճը մարդկանց կենսաբանական պահանջմունքների բավարարման համար: **Ներկայացրու** այն խոչընդոտները, որ մարդու մեկ պահանջմունքի բավարարման ժամանակակից ձևերը հարուցում են ուրիշ պահանջմունքների բավարարման համար: Օրինակ՝ երբ, հատկապես մեծ քաղաքներում, ավտոմեքենաների արտանետած գազերը կեղտոտում են օդը և անբարենպաստ պայմաններ ստեղծում բնակիչների առողջության համար: Բե՛ր ուրիշ օրինակներ:

2. **Նկարագրիր** քո հիմնական պահանջմունքները, **պարզաբանիր**, թե ովքեր և ինչ պայմաններ են նպաստում դրանց բավարարմանը:

3. **Ն1**-ի հիման վրա **դասակարգիր**, թե ինչ սոցիալական և մշակութային պահանջմունքներ և կարիքներ են բավարարում դպրոցահասակ պատանիները տանը, դպրոցում, բակում կամ երբ որպես հանդիսատես մասնակցում են մարզական խաղի, համերգի, թատերական ներկայացման: Ընտրի՛ր հետևյալ հնարավոր պատասխաններից և ավելացրու նոր պատասխաններ.
   - սոցիալական կապերի ստեղծում.
   - մշակութային արժեքների ճանաչում.
   - շրջակա աշխարհի ճանաչում.
   - մշակութային պահանջմունքների բավարարում.
   - պատկանելության զգացման ամրապնդում:

4. **Դիրքորոշում հայտնիր** այն մասին, թե ինչի համար են կենդանաբանական և բուսաբանական այգիները. բնության ուսումնասիրության և ճանաչմա՞ն, բնության հետ մարդու շփման պահանջմունքի բավարարմա՞ն, թե՞ այլ բանի: **Կշռադատիր**, թե կենդանաբանական այգիներն ավելի շուտ վկայում են բնությունից մարդու հեռացմա՞ն, թե՞ բնությանը մոտ լինելու մարդու ցանկության մասին:

5. Դասարանում **քննարկե՛ք**, թե ինչ պատճառներով են ոմանք դեմ կրկեսում, դելֆինարիումում և նման այլ տեղերում հանդիսատեսին զվարճացնելու նպատակով կենդանիների օգտագործմանը:

1.2 Հասարակության ու բնության փոխհարաբերությունների էվոլյուցիան*

Պատմության ընթացքում մարդու և բնության փոխհարաբերությունները շատ են փոխվել: Այդ փոփոխություններն ավելի լավ հասկանալու համար ճիշտ կլինի նախ քննարկել այն հարցը, թե ինչ տեսակի հասարակություններ են գոյություն ունեցել հին ժամանակներից մինչև մեր օրերը:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Բնությունից տարբեր գոյություն ունի մարդկանց աշխարհը, որ անվանում ենք հասարակություն: Հասարակությունն իրար հետ ապրող և որոշակի ձևով կազմակերպված մարդկանց հանրություն է, որն ունի ընդհանուր կանոններ ու մշակույթ:

Մենք հատուկ ուշադրություն կդարձնենք այն հիմնական գործիքներին, որ ունեցել է տվյալ հասարակությունը: Նախ՝ որովհետև դրանք բնութագրում են այդ հասարակության տեխնոլոգիական զարգացման աստիճանը: Երկրորդ՝ այդ գործիքները շատ բան են ասում մարդու և բնության փոխհարաբերությունների մասին: Չէ՞ որ հենց դրանք են մարդու կողմից բնության ուժերի օգտագործման, բնական պաշարների շահագործման միջոցները:

Պատմության ընթացքում մարդիկ ապրել են տարբեր հասարակություններում: Կարելի է առանձնացնել երեք հիմնական տեսակ՝ **մինչարդյունաբերական, արդյունաբերական և հետարդյունաբերական հասարակություններ**: Նույն ձևով կանվանենք նաև այս հասարակությունների գոյության ժամանակաշրջանները՝ **մինչարդյունաբերական դարաշրջան, արդյունաբերական դարաշրջան, հետարդյունաբերական դարաշրջան**: Ինչպես տեսնում ենք, հասարակությունների և դարաշրջանների այս դասակարգման կենտրոնում «արդյունաբերություն»* բառն է: Դա հասկանալի է, քանի որ ժամանակակից հասարակությունների առաջացման սկիզբը դրվել է մոտ 300 տարի առաջ: Այդ ժամանակ եվրոպական երկրներում սկսվեց տնտեսական և հասարական մեծ փոփոխություն, որը ստացավ **արդյունաբերական հեղափոխություն** անունը: Այդ հեղափոխության արդյունքները հետագայում տարածվեցին ամբողջ աշխարհով մեկ:

Բոլոր տեսակի հասարակությունները և դրանց գոյության ժամանակաշրջանները կարելի է նկարագրել դրանցում օգտագործած հիմնական գործիքների կամ տեխնոլոգիաների օգնությամբ:

ՏԵԽՆՈԼՈԳԻԱ
Հասարակության մեջ տարբեր նպատակների համար օգտագործվող գործիքները, սարքավորումները և մեխանիզմները անվանում ենք տեխնոլոգիաներ: Դրանք վաղուց արդեն հին ժամանակների պարզ գործիքները չեն և պատրաստվում են գիտական հետազոտությունների միջոցով ստացված գիտելիքի հիման վրա:

Հենց գործիքներից ու տեխնոլոգիաներից են ծագել «քարի դար», «բրոնզի դար» և նման անվանումները: Սա բնավ չի նշանակում, թե տեխնոլոգիաներն են որոշում հասարակության բնույթը, կամ որ դրանք ավելի կարևոր են, քան մարդիկ: Համաձայնենք, որ մարդն անբաժան է իր գործիքներից, որ դրանք անհրաժեշտ են նրա գոյության համար: Ուրեմն, ցանկացած հասարակություն ունի իր տեխնոլոգիաները, և անկարելի է դրանք առանձնացնել իրարից: Կարևոր է հիշել, որ մարդիկ են ստեղծում, օգտագործում և կատարելագործում տեխնոլոգիաները կամ հրաժարվում դրանք օգտագործելուց: Կարևոր է նաև այն, որ մարդիկ են տիրապետում տեխնոլոգիաների օգտագործման համար անհրաժեշտ գիտելիքներին ու հմտություններին, առանց որոնց տեխնոլոգիաներից օգուտ չկա:

Բազմաթիվ տեխնոլոգիաների ստեղծման համար շարժիչ ուժ է եղել բնությունը վերափոխելու, բնական պաշարները շահագործելու, բնության նկատմամբ վերահսկողությունը մեծացնելու մարդկանց ձգտումը: Այսպիսի տեխնոլոգիական զարգացումները հանգեցրել են բնության ու հասարակության համար ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքների:

Հասարակության զարգացման փուլերը և տեսակները

Մինչարդյունաբերական դարաշրջանը տևել է հազարամյակներ, իսկ այդ ժամանակ տեղի ունեցած զարգացումները տարբեր մայրցամաքներում ու տարածաշրջաններում կատարվել են ոչ միաժամանակ: Առավել վաղ շրջանում մարդկանց հիմնական զբաղմունքը և գոյության պահպանման միջոցը եղել են հավաքչությունը, որսորդությունն ու ձկնորսությունը: Նրանք հավաքում էին պտուղներ, արմատներ, բույսեր, մեղր, կենդանիների ձվեր:

Հաջորդ փուլում տեղի է ունենում մարդկանց հիմնական զբաղմունքի աստիճանական փոփոխություն՝ անցում հավաքչությունից ու որսորդությունից երկրագործության ու անասնապահության: Սա նշանակում էր բնության հետ ավելի ակտիվ փոխհարաբերություն: Բնության ուժերից մարդու կախվածությունը սկսում էր թուլանալ: Աշխատանքի նոր տեսակները պահանջում էին նոր և ավելի կատարյալ գործիքներ, ուստի միաժամանակ զարգանում էին արհեստները:

Ընդարձակվում էին (հաճախ՝ անտառների հաշվին) երկրագործության համար պիտանի հողատարածքները: Ստեղծվում էին մշակաբույսեր, ինչպես նաև հողը մշակելու, բերքը հավաքելու ու վերամշակելու համար անհրաժեշտ գործիքներ: Մարդկանց հայտնի էին նաև հողը ոռոգելու և պարարտացնելու նախնական եղանակներ: Նրանք ունեին կենդանիների ոսկորից, փայտի ու քարի տարբեր տեսակներից, իսկ ավելի ուշ նաև մետաղից պատրաստված գործիքներ՝ բրիչներ, շեղբեր, դանակներ, ճողեր, կացիններ, գուրզեր, նետուաղեղ և այլն:

Տնտեսության մեջ անասուններն օգտագործվում էին որպես քարշող ուժ և տեղափոխման միջոց: Կաթից ու մսից բացի, նրանք տալիս էին բուրդ ու կաշի, որ օգտագործվում էին ինչպես հագուստ, այնպես էլ տարբեր պարագաներ պատրաստելու համար: Սա կաշեգործության ու մանածագործության զարգացման վաղ շրջանն էր:

Այս հասարակությունների մասին բավականաչափ բան գիտենք: Նախ՝ վերջին մի քանի հարյուր տարվա ընթացքում գիտնականները հետազոտել են Աֆրիկայում, Լատինական Ամերիկայում և այլ վայրերում գտնվող այնպիսի ցեղերի կյանքը, որոնք դեռ շարունակում էին իրենց ապրուստը հայթայթել նույն եղանակով՝ հավաքչությամբ ու որսորդությամբ: Մեր գիտելիքի մյուս աղբյուրը Երկիր մոլորակի տարբեր վայրերում, այդ թվում՝ Հայաստանի տարածքում, կատարված հնագիտական պեղումների արդյունքներն են:

Մարդկության հետագա պատմությունը վկայում է տեխնոլոգիաների շարունակական զարգացման մասին: Միջին դարերում կամ ֆեոդալական հասարակության ձևավորման շրջանում մեծանում էր մարդու կողմից բնության շահագործման ու վերահսկողության աստիճանը: Կարևոր նորարարություններ կատարվեցին երկրագործության մեջ: Օրինակ՝ ստեղծվեցին

S1

«Նաիրիտ», արհեստական կաուչուկ արտադրող գործարան Երևանում, հիմնվել է Խորհրդային միությունում 1940 թվականին: Անկախության տարիների արտադրության ծավալները կրճատվել էին, իսկ 2008 թ. «Նաիրիտը» դադարեց աշխատանքը ֆինանսական ճգնաժամի պատճառով:

Խորհրդային Հայաստանի դեպքը

Հայաստանում ժամանակակից արդյունաբերության ու քաղաքների աճը հիմնականում կատարվել է խորհրդային շրջանում և հատկապես քսաներորդ դարի երկրորդ կեսին: Միաժամանակ զարգացել են գիտության համապատասխան ուղղությունները: Մինչդեռ հետխորհրդային շրջանում Հայաստանը, ընդհակառակը, կորցրել է այդ արդյունաբերության շոշափելի մասը:

գութանի կատարելագործված տեսակներ: Մեծ առաջադիմություն կատարվեց նաև տեքստիլ արդյունաբերության մեջ: Ստեղծվեցին շատ ավելի մեծ արտադրողականություն* ունեցող մանող ու հյուսող մեքենաներ: Կառուցվեցին ավելի կատարյալ ջրաղացներ և հողմաղացներ: Այս ընթացքում գիտության ու տեխնոլոգիաների զարգացումն աստիճանաբար կենտրոնանում է Եվրոպայում, որտեղ էլ հետագայում սկիզբ է առնում արդյունաբերական դարաշրջանը:

Այսպիսով, հազարամյակներ տևած այս ժամանակաշրջանում առաջ եկան ավելի ու ավելի կատարյալ գործիքներ, բնության պաշարների շահագործման ավելի արդյունավետ ձևեր: Բնության օրենքների ճանաչումը թույլ տվեց մարդկանց ոչ միայն զգալիորեն թուլացնելու իրենց կախվածությունը բնությունից, այլև օգտագործելու բնության ուժերը սեփական նպատակների համար: Լայն տարածում ստացավ ջրի և քամու ուժի օգտագործումը բազմատեսակ աշխատանքներ կատարելու համար:

Արդյունաբերական հասարակությունը սկսեց ձևավորվել Եվրոպայում 18-րդ դարում (մոտ 300 տարի առաջ): Կատարվեցին մեծ թվով տեխնոլոգիական գյուտեր, որոնց արդյունքում տեղի ունեցավ «արդյունաբերական հեղափոխությունը»: Կարևորագույններից առաջինը թերևս շոգեշարժիչն էր, այսինքն՝ շոգու, գոլորշու ուժով աշխատող շարժիչը: Սա մեքենայական ուժի նոր աղբյուր էր, որը թույլ տվեց էապես բարձրացնել արտադրության արդյունավետությունը տարբեր ոլորտներում՝ մանածագործությունից մինչև գրատպություն: Սրան հաջորդեց էլեկտրականության գյուտը և դրա կիրառությունը տնտեսության ու սոցիալական կյանքի տարբեր ոլորտներում:

Շոգեքարշ

Այս ժամանակաշրջանում գյուղատնտեսական արտադրության փոխարեն տիրապետող է դառնում արդյունաբերական արտադրությունը: Որպես արդյունաբերական կենտրոններ՝ առաջ են գալիս մեծ թվով քաղաքներ, ուստի անշեղորեն աճում է քաղաքային բնակչության թիվը: Այս զարգացումներն աստիճանաբար տարածվեցին նաև Եվրոպայից դուրս:

Արդյունաբերական դարաշրջանն աչքի ընկավ Երկիր մոլորակի բնական պաշարների շահագործման և բնության աղտոտման ահռելի չափերով ու նորանոր ձևերով, և միայն քսաներորդ դարի երկրորդ կեսին ակնհայտ դարձավ դրա աղետալի հետևանքների ամբողջ ծավալը:

Գազային էլեկտրակայան «Հեմվեգ 9» (Hemweg 9) Նիդերլանդների մայրաքաղաք Ամստերդամում, 2012 թ.: Աշխատում է նորացված համակարգով, որը քչացնում է բնությանը հասցված վնասը և ավելացնում արդյունավետությունը:

Հետարդյունաբերական հասարակության մասին սկսեցին խոսել Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո՝ նկատի ունենալով առաջին հերթին տնտեսապես զարգացած երկրները՝ ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա, Ճապոնիա: Այն ուրիշ անուններ էլ ունի՝ **տեղեկատվական հասարակություն, մեդիայի հասարակություն, ցանցային հասարակություն** և այլն: Այս անվանումները հուշում են կարևոր փոփոխության մասին. եթե արդյունաբերական հասարակությունները հիմնված էին նյութական ապրանքների արտադրության վրա, ապա հետարդյունաբերական հասարակությունները՝ տեղեկատվության ու ծառայությունների: Հիմնական տեխնոլոգիական նորարարությունների թվում

են համակարգիչն ու համացանցը: Սա նոր տեսակի մասնագիտությունների դարաշրջան է, երբ տնտեսության հիմնական շարժիչ ուժն այլևս նյութական ապրանքները չեն, այլ գիտելիքը: Այս միտումը տարբեր չափերով վերաբերում է բոլոր երկրներին: Այսուհանդերձ, արդյունաբերական արտադրության շատ տեսակներ շարունակում են գործել ամբողջ աշխարհում: Դրանց որոշ տեսակներ վնաս են հասցնում շրջակա միջավայրին:

Ն2 Տարբեր դարաշրջանների տեխնոլոգիաներ



Մինչարդյունաբերական հասարակություն

Արդյունաբերական հասարակություն

Հետարդյունաբերական հասարակություն

Ն3 Կացին ախպեր

Առաջադրանք

1. Այցելե՛ք Հայաստանի պատմության թանգարան, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան և այլ թանգարաններ, հավաքե՛ք ու **ներկայացրե՛ք** տեղեկություններ ու պատկերներ տարբեր ժամանակաշրջանների հասարակություններին վերաբերող հնագիտական նյութերի մասին: Հատուկ ուշադրությո՛ւն դարձրեք երկրագործությանը, մանածագործությանը և վերը նշված ուրիշ ոլորտների պատկանող գործիքների զարգացման պատմությանը:

2. **Ն2** -ի օգնությամբ **բացատրի՛ր** տարբեր դարաշրջանների աշխատանքային գործիքների տարբերությունը, **բնորոշի՛ր** մարդու և աշխատանքային գործիքի հարաբերությունների փոփոխությունները:

3. Լավ գործիքն արդյունավետ է դարձնում աշխատանքը, եթե տիրապետում ես օգտագործելու համար անհրաժեշտ հմտություններին: Հակառակ դեպքում այն կարող է ավելի դժվարացնել աշխատանքը կամ նույնիսկ վատ հետևանքների հանգեցնել: Կարդա Հ. Թումանյանի «Կացին ախպեր» հեքիաթն ու **Ն3** -ի օգնությամբ **մեկնաբանի՛ր** այնտեղ նկարագրված իրադարձություններն այս տեսանկյունից:

4. **Ուսումնասիրի՛ր**, թե ինչ գործարաններ են ստեղծվել Խորհրդային Հայաստանում, արդյունաբերության ինչ ճյուղեր են պահպանվել հետխորհրդային Հայաստանում: Եղած նյութերի հիման վրա **գնահատի՛ր** բնության վրա դրանց ազդեցությունը:

5. Գտե՛ք և դասարանում **քննարկե՛ք** Խորհրդային Հայաստանում եղած էկոլոգիական խնդիրները, դրանք **համեմատե՛ք** ժամանակակից Հայաստանի էկոլոգիական խնդիրների հետ:

1.3 Բնություն և շրջակա միջավայր

Բնության դերը չի սահմանափակվում մարդու կենսաբանական պահանջ-մունքների բավարարմամբ: Բնությունը նաև չի սահմանափակվում ինչ-որ ժողովրդի կամ երկրի համար հատուկ խորհրդանշական իմաստ ստացած վայրերով, ինչպես Արարատ լեռը կամ Սևանա լիճը հայ ժողովրդի համար:

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐ (ՇՐՋԱՎԱՅՐ)

Այն ամենն է, ինչ շրջապատում և ներառում է կենդանի արարածներին, նրանց վրա ազդող բոլոր շրջակա պայմաններն ու ուժերը: Այն նշանակում է և՛ բնական, և՛ սոցիալական տարածություն:

Շրջակա միջավայրը կամ բնական լանդշաֆտը՝ գետեր, լեռներ, կիրճեր և այլն, նաև վճռական գործոն է եղել պետությունների ձևավորման համար: Հնուց ի վեր բնակավայրեր կառուցելու համար ընտրվել են գետերի հովիտները, հաշվի են առնվել բնական պաշարները շահագործելու, տարածքները պաշտպանելու, վերահսկելու և կառավարելու հնարավորությունները:

Մյուս կողմից՝ բնությանը վերաբերող մի շարք հարցեր արդեն վաղուց քաղաքական բովանդակություն են ձեռք բերել: Օրինակ՝ վերջին տասնամ-յակների ընթացքում շատ երկրների համար վճռական նշանակություն է ստացել էլեկտրաէներգիայի արտադրության եղանակների հարցը: Ինչի՞ց ստանալ էլեկտրականություն՝ ածուխից, փայտից, գազից, նավթից, թե ուրիշ աղբյուրներից: Կառուցե՞լ ատոմային էլեկտրակայաններ, թե՞ կենտ-րոնանալ արևային էներգիայի և քամու ուժի օգտագործման նախագծերի իրականացման վրա: Բազմաթիվ պետություններում կան էներգիայի որոշակի աղբյուրների օգտագործման վրա հաստատված սահմանափակումներ: Դա առաջին հերթին վերաբերում է էներգիայի այնպիսի աղբյուրների, որոնց վերականգնումը պահանջում է շատ երկար ժամանակ՝ ածուխ, նավթ: Այդ նպատակով իրականացվում են հատուկ ծրագրեր: Աստիճանաբար փորձում են անցում կատարել էներգիայի արտադրության այնպիսի եղանակների, որոնց գործածումն ավելի անվնաս է շրջակա միջավայրի համար:

Ազգային պարկերի և արգելոցների ստեղծումը, կենդանիների ու ձկների որսի նկատմամբ հաստատվող սահմանափակումները, «Կարմիր գրքի» մեջ կենդանիների ու բույսերի ներառումը և այլն, խոսում են բնության նկատմամբ հասարակությունների աճող ուշադրության մասին: Բայց բնության նկատմամբ այս վերաբերմունքը միանգամից չի առաջացել, այն երկարատև զարգացման արդյունք է և այսօր էլ դեռ բախվում է լուրջ խոչընդոտների: Այս առումով կարևորագույն փաստաթուղթ է Ռիո դե Ժանեյրոյի շրջակա միջավայրի և զարգացման վերաբերյալ հռչակագիրը (1992), որը կարճ կոչվում է Ռիոյի

հռչակագիր, և որտեղ շարադրված են էկոլոգիական իրավունքի հիմնական սկզբունքները: Հռչակագիրը ստորագրել է ավելի քան 175 երկիր: Այն բաղկացած է 27 սկզբունքից, որոնցով պետք է առաջնորդվեն Հռչակագրի պայմաններն ընդունած երկրները:

Ն4 Բնապահպանության և վերականգնվող էներգիայի մասին

Հայաստանի Հանրապետությունը Ռիոյի հռչակագիրը ստորագրած երկրներից մեկն է: Ընդունվել են նաև բնության պահպանությանն ուղղված մի շարք օրենքներ ու ծրագրեր: Այս հարցում Հայաստանը սերտորեն գործակցում է միջազգային կազմակերպությունների հետ: Բնապահպանական թեմաներով քննարկումներն ու նախաձեռնությունները մեր երկրում սկիզբ են առել դեռևս խորհրդային տարիներին՝ 1980-ական թվականներին: Առաջին մտահոգություններից մեկը, որի մասին այն ժամանակ բարձրաձայնեցին բնապահպանները, Երևանի օդի աղտոտվածությունն էր: Այդ խնդիրն այսօր էլ չի կորցրել իր հրատապությունը: Բնապահպանական շարժումները նոր թափ և բովանդակություն ստացան Հայաստանի անկախացումից հետո:

Բողոքի ցույց Չիչխան գետի՝ Թռչկանի ջրվեժից վերև ընկած հատվածում ՀԷԿ կառուցելու նախագծի դեմ, Երևան, 2011 թ.

Հայաստանում լուրջ հույսեր են կապում վերականգնվող էներգիայի աղբյուրների հետ: Հասկանալի է, որ այս ընտրությունն ունի նաև կարևոր բնապահպանական նշանակություն: Խոսքն

առաջին հերթին ջրի, արևային ու հողմային էներգիայի մասին է: Բայց եթե հիդրոէլեկտրակայանները Հայաստանում ավելի քան հարյուր տարվա պատմություն ունեն, նոր են արևային ու հողմային էներգիայի օգտագործման ծրագրերը: Հաշվի առնելով մեր երկրի բնակլիմայական պայմանները՝ կարելի է սպասել, որ այս նոր զարգացումները լավ հեռանկար կունենան: Բայց այս խոստումնալից հեռանկարը կախված է ոչ միայն պետության վարած քաղաքականությունից ու մասնավոր կազմակերպությունների գործունեությունից, այլև ամբողջ հասարակության պատշաճ վերաբերմունքից:

Առաջադրանք

1. Գտի՛ր տեղեկություններ բնապահպանական շարժումների մասին Հայաստանում խորհրդային շրջանում ու անկախության տարիներին և **վերապատմի՛ր**: **Պարզաբանի՛ր**, թե որոնք են այդ շարժումների առաջ քաշած հիմնական խնդիրները:
2. Հավաքի՛ր տեղեկություններ Հայաստանում բնության հատուկ պահպանվող տարածքների՝ ազգային պարկերի, արգելոցների և արգելավայրերի, ինչպես նաև «Կարմիր գրքի» մեջ մտած կենդանիների ու բույսերի տեսակների մասին: **Ցո՛ւյց տուր** բնությանը սպառնացող վտանգները և դրանց պատճառները:
3. Ձեր համայնքում **առանձնացրե՛ք** մեկ բնապահպանական խնդիր (մթնոլորտի աղտոտում, անտառների հատում, քաղաքային կանաչ տարածքների կրճատում, գետերի աղտոտում և այլն) և համատեղ ուժերով դասարանում **հիմնավորե՛ք** մարդու ազդեցությունն այդ խնդրի ծագման վրա:
4. Ընտրե՛ք բնության պահպանության թեմայով մի քանի կարևոր կարգախոս, գտե՛ք կամ նկարե՛ք համապատասխան պատկերներ և դրանք համադրելով՝ **ստեղծե՛ք** ցուցապաստառներ: Աշխատանքի ընթացքում օգտվե՛ք **Ն4**-ի լուսանկարից:
5. Գտե՛ք տեղեկություններ և դասարանում **Ն4**-ի օգնությամբ **քննարկե՛ք** վերականգնվող էներգիայի կամ կանաչ էներգիայի գաղափարը, գնահատե՛ք այդ ուղղությամբ Հայաստանում կատարվող աշխատանքների ներկա վիճակը:
6. Դասարանում **քննարկե՛ք** «Մարդու դրական և բացասական ազդեցությունը բնության վրա» թեման: Ջրույցների արդյունքների հիման վրա պատրաստե՛ք հակիրճ հաղորդում:

ԳԼՈՒԽ 2

Մարդ և հասարակություն

Ուսումնասիրելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1| ներկայացնել մարդու և հասարակության փոխկապվածությունը.

2 | ներկայացնել ժամանակակից հասարակությունների առաջացման պատմությունը.

3 | տարբերակել հասարակության փոքր և մեծ, առաջնային և երկրորդային խմբերը.

4 | բացահայտել հասարակական խմբերի ու շերտերի միջև առկա տարբերություններն ու ընդհանրությունները.

5 | գնահատել գրագիտության դերը ժամանակակից հասարակություններում.

6 | ներկայացնել և վերլուծել հասարակության սոցիալական կազմը, սոցիալական անհավասարություններն ու դրանց հարուցած խնդիրները:

Հանրային ժողով քաղաքային տրանսպորտի ուղեվարձի բարձրացման դեմ բողոքի ցույցերի ժամանակ, Երևան, Գլխավոր պողոտայի Մաշտոցի պուրակի հատված, 2013 թ., լուսանկարը՝ Թեհմինե Ենոքյանի

Հասարակությունը բաղկացած է մարդկանցից, իսկ մարդը հասարակական էակ է: Բայց հասարակությունն առանձին մարդկանց բազմություն չէ: Մարդիկ ձևավորվում են այլ մարդկանց հետ շփման, սոցիալական ազդեցությունների ու փոխհարաբերությունների արդյունքում: Կամա թե ակամա նրանք հայտնվում են տարբեր տեսակի ու չափի խմբերում: Բացի այդ, ժամանակակից հասարակությունները կազմված են սոցիալական շերտերից: Այդ շերտերը իրարից տարբերվում են բարեկեցության մակարդակով, հասարակության մեջ խաղացած դերով և այլ հատկանիշներով: Այստեղ կքննարկենք հասարակական շերտերին ու խմբերին վերաբերող մի շարք հարցեր: Ի՞նչ է հասարակությունը: Ինչո՞ւ են մարդիկ համագործակցում փոքր և մեծ խմբերում: Ինչպե՞ս են քաղաքները դառնում ժամանակակից հասարակությունների ձևավորման կենտրոններ, ինչպե՞ս է առաջ գալիս սոցիալական շերտավորումը: Մերօրյա հասարակություններում ի՞նչ սկզբունքային խնդիրներ է հարուցում շերտավորումը:

2.1 Հասարակական կյանքի առանձնահատկությունները

Նախորդ գլխում նկարագրեցինք, թե ինչ է հասարակությունը, հասարակության ինչ հիմնական տեսակներ են եղել պատմության ընթացքում: Այս գլխում կլրացնենք ասվածն ուրիշ տեղեկություններով: Նախ՝ ինչո՞ւ ենք ասում «հասարակություն»: Այս անվանումը կարող է շփոթեցնել ձեզ, եթե առաջնորդվեք «հասարակ» բառի առավել ծանոթ իմաստներով՝ պարզ, աննշան, սովորական, ցածրորակ և այլն: Բայց այն ունի նաև ուրիշ իմաստներ, այդ թվում՝ ընդհանուր, որից էլ կազմվում է «հասարակություն» բառի մեզ անհրաժեշտ նշանակությունը՝ ընդհանրություն: Այդպիսով հասարակությունը բնորոշվում է նաև ընդհանուր մշակույթով, բայց ժամանակակից հասարակությունները հաճախ անվանում են բազմամշակութային: Մենք հնարավորություն չունենք այստեղ քննարկելու «բազմամշակութային հասարակություն» արտահայտության նշանակությունը, բայց դու կարող ես դա անել ինքնուրույն, երբ հասնենք առաջադրանքների բաժնին:

Մենք բավականին բան իմացանք հասարակությունների պատմական զարգացման փուլերի ու տեսակների մասին: Հատուկ ուշադրություն դարձրինք նրանց գործիքների, այդ գործիքների զարգացման ու կատարելագործման ընթացքին: Հասկացանք նաև, թե դարաշրջանից դարաշրջան ինչպես է փոխվել հասարակության ու բնության փոխհարաբերությունը: Հիմա կփորձենք հասկանալ, թե ինչպես էր փոխվում հասարակությունների չափն ու սոցիալական կազմը, ինչ շերտեր ու խմբեր էին առաջանում հասարակության մեջ:

Հասարակությունը և հասարակական խմբերի ձևավորումը

Հասարակության առաջին տեսակը, որի մասին խոսվեց նախորդ գլխում, հավաքչությամբ զբաղվողների ու որսորդների ցեղերն էին: Այդպիսի ցեղը կարող էր բաղկացած լինել մի քանի տասնյակ մարդուց: Նրանք քոչվոր էին, այսինքն՝ չունեին բնակության մշտական վայր: Ապրում էին բնական պայմաններում, կարելի է ասել՝ բնությունից անբաժան, և վայրից վայր տեղափոխվում էին այն ժամանակ, երբ սպառվում էին տվյալ վայրի պաշարները, կամ փոխվում էր տարվա բարենպաստ եղանակը: Նրանք կարող էին, այն ժամանակի չափանիշներով, բավականին բարեկեցիկ կյանք վարել, բայց չէին կարող ունենալ շոշափելի սեփականություն: Ուստի չկային էական անհավասարություններ ցեղի անդամների միջև:

Հասարակությունների զարգացման հետագա ընթացքում գրեթե անհետանում են այդ ժամանակների կյանքի բոլոր կարևոր հատկությունները՝ փոքրաթիվ ու չշերտավորված խումբ, քոչվոր ապրելակերպ, կյանքի բնական պայմաններ և խիստ կախվածություն բնության ուժերից ու կլիմայական պայմաններից, սեփականության բացակայություն ու մարդկանց հավասարություն:

Երկրագործությունն արդեն ենթադրում է նստակեցություն և մշտական կացարանների կառուցում, ունեցվածք ձեռք բերելու ու պահպանելու հնարավորություն: Աստիճանաբար ձևավորվում են մեծ բնակավայրեր ու քաղաքներ, որոնք դառնում են տնտեսական կյանքի կենտրոններ՝ մեծ դեր խաղալով հասարակությունների և առհասարակ մարդկության զարգացման գործում: Քաղաքներում նպաստավոր պայմաններ են ստեղծվում առևտրի, արհեստների ու տեխնոլոգիական նորարարության, գիտության ու մշակույթի զարգացման ու տարածման համար:

Ի հայտ են գալիս գործունեության նոր ձևեր, նոր մասնագիտություններ, մարդկանց տարատեսակ միավորումներ՝ ըստ զբաղմունքի, հետաքրքրությունների ու շահերի: Հասարակություններն աստիճանաբար դառնում են ավելի բազմազան, ձեռք են բերում ավելի բարդ կառուցվածք: Սեփականության և մարդկանց անհավասարության կարևորագույն ձև է դառնում հողի սեփականությունը՝ հողատիրության տարբեր տեսակներով: Հասարակության այս տեսակն անվանում են **ֆեոդալական կամ ավատատիրական**:

Արդյունաբերական հեղափոխությունը, որ նշանավորում է արտադրության մեջ ձեռքի աշխատանքի դերի նվազումը և մեքենաների դերի աճը, մոտավոր թվագրվում է 18-րդ դարի երկրորդ կեսից մինչև 19-րդ դարի առաջին կեսը: Այն նաև սոցիալական հեղափոխություն էր, որ փոխում էր մարդկանց կյանքի պայմաններն ու ապրելակերպը: Գործարաններին պետք էին մեծ թվով բանվորներ, այդ կարիքը լրացվում էր գյուղացիների հաշվին: Գյուղական բնակչու-

թյունը պակասում էր, ավելանում էր քաղաքային բնակչությունը: Ձևավորվում էին հասարակությունը կազմող նոր խավեր: Զարգացած արդյունաբերություն ունեցող երկրներում (Եվրոպա, Հյուսիսային Ամերիկա) առաջ էին գալիս ժամանակակից մեծ քաղաքներ: Մեր օրերում շատ հասարակություններում բնակչության հիմնական մասն ապրում է քաղաքներում:

Ն1 Բազմամշակութային հասարակություն

Ն2 Բնակչության պատմական աճը քաղաքներում

Ծանոթանանք ժամանակի ամենամեծ քաղաքներին մարդկության պատմության ընթացքում:

Քաղաքի անունը	Գտնվելու վայրի այժմյան անվանումը	Բնակչության քանակը ծաղկման շրջանում	Տարեթիվը	Բնակչության քանակն այժմ
Երիքով	Պաղեստին	2000	Մ.թ.ա. 7000	14 674
Ուրուկ	Իրաք	4000	Մ.թ.ա. 3500	ավերակներ
Մարի	Սիրիա	50 000	Մ.թ.ա. 2400	ավերակներ
Ուր	Իրաք	100 000	Մ.թ.ա. 2100	ավերակներ
Յինշի	Չինաստան	120 000	Մ.թ.ա. 1300	ավերակներ
Բաբելոն	Իրաք	100 000	Մ.թ.ա. 700	ավերակներ
Կարթագեն	Թունիս	500 000	Մ.թ.ա. 300	20 715
Հռոմ	Իտալիա	1 200 000	Մ.թ. 200	2 754 440
Կոստանդնուպոլիս	Թուրքիա	600 000	600	13 120 596
Բաղդադ	Իրաք	900 000	900	6 554 126
Քայֆուն	Չինաստան	1 000 000	1200	4 800 000
Բեյջին կամ Պեկին	Չինաստան	1 000 000	1500	22 000 000
Այութեյա	Թաիլանդ	1 000 000	1700	54 888
Լոնդոն	Անգլիա	1 335 000	1825	13 945 000
Նյու Յորք	ԱՄՆ	7 774 000	1925	8 175 133
Տոկիո	Ճապոնիա	20 500 000	1968	32 450 000

Ն3 Սոցիալական շերտավորում

Ժամանակակից հասարակություններն ընդունված է բաժանել երեք դասի՝ բարձր կամ վերին դաս, միջին դաս, ցածր կամ ստորին դաս: Յուրաքանչյուր դասի մեջ մտնում են մարդիկ, որոնք ունեն նման նյութական պաշարներ: Դա էլ որոշում է նրանց ապրելակերպը՝ բարեկեցությունը, գործունեության տեսակները, հասարակության մեջ ունեցած ազդեցության չափը: Բարձր դասի մեջ են մտնում առավել հարուստ և բարձր եկամուտ ունեցողները (ձեռնարկատերեր, արդյունաբերողներ, կառավարիչներ): Միջին դասին են պատկանում տվյալ հասարակության համար միջին եկամուտ ունեցող՝ ամենատարբեր զբաղմունքի ու մասնագիտության տեր մարդիկ: Ցածր դասի մեջ հիմնականում ֆիզիկական աշխատանք կատարող մարդիկ են: Շատ հասարակություններում, հավանաբար նաև Հայաստանում, կարելի է առանձնացնել չորրորդ դաս՝ հողագործությամբ և անասնապահությամբ զբաղվող գյուղացիությունը:

Հասարակության այսպիսի շերտավորումը խոսում է այնտեղ գոյություն ունեցող անհավասարության մասին: Ժամանակակից հասարակությունների համար կարևոր է համարվում միջին խավի տոկոսը. զարգացած երկրներում այն կազմում է հասարակության մեծ մասը: Սա նշանակում է, որ հասարակության մեծ մասն

ապրում է բարեկեցիկ կյանքով: Շատ երկրներում, այդ թվում՝ Հայաստանում, այս խավը զգալիորեն փոքր է, փոխարենը բավականին ստվար է ցածր խավը: Այսպիսի հասարակություններում մեծ խնդիր է աղքատությունը, որը դառնում է սոցիալական անհավասարության ամենացայտուն արտահայտությունը: Աղքատությունը բնորոշվում է իբրև մի վիճակ, երբ մարդը կամ մարդկանց խումբը չունի միջոցներ, որ անհրաժեշտ են տվյալ հասարակության մեջ ընդունված կյանքի նվազագույն պայմաններն ապահովելու համար:

Առաջադրանք

1. Գտի՛ր տեղեկություններ և դրանց հիման վրա **նկարագրի՛ր** բազմամշակութային հասարակությունը՝ օգտագործելով **Ն1** -ը: **Ներկայացրո՛ւ** նման հասարակության օրինակներ:
2. **Ներկայացրո՛ւ** Հայաստանում մշակութային բազմազանության դրսևորումները: **Ցո՛ւյց տուր**, թե ինչ ազգային փոքրամասնություններ կան Հայաստանում, և ինչ բնակավայրերում են նրանք կենտրոնացած:
3. **Ուսումնասիրի՛ր**, թե որ երկրներում կան մեծաքանակ հայկական համայնքներ, և ինչպես է արտահայտվում նրանց մասնակցությունն այդ հասարակությունների կյանքում:
4. **Պարզաբանի՛ր** **Ն2** -ը:
5. Օգտագործելով **Ն3** -ը՝ **բացատրի՛ր**, թե ինչ է աղքատությունը: ՀՀ վիճակագրական կոմիտեից ու այլ աղբյուրներից քաղի՛ր տեղեկատվություն և **ուսումնասիրի՛ր** անցած մի քանի տարում Հայաստանում աղքատության մակարդակի մասին տվյալները: **Քննի՛ր**, թե ինչ միջոցներ է ձեռք առնում Հայաստանի կառավարությունը աղքատության խնդիրը լուծելու համար:
6. Համացանցի օգնությամբ ուսումնասիրի՛ր նյութեր և **մեկնաբանի՛ր** հետևյալ արտահայտությունները՝ գործազրկություն, նվազագույն աշխատավարձ, սպառողական զամբյուղ, հարաբերական և բացարձակ աղքատություն:
7. Միացյալ ուժերով **քննարկե՛ք և դիրքորոշո՛ւմ հայտնեք** Հայաստանում աղքատության՝ որպես սոցիալական խնդրի մասին:

2.2 Տպագրության գյուտը և դրա հետևանքները

Եկեք խոսենք ժամանակակից հասարակությունների ձևավորմանը մեծագույն նպաստ բերած մի տեխնոլոգիական գյուտի մասին: Այն թերևս ամենանշանավոր նորարարությունն է՝ տպագրության գյուտը, որը կատարվեց մոտ հինգուկես հարյուրամյակ առաջ: Հեղինակը գերմանացի Յոհաննես Գուտենբերգն (1393/1406–1468) էր: Նա էապես կատարելագործեց և համալրեց այն տպագրական սարքերը, որ դարեր շարունակ կիրառվում էին Չինաստանում: Նրա նորամուծություններից մեկը մամլիչն էր՝ մի գործիք, որը մինչ այդ օգտագործվում էր ուրիշ նպատակներով: Գուտենբերգն այն մտցրեց տպագրական գործի մեջ: Այստեղից է գալիս տարբեր լեզուներում ընդունված «մամուլ» բառը:

Գուտենբերգի գյուտը մեծ արձագանք գտավ, և տպարաններն արագորեն տարածվեցին Եվրոպայով մեկ: Տպագրական հաստոցից առաջ Եվրոպայում յուրացվել էր նաև թղթի արտադրությունը: Այս նույն շրջանում ի հայտ եկան նաև առաջին օպտիկական ակնոցները: Դրա կարիքը զգում էին շատ ընթերցողներ

Էապես արագացավ և հեշտացավ գրքի արտադրությունը: Ի հայտ եկան մեծ թվով և զանազան բովանդակությամբ գրքեր, որոնք ցածր գնի շնորհիվ մատչելի էին ավելի մեծ թվով մարդկանց: Այս ամենը մեծ դեր խաղաց գիտության ու կրթության, ինչպես նաև տեխնոլոգիաների զարգացման գործում նախ՝ Եվրոպայում, ապա՝ ամբողջ աշխարհում:

S1

1842 թ.արտադրության տպագրական մամլիչի լուսանկար

Գրագիտության աճն աշխարհում

Տպագրության գյուտից առաջ գոյություն ունեցող գրքերի քանակի մասին կարելի է պատկերացում կազմել հետևյալ փաստից. Անգլիայի երկու ամենամեծ գրքերի պահոցները՝ Քենթերբերիի և Բերիի աբբայությունների գրադարանները, ունեին 2000-ական գիրք, իսկ Քեմբրիջի համալսարանի գրադարանն ուներ ընդամենը 300 գիրք: Գուտենբերգի գյուտին հաջորդած 50 տարվա ընթացքում Եվրոպայում տպագրվեց մոտ 40 000 անուն գիրք մոտ 10 միլիոն ընդհանուր տպաքանակով: Հետագա տարիներին Եվրոպայի տնտեսապես առավել զարգացած երկրներում նկատվում է գրագիտության անշեղ աճ: Որոշակի ուշացումով նույնը կատարվում է ուրիշ երկրներում: Եթե 200 տարի առաջ աշխարհի բնակչության միայն 12 տոկոսն էր գրագետ, ապա այժմ անգրագիտությունն է չափվում մոտ 14 տոկոսով: Խորհրդային Հայաստանում բնակչության գրագիտությունն անանախադեպ մակարդակի է հասնում 1980-ականներին, երբ կարելի էր խոսել համատարած գրագիտության մասին:

Ն4 Ի՞նչ է նշանակում գրագիտությունը

«Գրագետ», «գրագիտություն» բառերն այսօր արդեն սովորաբար մատնանշում են ոչ միայն գրել-կարդալ իմանալու փաստը: Երբ ասում ենք՝ գրագետ մարդ, նկատի ունենք ավելին, քան պարզ գրագիտությունը: Բացի այդ, կլսեք տարբեր արտահայտություններ, որտեղ խոսվում է ուրիշ տեսակի գրագիտության մասին. օրինակ՝ ֆուտբոլային խաղը մեկնաբանելիս՝ «գրագետ մարզիչ», «գրագետ մարտավարություն», «գրագետ պաշտպանություն»: Մյուս կողմից՝ կա վերջին շրջանին բնորոշ գրագիտության մի տեսակ, որը ենթադրում է, օրինակ, ծանոթություն տեղեկատվական տեխնոլոգիաների հետ, համակարգիչը, խելախոսը (սմարթֆոն) կամ մեկ այլ ժամանակակից տեխնոլոգիա օգտագործելու համար անհրաժեշտ գիտելիքներ ու հմտություններ:

Ն5 Արևմտյան Եվրոպայի երկրներում գրագիտության աճի գծապատկերը 1451 թ. մինչև 1701 թ. ընկած ժամանակաշրջանում

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑՆԻՇՆԵՐԸ 1451-1701



Առաջադրանք

1. Գտի՛ր տեղեկություններ և դրանց հիման վրա **նկարագրի՛ր**, թե ինչպես էին պատրաստվում գրքերը տպագրության գյուտից առաջ, և ինչի վրա էին գրում մարդիկ թղթից առաջ:
2. Փորձի՛ր պարզել և **ներկայացրո՛ւ**, թե ինչ նյութերից է պատրաստվում թուղթը:
3. Գտի՛ր տեղեկություններ և **ստեղծի՛ր** պաստառ առաջին տպագիր հայերեն գրքերի մասին՝ նշելով դրանց տպագրության վայրերն ու հանգամանքները:
4. Փորձի՛ր պարզել և **բացատրի՛ր**, թե տպագրության վաղ շրջանում ինչպես էր օգտագործվում մամլիչը, և թե ժամանակակից հայերենում ինչ իմաստներ ունի «մամուլ» բառը:
5. **Քննի՛ր** Ն4-ն ու Ն5-ը և **մեկնաբանի՛ր** դրանց միջև կապը:

2.3 Սոցիալականացում և սոցիալական խմբեր

Հասունացող երեխան հավանաբար հարազատներից ու մերձավորներից շատ անգամ լսում է՝ «չի կարելի», «ամոթ է», «ապրես», «կեցցես» և ուրիշ հանդիմանող կամ քաջալերող խոսքեր, տեսնում նրանց խրախուսող, թախանձող, կշտամբող հայացքները: Այսպես երեխային հուշում և հիշեցնում են հասարակության մեջ գոյություն ունեցող կանոնների, ընդունելի կամ անընդունելի արարքների ու վարքագծի մասին:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆԱՑՈՒՄ

Այն գործընթացն է, երբ մարդը կամ մարդկանց խումբը սովորում և կիրառում է տվյալ հասարակության մեջ ընդունված կանոններն ու սովորույթները: Եվ սա բնորոշ է ոչ միայն հասունացման շրջանին, այլև մարդու ամբողջ կյանքին:

Անձի կողմից տվյալ հասարակությունում գոյություն ունեցող կանոնների և արժեքների յուրացումը կատարվում է մասամբ տարերայնորեն՝ որպես ազդեցությունների ու շփումների անխուսափելի արդյունք, և մասամբ էլ դաստիարակության հետևողական աշխատանքի միջոցով:

Սոցիալականացման գործընթացի համար մեծ նշանակություն ունեն այն հիմնական միջավայրերը, որոնցում գտնվում է երեխան: Դրանցից առաջինը ընտանիքն է: Երեխաները սկզբնապես նմանակում են հենց ծնողների կամ մերձավոր շրջապատի մարդկանց վարքը: Երկրորդ կարևոր միջավայրը հասակակիցներն են: Այստեղ՝ ընտանիքի համեմատությամբ ավելի հավասար հարաբերությունների պայմաններում, երեխան ձեռք է բերում ուրիշ տեսակի փորձառություն: Երրորդը դպրոցն է, որտեղ երեխան ստանում է կրթություն և հնարավորություն՝ հաղթահարելու այն սոցիալական միջավայրի սահմանափակումները, որից սերում է: Սոցիալականացման կարևոր գործոն են նաև տեղեկատվամիջոցները (մեդիան)՝ լրագրեր, ռադիո և հեռուստատեսություն, համացանց: Սրանց միջոցով երեխան ստանում է այնպիսի տեղեկություն, որն անմատչելի է ուրիշ աղբյուրներից: Վերջին շրջանի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երեխաներն ավելի ու ավելի շատ ժամանակ են անցկացնում հեռուստացույցի, համակարգչի առաջ կամ հեռախոսի հետ:

Ընտանիքը, հասակակիցները և դասարանը խմբի օրինակներ են: Խմբերը ոչ միայն կարող են լինել սոցիալականացման միջոց, այլև ընդհանրապես կարող են ծառայել հասարակական կյանքի կազմակերպմանը:

Ն6 Սոցիալական խմբեր, հասարակության սոցիալական կազմը

«Խումբ» բառի նշանակությունը բավականին անորոշ է. այն կարող է ունենալ 2-3 հոգուց մինչև բավական մեծ թվով անդամներ: Այս առումով խմբերը կարելի է տարբերակել ըստ դրանք կազմող մարդկանց քանակի՝ փոքր և մեծ խմբեր: Հասկանալի է, որ այս բաժանման մեջ նույնպես կա անորոշություն. սահմանը մեծ և փոքր խմբի միջև հստակ չէ: Մենք չենք դիտարկի պատահականորեն և կարճ ժամանակով ձևավորված խմբերը, ինչպես օրինակ՝ վերելակի մեջ մի քանի վայրկյանով կողք կողքի հայտնված անծանոթ մարդկանց խումբը կամ մարզադաշտում սպորտային խաղին հետևող հանդիսականների բազմությունը: Մարդիկ կարող են խմբերի մեջ մտնել իրենց կամքով կամ կամքից անկախ, ըստ ամենատարբեր հատկանիշների՝ զբաղմունքի տեսակի, բնակության վայրի, եկամտի չափի, տարիքի, մշակութային հետաքրքրության և այլն:

Փոքր խմբի օրինակներ են ընտանիքը, դասարանը, նվագախումբը, սպորտային թիմը: Մեծ խմբեր են, օրինակ, Հայաստանում գոյություն ունեցող ստեղծագործական միությունները՝ թատերական գործիչների, կոմպոզիտորների, գրողների և այլն, որոշակի մասնագիտության տեր մարդկանց արհեստակցական միությունները: Այս միությունները կոչված են պաշտպանելու իրենց անդամների մասնագիտական և սոցիալական շահերը: Մեծ խմբի առանձին տեսակ են կազմում տարբեր կազմակերպությունները: Մարդկանց մեծ մասը պատկանում է բազմաթիվ խմբերի, ինչպես նաև այնպիսի մեծ կազմակերպությունների, ինչպիսիք են դպրոցները, համալսարաններն ու ձեռնարկությունները: Խմբերն ու կազմակերպություններն ունեն իրենց կանոններն ու արժեքները, որոնք որոշում են մարդու վարքը, զգալի ազդեցություն թողնում նրա կյանքի տարբեր կողմերի վրա: Այստեղ մարդիկ ստանում են իրենց գիտելիքներն ու ընդունակությունները դրսևորելու և զարգացնելու հնարավորություն: Դրանով իսկ իրենց նպաստն են բերում խմբի աշխատանքին: Միաժամանակ, հանուն խմբի նպատակների ու շահերի, մարդիկ ենթարկվում են ճնշումների ու սահմանափակումների:

Սոցիալական խումբը բաղկացած է ինչ-որ քանակի մարդկանցից, որոնց միջև առկա են տևական և կանոնավոր հարաբերություններ: Խմբի մեջ գտնվելը մարդկանց հաղորդում է միասնականություն, նրանց մոտ ձևավորում որոշակի սոցիալական հատկություններ,

վարքի գծեր: Համառոտ նկարագրենք սոցիալական խմբերի երկու հիմնական տեսակ՝ առաջնային խմբեր* և երկրորդային խմբեր*:

Առաջնային խմբերը մարդու կյանքում խաղում են շատ կարևոր դեր: Նման խումբը սովորաբար մեծ չէ և բաղկացած է այնպիսի մարդկանցից, որոնց միջև կան անմիջական հարաբերություններ ու հուզական կապ: Առաջնային խմբի հիմնական օրինակը ընտանիքն է: **Երկրորդային խմբերը սովորաբար բաղկացած են ավելի մեծ թվով մարդկանցից, որոնց միավորում է որոշակի գործնական նպատակ կամ առաջադրանք**: Պարտադիր չէ, որ նրանց միջև լինեն մտերիմ հարաբերություններ: Դասարանն այդպիսի խմբի լավ օրինակ է:

Իրականում առաջնային և երկրորդային խմբերի միջև հստակ բաժանարար գծեր չկան: Երկրորդային խմբի անդամների միջև կարող են առաջ գալ ընդհանուր շահեր և հուզական բնույթի կապեր, որ բնորոշ են առաջնային խմբին:

Ժամանակակից հասարակություններում մարդկանց կյանքը սերտորեն կապված է տարատեսակ կազմակերպությունների հետ՝ դպրոց, հիվանդանոց, վարչական մարմիններ: Դրանք հիմնված են ոչ անձնական կապերի վրա և ծառայում են որոշակի նպատակների: Դրանց միջոցով են բավարարվում մարդկանց տարատեսակ կարիքները՝ առողջապահություն, կրթություն, կոմունալ ծառայություններ*, բանկային ծառայություններ և այլն:

Մենք տեսանք, որ հասարակությունը բաղկացած է տարբեր շերտերից, տարատեսակ խմբերից ու կազմակերպություններից, իմացանք ժամանակակից հասարակությունների բարդ կառուցվածքի, բազմատարր սոցիալական կազմի մասին:

Առաջադրանք

1. Քո ընտանիքի կամ հասակակիցների խմբի օրինակով **նկարագրի՛ր** առաջնային խմբի որոշ հիմնական հատկություններ:
2. Ձեր դասարանի օրինակով **ցո՛ւյց տուր** առաջնային և երկրորդային խմբերի միջև գոյություն ունեցող տարբերություններն ու նմանությունները:
3. Մեկ օրվա ընթացքում գրանցի՛ր, թե ինչի համար ու որքան ժամանակով ես օգտագործել քո հեռախոսը և **գնահատի՛ր** նպատակահարմարությունը:
4. Դասարանում **քննարկե՛ք** հաղորդակցության ժամանակակից տեխնոլոգիաների՝ սոցիալական ցանցերի, բջջային հեռախոսի դերը ձեր առօրյայում: Ի՞նչ եք կարծում, դրանք ավելի կարևոր են ուսումնական նպատակների՞, թե՞ ընտանեկան կամ ընկերական հարաբերությունների համար:

ԳԼՈՒԽ 3

Մարդ, ճանաչողություն և վարքագիծ

Սովորելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1 | բացատրել, թե ինչ է ճանաչողությունը և ինքնաճանաչողությունը, ինչ են հույզերն ու վարքագիծը.

2 | բացատրել, թե ինչ են սոցիալական հմտություններն ու հաղորդակցությունը, և թե ինչ կարևորություն ունեն դրանք մարդու կյանքում.

3 | վերլուծել սեփական հույզերն ու մտքերը.

4 | զարգացնել ինքնաճանաչողական և իրավիճակին համարժեք արձագանքելու սոցիալական հմտություններ.

5 | բացատրել հույզերի կառավարման և արդյունավետ հաղորդակցության նշանակությունը մարդու համար.

6 | մեկնաբանել ճանաչողության ու վարքագծի դերը մարդու և հասարակության կյանքում.

7 | ձևավորել հարգանք ու պատասխանատվություն սեփական անձի և այլոց հանդեպ:



Ստեփանակերտ, 1988 թ., լուսանկարի հեղինակ՝ Զավեն Խաչիկյան

Ինչպե՞ս ենք հասկանում մեզ շրջապատող մարդկանց, ինչպե՞ս են նրանք հասկանում մեզ: Ինչպե՞ս ենք գնահատում մեր շուրջը կատարվող իրադարձությունները: Իսկ ինքներս մեզ հասկանո՞ւմ ենք, մի՞շտ ենք իմանում, թե ինչ ենք ուզում, կամ որոնք են այս կամ այն բանի նկատմամբ մեր վերաբերմունքի պատճառները: Գիտե՞նք, թե ինչ-որ իրադրության մեջ ինչու ենք վարվում այսպես և ոչ թե այլ կերպ: Ինչպե՞ս են մեր ապրումներն ու տրամադրությունն անդրադառնում մեր գործողությունների, մարդկանց հետ մեր շփման վրա: Կարդալով այս գլուխը՝ կիմանաս շատ հարցերի պատասխաններ:

3.1 Սոցիալական ճանաչողություն

Իհարկե, դուք լսել եք մարդու փոխարեն տարբեր գործողություններ կատարող ռոբոտների մասին, որոնք լայնորեն օգտագործվում են ինչպես արդյունաբերության մեջ, այնպես էլ առօրյայում: Վերջերս շատ է խոսվում առանց վարորդի երթևեկող ավտոմեքենաների մասին, որոնք առաքումներ են կատարում քաղաքներում: Հայտնի են նաև մարդու տարբեր ընդունակությունները նմանակող ուրիշ մեքենաներ: Օրինակ՝ համակարգիչը փորձում է ճանաչել մարդու խոսքը և մարդու նման կարդում է գրված տեքստը, փորձում է նմանակել մարդու տեսողությունը և ճանաչել պատկերներ ու առարկաներ, կատարում է թարգմանություն մի բնական լեզվից մյուսը և այլն: Արհեստական ինտելեկտի՝ մարդու մտածողական ընդունակությունները կամ խելքը նմանակող համակարգիչների մշակման այս ուղղությունը սկիզբ է առել 20-րդ դարի կեսին՝ ոգևորության ու հիասթափության իրար հաջորդած շրջաններով: Այն շարունակում է զարգանալ մեր օրերում:

Շախմատի աշխարհի 13-րդ չեմպիոն Գարի Կասպարովը խաղում է Դիփ Բլու համակարգչի դեմ (1996-1997 թթ.)

Արհեստական ինտելեկտի ստեղծման ուղղությամբ ամենախոսուն իրադարձություններից մեկն է համարվում ԱյԲիԷմ (IBM) ընկերության Դիփ Բլու (Deep Blue, Մուգ կապույտ) անունով գերհամակարգչի հաղթանակը շախմատի աշխարհի այն ժամանակվա չեմպիոն Գարի Կասպարովի նկատմամբ: Առաջին մրցաշարը՝ բաղկացած 6 խաղից, տեղի ունեցավ 1996 թ. փետրվարին (Ֆիլադելֆիա) և ավարտվեց Կասպարովի հաղթանակով՝ 4:2: Մինչդեռ մոտ մեկ տարի անց՝ 1997 թ. մարտին (Նյու Յորք) կայացած երկրորդ մրցաշարում հաղթեց գերհամակարգչի կատարելագործված տարբերակը՝ 3,5:2,5: Կասպարովը մեղադրեց ընկերությանը խարդախության մեջ, բայց ամեն դեպքում նոր հանդիպում չկազմակերպվեց, և համակարգչի այդպիսի տպավորիչ խաղը շատերի կողմից ընդունվեց որպես կարևոր նվաճում արհեստական ինտելեկտի զարգացման ճանապարհին: Սակայն մարդու բոլոր ունակությունները չէ, որ կարող են ընդօրինակվել նույն հաջողությամբ:

Ճանաչել սոցիալական միջավայրը

Սոցիալական հոգեբանները համոզված են, որ ոչ մի համակարգիչ չի կարող համեմատվել մարդկանց՝ որպես սոցիալական մտածողների հետ: Փորձենք հասկանալ, թե ինչ է սոցիալական ճանաչողությունը, ինչպես է այն ձեռք բերվում և օգտագործվում:

S1

Սոցիալական հոգեբանություն

Հոգեբանության մի ճյուղն է, որն ուսումնասիրում է այն, թե մենք ինչ ենք զգում, ինչ ենք մտածում մեզ շրջապատող մարդկանց մասին, ինչպես ենք վարվում նրանց հետ և ինչպես են այդ մարդիկ ազդում մեր մտքերի, զգացմունքների ու վարքագծի վրա: Կարճ ասած՝ սոցիալական հոգեբանությունը քննում է մեր ամենօրյա փոխազդեցությունը ուրիշ մարդկանց հետ: Դրանց թվում են նաև այն սոցիալական խմբերը, որոնց մենք պատկանում ենք:

Գիտնականները կարծում են, որ մարդ արարածն օժտված է սոցիալական ճանաչողության բացառիկ ընդունակություններով: Դա վերաբերում է այն ձևերին, որոնցով մարդիկ մտածում են իրենց և սոցիալական աշխարհի մասին: Դա նաև վերաբերում է այն բանին, թե **ինչպես են մարդիկ ընտրում, մեկնաբանում, հիշում և օգտագործում սոցիալական տեղեկատվությունը, երբ անում են դատողություններ և կայացնում որոշումներ**:

Ճանաչողությունը ենթադրում է մտածողություն, իսկ «մտածողություն» բառը սովորաբար զուգորդվում է մտքի մանրակրկիտ ու հետևողական աշխատանքի հետ, որը պահանջում է ժամանակ ու ջանքեր: Բայց առօրյայում շատ ավելի հաճախ մեր մտածողությունն աշխատում է ուրիշ կերպ: Օրինակ՝ երբ մի ակնթարթում, ինչպես ասում են՝ մի հայացքով, տպավորություն ենք կազմում անծանոթ մարդու մասին: Դա կատարվում է արագ և առանց ջանք թափելու: Սա կոչվում է ինքնաշխատ (ավտոմատ) մտածողություն: Այն մեր ամենօրյա կյանքի

ուղեկիցն է և օգնում է ուղղորդել մեր վարքագիծը տարբեր իրադրություններում, պատշաճ հարաբերվել մարդկանց հետ:

ԻՆՔՆԱՇԽԱՏ (ԱՎՏՈՄԱՏ) ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Մտածողություն, որ կատարվում է անգիտակցական և չմտադրված, ակամա և առանց ճիգի:

Ինքնաշխատ մտածողությունը սոցիալական փորձի արդյունք է: Այն ձևավորվում է ամենավաղ տարիքից սկսած, երբ մենք հետևում ենք մարդկանց հարաբերություններին, նրանց գործողություններին ու դրանց հետևանքներին տանը, բակում կամ դպրոցում հասակակիցների ու մեծահասակների հետ շփվելիս: Խաղալիս, թե դաս սովորելիս, զրույցի բռնված, թե պարզապես զբոսնելիս, մենք ծանոթանում ենք շրջապատող աշխարհի, մարդկային կյանքի տարբեր կողմերին: Մենք շարունակ ստանում ենք ազդակներ, սովորում ճիշտ արձագանքել զանազան իրավիճակների, ծանրութեթև անել, գնահատել դրանք և որոշել մեր քայլերը: Այսպես սովորում ենք մեկնաբանել սոցիալական աշխարհը և կայացնել որոշումներ առանց հատուկ ջանքի ու մտադրության:

Հարկավոր է նաև հաշվի առնել, որ ճանաչողությունը սերտորեն առնչված է **ուսման** հետ, սովորելու կամ ուսանելու ընդունակության հետ: «Ուսում» բառը պետք է հասկանալ ամենալայն իմաստով: Մենք ուսանում ենք, երբ պատրաստվում ենք վաղվա ստուգողական աշխատանքին կամ ավարտական քննությանը, երբ սովորում ենք օգտագործել որևէ գործիք՝ մուրճից մինչև հեռախոս ու համակարգիչ, երբ սկսում ենք ինքնուրույն կողմնորոշվել մեր բնակավայրում և այլն: Բայց ուսումը շատ ավելի ընդարձակ ոլորտ է: Այն կարելի է բացատրել որպես **մարդու գիտելիքի և վարքագծի մշտական փոփոխություն, որ արդյունք է նրա փորձի**: Այսինքն՝ ամեն օր ինչ-որ բաներ ենք իմանում մեզ շրջապատող աշխարհի մասին, և այդ նոր գիտելիքն այս կամ այն ձևով ազդում է մեր վարքագծի վրա:

Սովորելը թերևս ամենակարևոր մարդկային կարողությունն է: Այն թույլ է տալիս պատշաճ արձագանքել մեր շուրջը կատարվող փոփոխություններին և մեր կյանքը դարձնել հնարավորինս անվտանգ ու արդյունավետ: Սովորելու տեսակներից մեկը **կռահումը** կամ **ներըմբռնումն** է, երբ մենք հանկարծ գտնում, հասկանում ենք խնդրի լուծումը: Մենք կարող ենք սովորել նաև **դիտելու** միջոցով, երբ հետևում ենք ուրիշ մարդկանց պահվածքին և հասկանում, թե ինչպես կարելի է արձագանքել նման դեպքում: Բայց սոցիալական ճանաչողության հիմնական աղբյուրը մեր ամենօրյա փորձառությունն է, որի շնորհիվ սովորում ենք, թե ինչպես պետք է վարվել այս կամ այն իրավիճակում:

Ն1 «Կոլեկտիվիստական» և «ինդիվիդուալիստական» մշակույթներ. մշակութային տարբերությունների ազդեցությունը սոցիալական ճանաչողության վրա

Սոցիալական հոգեբանները համոզված են, որ ինքնաշխատ մտածողության մեխանիզմների աշխատանքը կախված է այն մշակույթից, որի մեջ ապրում է տվյալ մարդը: Ինդիվիդուալիստական մշակույթում («ինդիվիդ» բառից, որ նշանակում է «անհատ»), որ շատ տարածված է, օրինակ, ԱՄՆ-ում, մարդու անկախությանն ու իրավունքներին տրվում է ավելի մեծ կարևորություն, քան հասարակության մյուս անդամների նկատմամբ նրա պարտականություններին:



Մինչդեռ կոլեկտիվիստական մշակույթում, որի օրինակները գտնում ենք արևելյան Ասիայում, առաջին տեղում են խմբային պատկանելությունն ու սեփական խմբի նկատմամբ մարդու պարտականությունները: Ամեն դեպքում, յուրաքանչյուր մշակույթում կարող են լինել մարդիկ, որոնց մոտ ընդգծված է այդ հակումներից որևէ մեկը:

Առաջադրանք

1. **Նկարագրիր** մի իրավիճակ, երբ դու ինչ-որ խնդրի լուծում գտել ես անսպասելի գլխի ընկնելու, պատասխանը կռահելու միջոցով: Նշիր, թե ինչ հանգամանքներ են օգնել դրան:

2. Հիշիր և **ներկայացրու** այնպիսի դեպքեր, երբ արագորեն ճիշտ կամ սխալ տպավորություն ես կազմել անծանոթ մարդու մասին: **Պարզաբանիր**, թե յուրաքանչյուր դեպքում ինչ պայմաններ են ազդել քո մտածողության վրա:

3. Ինչպես ասվեց սոցիալական ճանաչողության հիմնական աղբյուրը մեզ շրջապատող աշխարհն է: Բայց այդ աշխարհը բաղկացած է տարբեր միջավայրերից, որոնցից սովորում ենք տարբեր բաներ: **Առանձնացրու** և **նկարագրիր** գիտելիքի կարևոր տեսակներ, որ սովորել ես՝ **ա)** տանը, **բ)** բակում՝ հասակակիցներիդ կամ տարիքով քեզնից ավելի մեծահասակների միջավայրում, **գ)** դպրոցում:

4. Դիտելու միջոցով սովորելն ունի խնդրահարույց կողմ երեխաների համար, որոնք մեծանում են այնպիսի միջավայրում, որտեղ տեսնում են վատ վարքի կամ բռնության օրինակներ: **Վերլուծիր** նման դեպքեր:

5. **Ուսումնասիրիր** գեղարվեստական գրականության և կինոյի դերը սոցիալական ճանաչողության համար: **Ներկայացրու** այնպիսի օրինակներ, երբ գրքում կամ կինոնկարում գտել ես քեզ համար ուսանելի ինչ-որ բան, երբ նկարագրվող իրադարձությունները հուշել են, թե ինչպես կարելի է վարվել կամ ինչպես պետք չէ վարվել որոշակի իրադրության մեջ:

6. **Քննարկե՛ք**, թե Հայաստանում **Ն1**-ում նշված մշակութային հակումներից ո՞րն է ավելի տարածված՝ ինդիվիդուալիստակա՞նը, թե՞ կոլեկտիվիստականը: **Մեկնաբանիր**, թե անձամբ քեզ դրանցից որն է ավելի հարազատ: **Նկարագրիր** իրադրություններ, որտեղ այս հակումները կարող են արտահայտվել:

7. **Քննարկե՛ք** **Ն1**-ում նշված մշակույթների առավելություններն ու թերությունները:

3.2 Վերաբերմունք և վարքագիծ

Ճանաչողությունը սերտորեն կապված է հիշողության հետ:

ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆ

Հիշողությունը տեղեկատվությունը ժամանակի ընթացքում պահպանելու և հաղորդելու մեր ունակությունն է:

Ճանաչողությունն ու հիշողությունը աշխատում են միասին և հնարավորություն են տալիս մեզ մեկնաբանել ու հասկանալ շրջապատող աշխարհը: Այս բանում մեծ դեր է վերապահված լեզվին: Այլ կերպ ասած՝ խոսելու և ուրիշի խոսքը հասկանալու, ինչպես նաև գրելու և կարդալու մարդու հմտություններին:

Ժամանակի ընթացքում մեր մեջ ձևավորվում է վերաբերմունք ամենատարբեր բաների նկատմամբ, իսկ վերաբերմունքը, ինչպես կտեսնենք, որոշակի կապ ունի մեր վարքագծի հետ: Ընդ որում՝ ձևավորված վերաբերմունքները կարող են նաև փոխվել: Յուրաքանչյուր մարդ շարունակ գնահատում է շրջապատող աշխարհը: Նա հավանում կամ չի հավանում այն ամենը, ինչի հանդիպում է:

ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Վերաբերմունքը այն գնահատականներն են՝ բարեհաճ կամ անբարեհաճ, որ տալիս ենք մարդկանց, առարկաներին կամ գաղափարներին: Որքան շատանում են մեր շփումներն ու հարաբերությունները, այնքան ավելանում ու ավելի բազմակողմանի են դառնում մեր գնահատականները:

Փորձենք հասկանալ, թե որտեղից են ի հայտ գալիս վերաբերմունքները, ինչի վրա են հիմնված և ինչ ձևերով են արտահայտվում: Նախ՝ կա վարկած, որ մեր ծնողներից ժառանգում ենք բնավորության գծեր, որոնք մեզ հաղորդում են որոշակի նախասիրություններ: Բայց նույնիսկ բնածին նախապատվությունների գոյության պայմաններում մեր վերաբերմունքը հիմնականում առաջ է գալիս սոցիալական միջավայրի ազդեցությունից:

Մեր վերաբերմունքը ինչ-որ բանի նկատմամբ կարող է արտահայտվել.

ա. մտքերի ու համոզմունքների* տեսքով.

բ. հուզական արձագանքի* տեսքով.

գ. որոշակի գործողության տեսքով:

Իհարկե, վերաբերմունքի այս երեք բաղադրիչները կարող են գործել ինչպես առանձին-առանձին, այնպես էլ միասին: Մյուս կողմից՝ մեր վերաբերմունքը կարող է հիմնված լինել թե՛ մեր համոզմունքների, թե՛ զգացմունքների* վրա:

Մեզ մնաց հասկանալ, թե ինչ կապ կա մարդու վերաբերմունքի ու վարքագծի միջև: Տարածված է այն ենթադրությունը, թե այդ կապն ուղղակի և անմիջական է: Այսինքն՝ մեր վերաբերմունքը որոշում է մեր վարքագիծը: Համարվում է, որ մարդու վարքագիծը փոխելու համար պետք է փոխել նրա վերաբերմունքը ինչ-որ բաների նկատմամբ: Բայց նոր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ բավականին թույլ է կապը մարդու վերաբերմունքի ու վարքագծի միջև: Բացի այդ, վերաբերմունքի փոփոխությունը՝ որպես կանոն, առաջ չի բերում վարքագծի փոփոխություն: Սոցիալական հոգեբանների եզրակացությունն այն է, որ մարդու վարքագիծն ավելի հաճախ որոշվում է արտաքին սոցիալական ազդեցություններով: Օրինակ՝ նրա շրջապատի մարդկանց սպասումներով* ու վարքագծով: Իհարկե, մեր վերաբերմունքը կկանխատեսի մեր վարքագիծը, օրինակ, այն դեպքում, եթե այն ուժեղ վերաբերմունք է, կամ սոցիալական ազդեցությունը շատ փոքր է:

Ն2 Մեդիա կախվածություն

Մեզ հայտնի չեն Հայաստանին վերաբերող վիճակագրական տվյալներ, բայց տարբեր երկրներում կատարված հետազոտությունները հաստատում են, որ երեխաներն ավելի ու ավելի շատ ժամանակ են անցկացնում հեռուստացույցի կամ համակարգչի առաջ, դիտում տեսանյութեր բջջային հեռախոսով: Նրանք երբեմն դիտում են բռնի գործողություններ պարունակող կինոնկարներ, այլ տեսանյութեր: Բազմաթիվ հետազոտողներ պնդում են, որ հատկապես երկարաժամկետ ազդեցության դեպքում նման տեսանյութերը կարող են փոխել երեխայի վերաբերմունքը, դարձնել ագրեսիվ: Նույնը վերաբերում է բռնություն պարունակող վիդեո խաղերին:

Առաջադրանք

1. **Նշի՛ր** դեպքեր, երբ **ա)** նույն բանի նկատմամբ կամ նման իրադրության մեջ վարվել ես տարբեր ձևերով, դրսևորել ես տարբեր վարքագծեր տարբեր արտաքին գործոնների ազդեցության պատճառով, **բ)** հակառակը, այնպիսի դեպքեր, երբ վարվել ես՝ առաջնորդվելով քո անձնական վերաբերմունքով:
2. Ուսուցչի օգնությամբ **վերլուծի՛ր**, թե **Ն2**-ում նկարագրված խնդիրը որքան այժմեական է Հայաստանում: Երեխաներն ունե՞ն մեդիա կախվածություն, թե՞ ոչ: Եթե ունեն, ապա ի՞նչ չափի է այն:
3. **Դիրքորոշում հայտնիր** այն մասին, թե արդյոք ծնողները պե՞տք է սահմանափակեն **Ն2**-ում նշված տեսանյութերի ու վիդեո խաղերի քանակն իրենց երեխաների համար:

3.3 Հույզերի կառավարում և արդյունավետ հաղորդակցում

Սոցիալական ճանաչողության կողքին կարևոր է ինքնաճանաչումը: Մարդը շրջակա միջավայրի մի մասնիկն է: Երբ նա մասնակցում է ինչ-որ իրադարձության, ստացած տպավորություններն ինչ-որ բան «ասում են» նաև հենց իր մասին: Այդ տպավորությունների մեջ մարդը կարող է գտնել նաև իր գործողությունների բացահայտ կամ անբացահայտ գնահատականներ՝ մի քաջալերող խոսք, համակրանք կամ հիասթափություն արտահայտող հայացք: Այդ գնահատականները հատկապես արժեքավոր են, երբ գալիս են նրա համար կարևոր մարդկանցից:

Ինչ-որ իրավիճակի մեջ ուրիշների վարքագծին հետևելիս կարող ենք մտածել մեր իսկ հնարավոր պահվածքի մասին: Նույն կերպ ինքներս մեզ համեմատում ենք գրքերի, կինոնկարների հերոսների հետ և դարձյալ մտածում մեր մասին որպես անհատի և հասարակության անդամի: Մեր իսկ մտքերի ու գործողությունների, ապրումների ու ցանկությունների, դրանց դրդապատճառների ու հետևանքների մասին խորհելով՝ զբաղվում ենք ինքնադիտմամբ*: Դրանով կարևոր տեղեկություններ ենք ստանում մեր ֆիզիկական ու հոգեկան առանձնահատկությունների մասին: Իհարկե, մեր տպավորությունները կարող ենք նաև քննարկել ուրիշ մարդկանց, օրինակ՝ մեր ծնողների հետ: Մեր մասին ձեռք բերած գիտելիքն օգնում է գնահատել մեզ, մեր ընդունակություններն ու հնարավորությունները: Այդպես որոշակի հատկություններ ենք վերագրում մեզ և պատկերացնում հետագա անելիքները:

Ինքնաճանաչման մաս է սեփական հույզերը ճանաչելու և վերահսկելու ունակությունը: Այս ունակության մյուս կողմը ուրիշ մարդկանց հույզերը, մտադրություններն ու շարժառիթները հասկանալու կարողությունն է: Այս փոխլրացնող հմտություններն օգնում են մարդկանց հետ շփվելիս և տարբեր իրավիճակներում որոշումներ կայացնելիս:

S2

Հույզերի տեսակները

Մարդու հիմնական հույզեր են համարվում բարկությունը, զզվանքը, վախը, ուրախությունը, տխրությունը, զարմանքը: Մեր կյանքն անկարելի է պատկերացնել առանց հույզերի, դրանք ուղղորդում են մեր վարքագիծը և օգնում որոշումներ կայացնել: Սեփական հույզերը կառավարելու ունակությունն օգնում է պլանավորել մեր անելիքները և լուծել խնդիրները: Հույզերը կարող են լինել կառուցողական և ապակառուցողական: Կառուցողական, երբ, օրինակ, դրական հուզական կապը մեզ մղում է հոգատար վերաբերմունքի հարազատ մարդու նկատմամբ, կամ երբ վախն օգնում է հրաժարվել սխալ գործողությունից: Ապակառուցողական, երբ բարկացած պահի կարող ենք վիրավորել մի մարդու, որն արժանի չէ դրան:

ՀՈՒՅԶ

Հույզը դրական կամ բացասական ապրում է, որն ուղեկցվում է մարդու մեջ կատարվող հոգեբանական և վարքային փոփոխությամբ:

Մենք ապրում ենք հույզը և՛ մտքով, և՛ մարմնով: Հիասթափությունը, տխրությունը, ուրախությունը, ձանձրույթը կամ ամոթը միայն հոգեբանական վիճակներ չեն, այլև մարմնում կատարվող գործընթացներ: Դա հատկապես ակնհայտ է ուժեղ արտահայտվող հույզերի, ասենք՝ բուռն հրճվանքի կամ ուժեղ տագնապի ժամանակ: Հուզական վերելքի կամ պոռթկումի վիճակում մարդու շնչառությունն արագանում է, սրտի աշխատանքը՝ հաճախանում, և այլն:

Ինչպե՞ս սովորել «կարդալ» քո հույզերի փոփոխությունները, կառավարել դրանք: Ինչպե՞ս զսպել, օրինակ, տագնապը կամ բարկությունը՝ թուլացնելով հուզական ազդեցության ուժը:

Նախ՝ պետք է սովորել ճանաչել և անվանել քո հուզական վիճակները. ես տխուր եմ, ես բարկացած եմ, ես ոգևորված եմ և այլն: Այնուհետև պետք է սովորել ճանաչել այն իրավիճակները, երբ սովորաբար առաջ է գալիս այս կամ այն հույզը, փորձել գտնել պատճառներն ու կռահել հնարավոր հետևանքները՝ հիմնվելով ձեռք բերած փորձի ու գիտելիքի վրա: Այսինքն՝ կարողանալ կանխատեսել հույզերը և պատրաստ լինել կարգավորել դրանք:

Պետք է սովորել հուզական վիճակում կանգ առնել և մտածել, նախքան գործողության դիմելը կամ ինչ-որ բան ասելը: Հույզերի կառավարումը, այսպիսով, նաև նշանակում է հուզական վիճակում գործողության հետաձգում և անելիքների գնահատում: Սա ունակություն է, որ օգնում է մարդուն՝ չհայտնվելու անօգնական վիճակում, դարձնում նրան ավելի իրատես ու ինքնավստահ:

Ինքնակառավարման ունակությունը կարող է ինչ-որ չափով հատուկ լինել մարդուն ի ծնե, բայց, ինչպես պնդում են հոգեբանները, այն կարելի է նաև յուրացնել, զարգացնել հետևողական վարժանքի միջոցով:

Առաջադրանք

1. Հիշի՛ր և **նկարագրի՛ր** դեպքեր, երբ սեփական հույզերը կառավարելու կարողությունը կամ անկարողությունը ազդել է ձեր կյանքի վրա:
2. **Առանձնացրո՛ւ** հուզական ինքնատիրապետման օրինակներ գրքերից կամ կինոնկարներից, որոնք որոշել են իրադարձությունների ընթացքը:
3. Եթե գրավոր շփման ժամանակ օգտագործում ես «էմոջիներ», **հիմնավորի՛ր**, թե ինչով են դրանք օգնում հաղորդակցությանը: **Ստուգի՛ր**, թե հատկապես որ նշաններն ես ավելի շատ օգտագործում, դա ինչ-որ բան ասո՞ւմ է քո մասին:

Հաղորդակցում

Վերը խոսեցինք մարդու սոցիալականացման մասին, որի ընթացքում նա ձեռք է բերում սոցիալական հմտություններ: Ժամանակակից արագ փոփոխվող աշխարհում մարդը պարտավոր է յուրացնել նոր հմտություններ ամբողջ կյանքի ընթացքում: Խոսքը մասնավորապես սեփական հույզերը կառավարելու և ուրիշների հույզերը, մտադրություններն ու ցանկությունները ճանաչելու մասին է: Իրականում հիմնական սոցիալական հմտությունները կարելի է ամփոփել մարդկանց հետ շփվելու և գործակցելու կարողության մեջ: Կարողություն, որ մարդուց պահանջում է սեփական մտքերը հստակ արտահայտելու, ուշադիր լսելու, համոզելու, բախումներից խուսափելու, որոշումներ կայացնելու և բազմաթիվ ուրիշ հմտություններ: Հմտությունների այս շրջանակը ուրիշ բառով կարող ենք անվանել **արդյունավետ հաղորդակցման ունակություն:**

S2

Հաղորդակցում

Հաղորդակցումը մարդկանց միջև տեղեկատվության փոխանակում է, որին կարող են ավելանալ նաև որոշ գործողություններ, ինչպես նաև հույզեր: Հաղորդակցման օրինակներ են մեր ամենօրյա բանավոր կամ գրավոր զրույցները՝ երես առ երես կամ տեխնոլոգիական միջոցների օգնությամբ: Հաղորդակցումը կարող է լինել պաշտոնական կամ ոչ պաշտոնական:

Ե՞րբ է առաջ գալիս արդյունավետության հարցը: Այն ժամանակ, երբ հաղորդակցումն ունի որոշակի գործնական նպատակ: Օրինակ՝ երբ ցանկանում ես լավ տպավորություն թողնել զրուցակցիդ վրա, շահել նրա համակրանքը անձնական կամ գործնական նպատակով, երբ ցանկանում ես ստանալ ինչ-որ հարցի պատասխան կամ հասնել փոխհամաձայնության ինչ-որ հարցի շուրջ: Այդպիսի նպատակ հետապնդող հաղորդակցման արդյունավետությունը կարելի է գնահատել այն չափով, որով պահանջվող առաջադրանքը կարելի է կատարված համարել:

Ն3 Հույզերի տեսակները պատկերով



Ն4 Հաղորդակցման լեզուն

Հաղորդակցումը պահանջում է տարբեր հմտություններ, բայց դրա հիմնական միջոցը լեզուն է՝ բանավոր կամ գրավոր: Ուրեմն, արդյունավետությունը կախված է այն բանից, թե ինչքան լավ ես տիրապետում լեզվին և օգտագործում այն, ուրիշ ունակություններիդ հետ ցանկալի նպատակիդ հասնելու համար:

Հաղորդակցման մեկ այլ միջոց է մարմնի լեզուն: Այն կազմված է տվյալ մշակույթի մեջ ընդունված և ճանաչելի այնպիսի նշաններից, ինչպիսիք են ձայնի տոնը, դեմքի արտահայտությունը, հայացքը, հպումը, ժեստերը, մարմնի կեցվածքը և շարժումը: Այս նշանները երբեմն ավելի լավ են հաղորդում մարդու հույզերն ու զգացմունքները, քան բառերը: Ընդհանուր առմամբ մարմնի լեզվի հմուտ օգտագործումը (օրինակ՝ հանգիստ կեցվածքը, չափավոր ժեստերը, խոսակցության ընթացքին համապատասխանող դեմքի արտահայտությունը և այլն) կարող է նպաստել հաղորդակցման արդյունավետության մեծացմանը:



Առաջադրանք

1. **Նկարագրիր** այն լեզուների տարբերությունը, որ օգտագործում ես տանը, բակում և դպրոցում: **Բնութագրիր** այդ լեզուներից յուրաքանչյուրը:
2. **Բացատրիր**, թե ինչ կպատահի, եթե մենք մի իրադրության համար նախատեսված լեզվով խոսենք մեկ այլ իրադրության մեջ:
3. **Բնորոշիր** մարմնի լեզվի այն միջոցները, որ քո կարծիքով օգտագործում ես դու կամ քո մտերիմները:
4. **Կշռադատիր**, թե երբ է ավելի արտահայտիչ մարմնի լեզուն. երբ ընդգծվում է միայն մեկ միջո՞ց, ասենք՝ հայացքը, ժեստը կամ կեցվածքը, թե՞ երբ համատեղվում են տարբեր միջոցներ, այդ թվում՝ խոսքը: **Նկարագրիր** այնպիսի օրինակներ, երբ մարմնի լեզվի տարբեր միջոցներ, օրինակ՝ դեմքի արտահայտությունը, ձեռքերի շարժումը և ձայնի տոնը, առաջ են գալիս միաժամանակ, **բացատրիր** իմաստները՝ ի՞նչ են ասում դրանք:

ԳԼՈՒԽ 4

Մարդ և բարոյականություն

Սովորելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1| հիմնավորել բարոյական նորմերի անհրաժեշտությունը.

2 | վերլուծել բարոյականության ոսկե կանոնը և մեկնաբանել բարոյականության կարևոր հասկացությունները.

3 | բարոյական դատողություններ անել որոշակի իրավիճակներ վերլուծելու միջոցով.

4 | համեմատել և հակադրել էգոիզմն (եսասիրություն) ու ալտրուիզմը (այլասիրություն):

ԱՑԱՏՈՒԹՅՈՒՆ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
ԱՐԳԵԼՔ
ԲԱՐԻՔ
ՍՈՎՈՐՈՒՅԹ
ԱՌԱՁԸՆԹԱՑ
ՍԽԱԼ
ՃԻՇՏ
ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք կարևոր գործողություն կատարելուց առաջ հաճախ մտածում ենք՝ ճի՞շտ է արդյոք մեր որոշումը, թե՞ սխալ: Երբեմն նման հարցեր տալիս ենք նաև ինչ-որ գործողություն կատարելուց հետո՝ արժե՞ր նման բան անել, թե՞ ոչ, դրանից ավելի շատ օգո՞ւտ կլինի, թե՞ վնաս, ի՞նչ են ուրիշները կարծում իմ արարքի մասին: Ամեն անգամ, երբ մտածում ենք նման հարցերի մասին, մենք գործ ունենք մարդկային կյանքի մի ոլորտի հետ, որը կոչվում է բարոյականություն: Իսկ թե ի՞նչ է ***բարոյականությունը****, ո՞րն է դրա դերը հասարակության կյանքում՝ կիմանաս շուտով:*

4.1 Բարոյականությունը և դրա գործառույթը. բարոյական նորմերի դերը

Բարոյականությունն ունի դրական, խրախուսող կողմ, որն օգնում է համագործակցել հասարակության մեջ կամ մի խմբի ներսում, գոյատևել և ապահովել ապրելու համար բարենպաստ պայմաններ: Սակայն ունի նաև բացառող, արգելող կողմ. տարբեր բարոյական արգելքները նույնպես կարող են նպաստել հասարակության պահպանմանը: Օրինակ՝ «Մի՛ սպանիր», «Մի՛ գողացիր» պատվիրաններն այդ արգելքների դրսևորումն են: Սակայն իրականությունն այդքան էլ պարզունակ չէ: Երբեմն որոշ հասարակություններ կամ անհատներ գոյատևում կամ ծաղկում են այնպիսի մտածողության ու արարքների շնորհիվ, որոնք այլ մարդկանց համար բարոյական չեն:

Ն1. Բարոյականությունը, կրոնը և օրենքը

Թեև մի հասարակության բարոյականությունը կարող է բխել դրա կրոնից, բարոյականությունն ու կրոնը նույն բանը չեն: Բարոյականությունը կարող է համարվել մարդկանց վարքի ուղեցույց: Մինչդեռ կրոնը միշտ ավելին է: Օրինակ՝ կրոնը ներառում է պատմություններ անցյալի իրադարձությունների վերաբերյալ: Այդ պատմությունները սովորաբար գերբնական էակների մասին են, որոնք օգտագործվում են բացատրելու կամ արդարացնելու համար այն վարքը, որը կրոնը պահանջում է: Թեև կրոնի ու բարոյականության պահանջած վարքի կանոնները կարող են բավականաչափ համընկնել, կրոններն արգելում կամ պահանջում են ավելին, քան բարոյականությունը: Կրոնը կարող է նաև խթանել մի վարք, որն արգելված է բարոյականությամբ:

Որպեսզի չշփոթենք բարոյականությունն ու օրենքը, փորձենք նաև դրանք տարբերակել իրարից: Օրենքը տարբերվում է բարոյա-

կանությունից գրված կանոններով, տույժերով ու պաշտոնյաներով, որոնք մեկնաբանում են այդ օրենքները և կիրառում պատիժները: Բարոյականության և օրենքով կարգավորվող վարքում զգալի համընկնումներ կան, և օրենքները ժամանակի ընթացքում հաճախ գնահատվում ու փոփոխվում են բարոյականության հիման վրա:



Նույնիսկ փոքր հասարակություններում տարբերություններն ակնհայտ են բարոյականության, օրենքի ու կրոնի միջև: Իսկ մեծ և բարդ հասարակություններում այդ տարբերություններն ավելի են ընդգծվում: Ուստի, հասարակության առաջադրած վարքագծի յուրաքանչյուր կանոն չի կարող ուղղակիորեն համարվել բարոյականություն:

Ն2. Բարոյական նորմերի փոփոխությունը

Բարոյականությանը կարելի է նայել այն տեսանկյունից, թե որքանով է մարդու արարքը ֆիզիկական կամ հոգեկան վնաս հասցնում այլ մարդկանց: Էական է նաև, թե որքանով է այդ արարքը համապատասխանում արդարության մասին պատկերացումներին: Սակայն կարևոր է իմանալ, որ բարոյական նորմերը հնարավոր չէ որոշել միայն ուրիշներին վնաս չտալու սկզբունքով: Կարող են լինել անվնաս արարքներ, որոնք մարդկանց մեծ մասի կողմից բարոյապես սխալ համարվեն:

Երևանի Ազատության հրապարակ, 2022 թ.

Որոշ հասարակություններում ընդունված չէ, որ հասուն տարիքի տղամարդիկ հանրային վայրերում կարճ շալվարով շրջեն: Իսկ որոշ հասարակություններում, ընդհակառակը, շատ է պատահում: Հայաստանի մայրաքաղաք Երևանի փողոցներում մինչև 2010-ական թվականների սկիզբը հազվադեպ կտեսնեիք կարճ շալվարով շրջող տղամարդկանց: Իսկ այժմ շոգ եղանակին բազմաթիվ տեղացիներ ու զբոսաշրջիկներ հանրային վայրերում հայտնվում են այդ հագուստով:

Սակայն մինչ օրս էլ ընդունված չէ կարճ շալվարով մտնել որոշ հաստատություններ (օրինակ՝ կառավարության շենք կամ բուհ), գնալ դասական երաժշտության համերգի և այլն: Թեև դա ոչ ոքի վնաս չի պատճառի, բայց կարող է համարվել ամոթալի բան, խստության պակաս կամ անհարգալից վերաբերմունք:

Առաջադրանք

1. **Նկարագրիր,** թե բարոյականությունն ինչով է տարբերվում կրոնից ու օրենքից:
2. **Ներկայացրու** Ն1 -ում տեղ գտած պատկերը:
3. **Ուսումնասիրիր** Ն1 -ում նկարագրված փոփոխության պատճառները:
4. **Բացատրիր** Ն1 -ում ցույց տրված փոփոխության ազդեցությունը մարդկանց կյանքի վրա:
5. **Քննարկեք,** թե ինչ կլինի, եթե բարոյական նորմերը հանկարծ վերանան:
6. Դասարանով բաժանվե՛ք երկու խմբի և **քննարկե՛ք՝** ի՞նչ կլինի, եթե բոլոր հաստատություններում թույլատրվի տղամարդկանց մուտքը կարճ շալվարով: **Հիմնավորե՛ք՝** բերելով կողմ և դեմ փաստարկներ:

Բարոյականության ոսկե կանոնը

Ամեն ինչ որ կամենում էք՝ թէ ձեզ անեն մարդիկ, այնպէս էլ դուք արէք նորանց:
Մատթէոս 7:12

Բարոյականության ոսկե կանոնի ամենատարածված տարբերակն այսպես է հնչում. «Դիմացինիդ հետ վարվիր այնպես, ինչպես կցանկանայիր, որ քեզ հետ վարվեն»: Հայտնի է նաև դրա ժխտական տարբերակը. «Մի՛ արա ուրիշներին այն, ինչ չես ցանկանում քեզ»: Ինչպես տեսնում եք, այս կանոնը հավասարության կոչ է: Այն հորդորում է ուրիշներին քեզնից ցածր չհամարել, նրանց չվնասել:

Ոսկե կանոնը տարբեր մշակույթներում տարածված է եղել դեռևս նախաքրիստոնեական ժամանակներում, օրինակ՝ եբրայական մշակույթում և Կոնֆուցիոսի ուսմունքի մեջ հին Չինաստանում: Սակայն առավել լայն շրջանառություն է ստացել վաղ քրիստոնեության շրջանում: Հենց այս փուլում է, որ ոսկե կանոնի նշանակությունն ընդլայնվում է և ներառում բոլորին՝ տարբեր կրոնների հետևորդներին, կանանց, ինչպես նաև էթնիկական այլ խմբերի մարդկանց:

Սակայն միջնադարում քրիստոնեության մեջ այս հավասարական և անխտրական մոտեցումն այլևս գոյություն չուներ, և կանոնն ավելի շատ կիրառվում էր նախաքրիստոնեական իմաստով՝ իբրև նույն դիրքի մարդկանց միջև հարաբերությունները կարգավորող կանոն, որը կարող էր չվերաբերել կանանց, այլ էթնոսի կամ կրոնի մարդկանց: Վերը նշվածի լավագույն ապացույցն ինկվիզիցիան կամ հավատաքննությունն է:

Հետաքրքիր է քննարկել, թե ինչ դեր ունի ոսկե կանոնը մեր առօրյայում: Օրինակ՝ այն ավելի շատ նպաստում է հասարակության մեջ ընդունված վարքի պահպանմա՞նը, թե՞ խթանում է անձնական կարեկցանքը և ուրիշներին օգնելու միտումը: Կա՞ ընդհանուր, համամարդկային բարոյականություն, թե՞ ամեն անգամ պիտի փորձենք հասկանալ տվյալ ժամանակի, տվյալ հասարակության և ամեն առանձին դեպքին հատուկ հանգամանքները: Փորձենք գտնել այս հարցերի պատասխանը:

S1

Ժոզեֆ-Նիկոլա Ռոբեր-Ֆլորի, Գալիլեոն ինկվիզիցիայի առջև, 1847 թ.

Ինկվիզիցիա

Ինկվիզիցիան կամ հավատաքննությունը զորեղ հաստատություն էր, որ ստեղծվել էր կաթոլիկ եկեղեցու ներսում XII դարում՝ արմատախիլ անելու և պատժելու հերձվածողությունը (աղանդավորություն) ամբողջ Եվրոպայում և Ամերիկայում: 1633 թ. ինկվիզիցիան հայտնի գիտնական Գալիլեո Գալիլեյին դատապարտեց տնային կալանքի այն բանի համար, որ վերջինս պնդում էր, թե Երկիրը պտտվում է արևի շուրջը: Գալիլեյը տնային կալանքի տակ մնաց մինչև իր մահը՝ 1644 թ., սակայն գիտության հետագա զարգացումներն ապացուցեցին նրա ճշմարտացիությունը:

Ն3. Սնունդը և բարոյականությունը

Ընտանիք Երևանում, 2023 թ.

Այն պարզ հարցը, թե տվյալ հասարակությունն ինչն է համարում ուտելիք և ինչը՝ ոչ, կարող է շատ բան պատմել: Գիտենք, որ շատ երկրներում՝ Չինաստան, Հարավային Կորեա, Վիետնամ, տարածված է շան միս ուտելը, և գոյություն ունեն բազմաթիվ ճաշատեսակներ: Օրենքով արգելված չէ, բայց համեմատաբար պակաս է տարածված Ուզբեկստանում, Նիգերիայում, Կամերունում և այլուր: Այս երևույթը Շվեյցարիայում հանդիպում է խիստ հազվադեպ՝ բնակչության 3%-ի շրջանում: Շան մսի վաճառքն արգելված է Անգլիայում, բայց թույլատրվում է ուրիշների աչքից հեռու ուտել այն պայմանով, որ կենդանին տանջանքների չենթարկվի: ԱՄՆ-ում թույլատրված է միայն տեղաբնիկներին (հնդկացիներ), մնացած բոլորին օրենքն արգելում է: Շան մսի սպառման բարոյական արգելքը գալիս է այն բանից, որ պատմականորեն շունը մարդու ընկերակիցն է՝ օգնել է որսի, ունեցվածքը հսկելու գործում, հաճախ բնակվել է և այսօր էլ բնակվում է մարդկանց հետ նույն հարկի տակ՝ իբրև տան անդամ: Եվ հատկապես քրիստոնեական մշակույթի ազդեցությամբ ձևավորված պետություններում բարոյապես անընդունելի է մարդու ընկերակցին՝ շանը, սննդի մեջ գործածելը:

Մենք կարող ենք մտածել սննդի մասին երկու ձևով: Այն, ինչ մարդիկ իրականում համարում են սնունդ, և այն, ինչ նրանք կհամարեին սնունդ, եթե լիներին ռացիոնալ և լիովին տեղեկացված: Մենք կարող ենք մտածել այն մասին, թե ինչ կա իրականում, և ինչ կուզեինք, որ լիներ:

Առաջադրանք

1. **Նշիր** որևէ օրինակ, որտեղ գործում է բարոյականության ոսկե կանոնը:
2. **Բացատրիր** Ն3 -ի նշանակությունը:
3. **Բացահայտիր** սննդի ընկալման տարբերության այլ օրինակներ: **Նշիր** ինչ-որ ուտելիք, որ ուտում են Հայաստանում, բայց որն այլ երկրում կամ համայնքում ուտելիք չի համարվում:
4. **Քննարկեք**, թե արդյոք բարոյականության ոսկե կանոնը կիրառելի է կենդանիների նկատմամբ: Ո՞ր կենդանիների նկատմամբ կկիրառեիք այն, ո՞ր կենդանիների նկատմամբ չէիք կիրառի:

4.2 Բարոյագիտությունը և բարոյականության հիմնական հասկացությունները

Այժմ անդրադառնանք բարոյականության ուսումնասիրությանը:

ԲԱՐՈՅԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Բնագավառը, որն ուսումնասիրում է, թե բարոյապես ինչն է լավ կամ վատ, ինչն է ճիշտ կամ սխալ, ինչն է ընդունելի կամ անընդունելի, որոնք են մարդու վարքի բարոյական շարժառիթները, կոչվում է բարոյագիտություն:

Տարբեր տեքստերում, «բարոյագիտություն» տերմինից բացի, ձեզ կհանդիպի նաև դրա հոմանիշը՝ «էթիկան»: Երբ փորձում ենք անցյալի գիտելիքների վրա հիմնված և ներկա հանգամանքների ուսումնասիրմամբ փաստարկված դատողություններ անել բարոյականության մասին, մենք զբաղվում ենք բարոյագիտությամբ:

Էթիկա բառը երբեմն գործածվում է նաև մասնագիտությունների հետ՝ բժշկական էթիկա, իրավաբանական էթիկա, ձեռնարկատիրական էթիկա, և նշում է, թե ինչպիսին պետք է լինի տվյալ ոլորտի մասնագետի վարքը:

S2



Հիպոկրատ կամ Հիպոկրատես (մոտ մ.թ.ա. 460 – մոտ մ.թ.ա. 370), բժիշկ

Մ.թ.ա. 4-3 դդ. արձանագրված երդումը, որ վերագրվում է հին հույն բժիշկ Հիպոկրատեսին, համարվում է արևմտյան քաղաքակրթության մեջ բժշկական էթիկայի սկզբնաղբյուրը:

Հիպոկրատեսի երդումը

(կրճատումներով)

Երդվում եմ բժշկության աստված Ապոլլոնի, առողջության հովանավոր Ասկլեպիասի և այլ աստվածների ու դիցուհիների անունով՝ նրանց վկայակոչելով, որ ես կկատարեմ այս երդումը և պայմանագիրը, որքան ներեն ուժերս ու թելադրի խիղճս:

Ուսուցչիս զավակներին համարել իմ եղբայրները, և եթե նրանք կամենան, սովորեցնել բժշկական արվեստ անվարձահատույց և առանց պայմանագրի: Իմ բոլոր գիտելիքները, դասավանդման եղանակները երդվում եմ հաղորդել իմ որդիներին, իմ ուսուցչի որդիներին, Բժշկի երդում տված աշակերտներիս ու նրանցից բացի ոչ ոքի:

Երդվում եմ վարել հիվանդությունները խղճիս համաձայն, որքան ներեն ուժերս՝ խուսափելով բուժառուներիս որևէ վնաս կամ չարիք պատճառելուց: Երդվում եմ երբեք ոչ ոքի չտալ մահաբեր թույն կամ աջակցել այդ գործում, ով էլ որ խնդրի այդ մասին: Երդվում եմ լինել մաքուր ու բարեպաշտ առօրյայում և արվեստիս մեջ:

Ինչ տուն էլ որ մտնեմ, երդվում եմ այդ անել միայն հիվանդի բարօրության համար՝ զերծ մնալով որևէ անարդար գործից: Ինչ էլ որ ես տեսնեմ կամ լսեմ իմ բժշկական գործունեության ընթացքում կամ դրանից դուրս մասնավոր կյանքում, որ չպետք է հրապարակ հանվի, երդվում եմ լռության մատնել ու այն համարել սրբազան գաղտնիք:

Եթե այս երդումը բարեխղճորեն կատարեմ ու այն երբեք չդրժեմ, թող ինձ բաժին ընկնի երջանկություն կյանքում, հաջողություն արվեստիս մեջ և մարդկանց հարգանքը հավիտյանս հավիտենից, իսկ եթե դրժեմ երդումս, թող ինձ բաժին ընկնի հակառակը:

Բարոյականության սահմանումներ, ընդհանուրը և անհատականը

Բարոյագիտությունը տալիս է բարոյականության տարբեր սահմանումներ:

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1| Բարոյականությունը որոշակի վարքի կանոններ ենթադրող պատկերացումների ամբողջություն է, որ առաջ է քաշում որևէ հասարակության կամ մարդկանց խումբ: Ինչպես նաև պատկերացումներ, որ որդեգրել է մեկ անհատ իր վարքն ուղղորդելու համար:

2| Բարոյականությունը վարքագծի ընդհանուր կանոնների ամբողջություն է բոլոր ռացիոնալ մարդկանց համար: Մեկ անհատը կամ հասարակությունը կարող են այլ անհատի կամ հասարակության վարքը և գործողությունները համարել բարոյական կամ ոչ բարոյական, բարի կամ չար, ընդունելի կամ մերժելի՝ ենթադրելով ընդհանուր չափանիշներ:

Բարոյական նորմերը տատանվում են ոչ միայն մի հասարակությունից մեկ ուրիշին անցնելիս, այլև զգալի փոփոխությունների են ենթարկվում նույն հասարակության մեջ ժամանակի ընթացքում. դրա ապացույցն արդեն տեսանք կարճ շալվարներին վերաբերող օրինակում: Ուստի, առաջին սահմանումն ավելի գործուն է: Սակայն երկրորդ սահմանումն էլ կարող է ավելի ցանկալի և բարենպաստ լինել մարդու համար:

Անհրաժեշտ է նաև նշել՝ հավանականությունը շատ մեծ է, որ նույն հասարակության երկու անդամ կունենան իրար մոտ բարոյական պատկերացումներ: Հաճախ հենց այդպես է լինում, բայց երբեմն պատահում է, որ ականատես ենք լինում հակառակին՝ նույն հասարակության երկու անդամ ունենում են բարոյականի մասին շատ տարբեր պատկերացումներ:

Ն4. Երկու տարբեր մոտեցում բարոյականությանը

Բարոյականության կարևոր և ամենաազդեցիկ տեսաբաններից են Իմանուիլ Կանտը և Ջոն Ստյուարտ Միլը: Թե՛ Կանտը, թե՛ Միլը համարում են, որ բարոյականությունը ոչ թե գոյություն ունի հենց այնպես, այլ դրա հետևում միշտ ինչ-որ շարժիչ ուժ կա: Կանտը կարծում է, թե բարոյականությունը գալիս է մարդկության հանդեպ պարտավորությունից, մինչդեռ, ըստ Միլի, բարոյականության խթանը բավականություն ստանալու մղումն է:

Կանտը համարում է, որ մարդկանց գործողություններն ի սկզբանե պետք է պայմանավորված լինեն բարի կամքի սկզբունքով: Նա

Իմանուիլ Կանտ (1724–1804), գերմանացի փիլիսոփա



Ջոն Ստյուարտ Միլ (1806–1873), անգլիացի փիլիսոփա, քաղաքատնտես

այսպես է մտածում. վարվի՛ր՝ հետևելով միայն այնպիսի սկզբունքի, որը կկամենաս, որ դառնա վարքի համընդհանուր կանոն:

Նրա մյուս կարևոր պնդումն է. գործի՛ր այնպես, որ երբեք որևէ մեկի հետ չվարվես որպես զուտ միջոցի, այլ միաժամանակ այդ մեկին համարես նպատակ: Այսինքն՝ Կանտի համար **նպատակը չի արդարացնում միջոցները:** Նրա համար բարոյական գործողության նպատակը ոչ թե երջանիկ լինելն է, այլ երջանկության արժանի լինելը: Ռացիոնալ էակը չի կարող ավելի մեծ նպատակ ունենալ, քան առաքինի լինելը: Երջանկությանն արժանի լինելը ամենաբարձր նպատակն է:

Իսկ Միլը համարում է՝ անձը պետք է վարվի այնպես, որ գործողությունների արդյունքում ստեղծվի առավելագույն երջանկություն: Գործողությունները բարոյական են՝ շնորհիվ գործողության առաջ բերած արդյունքների: Եվ տարբերություն չկա, թե ով է զգում այդ առավելագույն հաճույքը՝ գործողություն կատարողը, թե դիմացի անձը: Միլի առաջ քաշած առավելագույն երջանկության սկզբունքն է. գործողությունները բարոյականորեն ճիշտ են այնքանով, որքանով նպաստում են երջանկության (բավականություն, ցավի բացակայություն) ի հայտ գալուն և սխալ են այնքանով, որքանով նպաստում են դժբախտության (ցավ, բավականության բացակայություն) ի հայտ գալուն: Միլի համար **նպատակը կարող է արդարացնել միջոցները:**

Առաջադրանք

1. **Բնութագրի՛ր** բարոյագիտության գործառույթները:
2. **Ներկայացրո՛ւ**, թե ինչ բարոյական պնդումներ կան Հիպոկրատի երդման մեջ: Հաշվի առնելով դարերի ընթացքում տեղի ունեցած փոփոխությունները՝ ցո՛ւյց տուր, թե ինչով է բժշկական էթիկան այսօր տարբերվում Հիպոկրատի ժամանակներից:
3. **Բացատրի՛ր** բարոյականության երկու սահմանման միջև տարբերությունը:
4. **Պարզաբանի՛ր** Կանտի և Միլի մոտեցումների տարբերությունը:
5. **Հիմնավորի՛ր**, թե բարոյականության որ սկզբունքն է նախընտրելի քեզ համար:

Բարոյականության հիմնական հասկացությունները

Մենք արդեն գիտենք, որ բարոյականությունը գործ ունի **բարիքի ու չարիքի,** ընդունելի ու մերժելի երևույթների հետ: Այն, ինչն օգուտ և բավականություն է բերում, կարող է համարվել բարիք: Իսկ այն, ինչը վնաս և ցավ է պատճառում, կարող է համարվել չարիք: Սակայն մենք նաև հասկացել ենք, որ իրականությունն այդքան էլ պարզունակ չէ: Այն, ինչը բարիք է մի հասարակության համար, մեկ այլ հասարակության աչքին կարող է չարիք թվալ: Նույնը կարող ենք ասել մեկ հասարակության ներսում տարբեր խմբերի ու անհատների մասին. այն, ինչը մեկ խմբի կամ անձի համար բարիք է, մյուսին կարող է չարիք թվալ: Հաճախ հակասությունները հենց դրա պատճառով են ծագում:

Բարդ իրավիճակներում գլուխ հանելու համար հաճախ դիմում ենք հասկացությունների, որոնք օգնում են կողմնորոշվել: Դիտարկենք բարոյականության ևս մեկ բնութագրում, որ շատ նման է մեզ արդեն ծանոթ 2-րդ սահմանմանը. *բարոյականության խնդիրն **ազատ** և ռացիոնալ էակների շրջանում իրար առաջ **հավասար** չափով **պատասխանատու** լինելն է:* Նախադասության մեջ հանդիպեցինք «ազատ», «հավասար» և «պատասխանատու» բառերին, որոնք սերտորեն կապված են բարոյականության հետ: Բոլոր այս արժեքներին մանրամասն կծանոթանաք ավելի բարձր դասարաններում, բայց մինչ այդ նախնական գիտելիքը կարող է օգտակար լինել:

Ազատությունը սեփական ցանկություններով առաջնորդվելու կարողություն է: Երբ հասուն մարդու արարքի հետևանքը վերաբերում է հենց իրեն՝ գործողությունը կատարողին, նրա ազատությունն անսահմանափակ է: Մարդը հասարակության առջև պատասխանատու է այն դեպքերում, երբ նրա արարքներն ազդում են ուրիշների վրա: Կարծիք կա, որ մարդը կամ մարդկանց

խումբը միայն ինքնապաշտպանության նպատակով կարող է սահմանափակել այլ մարդու կամ մարդկանց խմբի ազատ գործողությունը: Այսինքն՝ քաղաքակիրթ համայնքի անդամի նկատմամբ կարելի է ուժ գործադրել միայն ուրիշ մարդկանց վնասից ազատելու նպատակով:

Պատասխանատվությունը հաճախ կախված է ազատությունից: Եթե չկա ազատություն, մարդը չի կարող ինքնուրույն որոշումներ կայացնել, հետևաբար պատասխանատու չէ տեղի ունեցողի համար: Բարոյական պատասխանատվություն վերագրելով որևէ անձի՝ մենք փորձում ենք նրա վարքն ապագայում վերահսկելի դարձնել, որ վնաս չպատճառի ուրիշներին:

Հավասարությունը ենթադրում է մարդկանց նկատմամբ նույնանման վերաբերմունք՝ անկախ նրանց սոցիալական դիրքից, առողջական վիճակից, ֆիզիկական ուժից, կրթվածության աստիճանից, սեռից, տարիքից: Եթե ինչ-որ գործողություն թույլատրելի է, պետք է թույլատրելի լինի բոլորին: Հավասարությունը ենթադրում է հավասար իրավունքներ բոլոր մարդկանց համար, բայց քանի որ պաշարները և ունեցվածքն անհավասար են բաշխված, տարբեր մարդիկ տարբեր չափով են կարողանում օգտվել նույն իրավունքից:

Մարդուն ըստ արժանիքների վարձատրելը կամ պատժելը կարող է համարվել **արդարություն:** Արդարությանն առնչվող գլխավոր հարցերից մեկն է՝ օրենքները մի՞շտ են արդարացի, ի՞նչ անել անարդար օրենքների դեպքում: Խախտե՞լ դրանք, պայքարել, որ վերանայվե՞ն, թե՞ ի վերջո հաշտվել և ենթարկվել: Նման երկընտրանքներ հաճախ են պատահում կյանքում:

S3

Սիմոն դը Բովուար (1908–1986), ֆրանսիացի գրող, փիլիսոփա

Ազատության մասին բոլորովին այլ պատկերացում ունի աշխարհահռչակ գրող Սիմոն դը Բովուարը: Ծանոթանանք նրա տեսակետին պարզեցված տարբերակով:

Ազատության այլ պատկերացում

Ազատությունը, որ միտված է ազատությունը մերժելուն, պետք է ժխտվի: Եվ ճշմարիտ չէ, թե ուրիշների ազատության ճանաչումը սահմանափակում է իմ ազատությունը. ազատ լինել չի նշանակում իշխանություն ունենալ, անել այն, ինչ քեֆդ քաշում է: Նշանակում է՝ կարողանալ ավելի լավը դարձնել այն, ինչ կա հիմա՝ հանուն ապագայի: Ուրիշների ազատությունն իմ ազատության նախապայմանն է նույնիսկ: Մարդը ճնշված է, եթե իրեն բանտ են գցում, բայց չի ճնշվում, եթե իրեն ազատություն չեն տալիս հենց այնպես բանտ նետել իր կողքինին:

S4 Մի ֆուտբոլային խաղի պատմություն

1986 թ. Ֆուտբոլի աշխարհի առաջնության 1/4 եզրափակչի Արգենտինա-Անգլիա խաղի ժամանակ աշխարհահռչակ Դիեգո Մարադոնան ձեռքով գրավեց անգլիացիների դարպասը: Մրցավարը, չնայած անգլիացիների դժգոհությանը, հաշվեց գնդակը: Ավելի ուշ Մարադոնան ասաց. «Սպասում էի, որ թիմակիցներս շնորհավորեն ինձ, բայց ոչ ոք չեկավ... Ես ասացի նրանց. «Եկեք գրկեք ինձ, թե չէ մրցավարը չի հաշվի գոլը»:

Այնուհետև արգենտինացիների ավագ Մարադոնան ֆուտբոլային հրաշք գործեց՝ միայնակ շրջանցելով մրցակցի թիմի կեսին և կրկին գրավելով դարպասը, այս անգամ առանց խաղի կանոնները խախտելու: Այդ գոլն հետագայում կոչեցին «դարի գոլ»:

Բրիտանացիների հարձակվող Գարի Լինեկերը կարողացավ մեկ անգամ գրավել արգենտինացիների դարպասը, և խաղն ավարտվեց 2-1 հաշվով:

Արգենտինայի հավաքականը շարունակեց իր ճանապարհը և նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը:



Մինչև օրս՝ նույնիսկ Մարադոնայի մահից հետո, շատերը հիշում են, որ խաղի առաջին գոլը անարդար է եղել, և մրցավարը չպետք է գրանցեր այն: Սակայն շատ արգենտինացիներ ասում էին, թե շատ ավելի լավ է, որ գոլն այդքան անարդար էր, այդքան դաժան, քանի որ ավելի շատ ցավեցրեց անգլիացիներին: Ինչո՞ւ:

Ֆոլքլենդյան կղզիները փոքր կղզեխումբ է Հարավային Ատլանտյան օվկիանոսում և ունի բրիտանական անդրծովյան տարածքի կարգավիճակ: Արգենտինան հավակնություններ ունի կղզեխմբի նկատմամբ և այն անվանում է Մալվինյան կղզիներ: 1982 թ. ապրիլի 2-ին Արգենտինայի ուժերը ներխուժեցին կղզիներ: Բրիտանիան սա համարեց ներխուժում իր տարածք և ռազմածովային զորք ուղարկեց, որը 1982 թ. հունիսի 15-ին հետ գրավեց կղզիները: Թեև Բրիտանիան և Արգենտինան երբեք պաշտոնապես չեն պատերազմել իրար դեմ, հակամարտությունը հանգեցրեց 285 բրիտանացու և 659 արգենտինացու մահվան:

Ն5 Մենք ենք, մեր սարերը

Ռեժիսոր Հենրիկ Մալյանի և սցենարիստ Հրանտ Մաթևոսյանի «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմը նկարահանվել է «Հայֆիլմ» կինոստուդիայում 1969 թ.: Ֆիլմում հովիվները խախտել են օրենքը, բայց նրանց արարքը դժվար է անարդար համարել: Ոստիկանության լեյտենանտը կանգնում է բարոյական երկընտրանքի առջև՝ պատժե՞լ հովիվներին, թե՞ ոչ:

Ֆիլմը դիտե՛ք սկզբից մինչև վերջ:

Առաջադրանք

1. **Ներկայացրո՛ւ** բարոյականության հիմնական հասկացությունները:
2. **Պարզաբանի՛ր** ազատության մասին երկու պատկերացման տարբերությունը:
3. **Բացատրի՛ր** բարոյական հակասությունների ծագման պատճառները:
4. **Վերլուծի՛ր** S4-ը:
5. Դասարանում **քննարկե՛ք** «Մենք ենք, մեր սարերը» ֆիլմը բարոյական երկընտրանքի տեսանկյունից: Ի՞նչ կանեիք դուք, եթե լինեիք լեյտենանտի փոխարեն:

4.3 Էգոիզմ և ալտրուիզմ

Էգոիզմի տեսանկյունից մարդ արարածը ձգտում է իր առավելագույն օգուտին: Բայց **եսասիրությունը** (էգոիզմ) կարող է նաև արդարացնել ուրիշներին օգուտ տվող վարքը, քանի որ հաճախ սեփական օգուտը մեծացնելու լավագույն միջոցը ուրիշների հետ համագործակցելն է: Բարոյականությունը կարող է համարվել կյանքին հարմարվելու միջոց, որը թույլ է տալիս եսասեր (էգոիստ) անհատին քաղել համագործակցության օգուտները:

Բայց էգոիստական տեսանկյունից անընդունելի է համագործակցության ալտրուիստական հիմնավորումը: **Ալտրուիզմը** կամ **այլասիրությունը** պահանջում է լավություն անել ուրիշներին՝ պարզապես դիմացինին բարին ցանկանալով: Եվ պարտադիր չէ, որ դրանից նաև օգուտ լինի քեզ: Ավելին՝ ուրիշին արած լավությունը երբեմն կարող է քեզ մեծ նեղություն տալու հաշվին լինել:



Կա տեսակետ, որ բարոյականությունն իրագործվում է զգացմունքների միջոցով: Հուզական պարգևատրման ակնկալիքը և հուզական պատժի սպառնալիքը մեզ ստիպում են վարվել այնպես, որ օգուտ լինի ուրիշներին: Մենք ձեռնպահ ենք մնում, օրինակ, գողությունից, քանի որ կարեկցում ենք գողությունից տուժած մարդկանց և մեզ մեղավոր կզգանք նման բան անելուց: Մարդիկ կզայրանան մեզ վրա, եթե բացահայտեն մեր կատարած գողությունը: Իսկ կանոններին և օրենքներին հետևելու դիմաց ուրիշները պատրաստ են պարգևատրել մեզ իրենց երախտագիտությամբ: Բացի զգացմունքներից, մենք ունակ ենք նաև տրամաբանել բարոյականության մասին: Մենք գիտակցում ենք, որ բոլորս ավելի լավ կլինենք, եթե համաձայնենք չգողանալ իրարից և մեխանիզմներ ստեղծենք փոխշահավետ վարք պարտադրելու համար: Սա մի տեսակետ է, որն այլասիրության հիմքում եսասիրություն է տեսնում:

Մարդիկ, որոնք նեղության պահին կիսում են սնունդը, ուրիշներին զգուշացնում են մոտալուտ վտանգի վերաբերյալ և հոգ են տանում միմյանց մասին, երբ հիվանդ են, գոյատևելու ավելի մեծ հնարավորություն ունեն, քան այն մարդիկ, որոնք երբեք ոչինչ չեն անում միմյանց համար: Այսպիսով, մարդիկ հիմնականում գոյատևում են համագործակցելով, բայց հաճախ սահմանափակ խմբի հետ՝ ընտանիք, հարևանություն, ցեղ, ազգ: Առայժմ մարդկությունը չի հասել համագործակցության համաշխարհային մասշտաբով: Ավելին՝ տարբեր խմբեր երբեմն մրցակցում են իրար հետ կամ նույնիսկ թշնամանք տածում միմյանց նկատմամբ:

Բայց մենք հիշում ենք, որ նույն Կանտը համարում էր, թե մարդու արարքները հենց սկզբից պետք է պայմանավորված լինեն բարի կամքի դրսևորմամբ և մարդկության հանդեպ պարտավորությամբ: Բարոյականությունը նույնիսկ նույնացվում է այլասիրության (ալտրուիզմ) հետ: Բայց նաև կարող է նույնացվել մարդու՝ դատողություն անելու կամ ուրիշի դատողությանն արձագանքելու ունակության հետ:

Ն6. Հովհաննես Թումանյանի «Ուրագ ու սղոց» բանաստեղծությունը

Հովհաննես Թումանյան (1869-1923), հայ բանաստեղծ, հասարակական գործիչ

Մի՛ լինիր ուրագի պես,
Միշտ դեպի քեզ, միշտ դեպի քեզ,
Մի՛ եղիր սղոցի պես,
Մին՝ դեպի քեզ, մին՝ դեպի մեզ:

Առաջադրանք

1. **Ցո՛ւյց տուր** էգոիզմի և ալտրուիզմի հիմնական տարբերությունները:
2. **Բացատրի՛ր՝** քեզ էգոի՞ստ ես համարում, թե՞ ալտրուիստ:
3. **Վերլուծի՛ր** Ն6-ի բանաստեղծությունը:

ԳԼՈՒԽ 5

Մարդ և գեղեցկություն

Ուսումնասիրելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1 | բնութագրել գեղեցիկն ու տգեղը՝ դրանք դիտարկելով բնության, հասարակության և մշակույթի համատեքստում.

2 | խոսել քեզ շրջապատող իրերի գեղեցկության, դրա պատճառած հաճույքի մասին.

3 | պատմել «բարձր արվեստի» և «ցածր արվեստի» հարաբերության շուրջ առկա կարծիքների մասին.

4 | քննարկել ճաշակի հարցը:

Լատինական ասացվածքն ասում է. «Ճաշակի մասին չեն վիճում»: Հայաստանում գերադասում ենք ասել՝ ճաշակին ընկեր չկա: Կարծես ճաշակը յուրաքանչյուր մարդու անձնական հատկություններից մեկը լինի: Գուցե այն ի ծնե տրված է և ենթակա չէ քննարկման, բայց սա հարցի մի կողմն է: Մյուսը հաճախ հնչող պնդումներն են լավ կամ վատ ճաշակի մասին: Ինչ-որ բնակարան մեզ կարող է թվալ կահավորված զուսպ ու ճաշակով կամ շքեղ, բայց անճաշակ: Ինչ-որ մեկի մասին կարող են ասել, որ նա ճաշակով է հագնվում կամ, ընդհակառակը, որ նա ճաշակ չունի: Գրքի շուրջ երկար վիճաբանությունից հետո զրուցակիցները կարող են եզրակացնել՝ մեր ճաշակները տարբեր են... Ընդ որում՝ ճաշակի մասին նման արտահայտություններ կարող են հնչել գրեթե ամեն ինչի առնչությամբ՝ հագուստից մինչև քաղաքային միջավայր, խոհանոցային սարքավորումից մինչև կինոնկար:

Նկատենք, որ «ճաշակ» բառը տարբեր լեզուներում այսպիսի փոխաբերական իմաստներով օգտագործվում է արդեն մի քանի հարյուր տարի: Չէ՞ որ բառի սկզբնական իմաստը բառարանային բացատրությամբ վերաբերում է կերակրի և ըմպելիքի համից ստացված տպավորությանը: Այդուհանդերձ, բոլոր դեպքերի համար ընդհանուր է այն, որ բառը կապվում է հաճույքի կամ տհաճության զգացողության հետ: Թեև պետք է նկատել, որ նույն բառով մենք անվանում ենք հաճույքի միանգամայն տարբեր դրսևորումներ. հաճույքով շփվում ենք մեր զրուցակցի հետ, հաճույքով ուտում ենք ինչ-որ բան, հաճույքով խաղում ենք ֆուտբոլ կամ համակարգչային խաղ, հաճույքով գիրք ենք կարդում կամ լսում երաժշտություն և այլն:

Լավ ճաշակ ունենալ-չունենալու հարցը հաճախ ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ խոսքը գեղեցկությունը գնահատելու մասին է: Եվ գեղեցկությունն է իր տարբեր արտահայտություններով համարվում հաճույքի կամ բավականության կարևոր աղբյուրներից մեկը:

5.1 Ի՞նչ է գեղեցկությունը

Գեղեցկության ու գեղեցիկի մասին խոսում ենք ամենատարբեր առիթներով: Գեղեցիկ կարող է լինել բնության մի հատված կամ երևույթ՝ արևածագը, ջրվեժը, ծաղկած ծիրանենին, աստղազարդ երկինքը: Մենք գեղեցկություն ենք գտնում արվեստի գործերում՝ երաժշտական ստեղծագործության, բանաստեղծության, գեղանկարի կամ ճարտարապետական կառույցի մեջ: Բայց գեղեցկությունը նաև մեր կյանքի անբաժան մասն է: Մենք գեղեցկության «դասեր» ենք ստանում տարբեր տեղերից՝ գեղեցիկ համարվող հին ու նոր շինություններից, տարբեր տեսակի խանութների ցուցափեղկերից, կինոաստղերից, նորաձևության ամսագրերից և այլն: Լինում են նաև հեռուստատեսային հաղորդումներ, որտեղ

փորձագետ համարվող մարդիկ հեռուստադիտողին սովորեցնում են գեղեցիկ ու նորաձև հագնվելու գաղտնիքները:

Ոչ միայն մարդկանց արտաքին տեսքը, այլև պահվածքն ու արարքները նույնպես հաճախ գնահատվում են «գեղեցիկ» կամ «տգեղ» բառերով: Ընդ որում՝ մարդուն գեղեցիկ անվանելով՝ կարող ենք նկատի ունենալ թե՛ ֆիզիկական գեղեցկությունը, թե՛ հոգևոր հատկությունները՝ ազնվություն, անշահախնդրություն, մեծահոգություն և այլն: Իսկ մարդկանց արարքները գնահատելիս գեղեցիկը կամ տգեղն ավելի շուտ բարոյական բնորոշումներ են, որոնց մասին «բարիք» և «չարիք» բառերի օրինակով խոսել ենք նախորդ գլխում: Սա ցույց է տալիս «գեղեցկություն» բառի իմաստային բազմազանությունը:

Մարդու մեջ կա բնական ձգտում դեպի գեղեցկությունը: Նա ցանկանում է ունենալ գեղեցիկ տեսք, իրեն շրջապատել գեղեցիկ իրերով, ապրել գեղեցիկ միջավայրում: Ակնհայտորեն* դա նրան հաճույք է պատճառում: Գեղեցկությունից ստացած դրական հույզերը հարստացնում են մեր կյանքը, ավելի արդյունավետ դարձնում մեր գործունեությունը: Իսկ բնության գեղեցկության և դրա պահպանման համար մարդկանց պատասխանատվության մասին կխոսենք առանձին:

Թեև գեղեցկության և արվեստի բնույթի ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունը, որ հայերեն կոչվում է **գեղագիտություն**, առաջ է եկել շատ ավելի ուշ, գեղեցկության պաշտամունքը երկարատև պատմություն ունի բազմաթիվ մշակույթներում: Հին Եգիպտոսում գեղեցիկի *(նեֆեր)* նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի մասին բազմաթիվ գրավոր վկայություններ են պահպանվել: Գեղեցիկը բարձրագույն բնորոշում էր անգամ աստվածների համար: Հին Հունաստանում մտածողները գեղեցիկ *(կալոս)* էին համարում և՛ տիեզերքը *(կոսմոս)*, և՛ կատարյալ համաչափություններ ունեցող մարմինը, և՛ արվեստի գործը: Իսկ հին հույն բանաստեղծ Հոմերոսի պոեմներում («Իլիական» և «Ոդիսական») կարելի է գտնել գեղեցիկի այն տարբեր իմաստները, որ օգտագործում ենք այսօր՝ մարմնի գեղեցկության բնութագրումից մինչև մարդկանց արարքների բարոյական գնահատականը:

Ուրեմն, ի՞նչ է գեղեցկությունը, ինչպե՞ս կարելի է բնութագրել գեղեցիկի մեր ապրումը կամ փորձառությունը, ի՞նչ առանձնահատկություններ ունի գեղեցիկի հարուցած հաճույքը, ինչո՞վ է տարբերվում հաճույքի ուրիշ տեսակներից, կարո՞ղ ենք որոշել այն հատկությունները, որոնք ունենալու դեպքում տվյալ առարկան կարող է համարվել գեղեցիկ: Գեղեցկությանը վերաբերող այս և այլ հարցեր դարեր շարունակ հետաքրքրել են մարդկանց, շարժել նրանց միտքը: Մե՛նք էլ շարժվենք առաջ:

Ն1 Գեղեցկության մասին երկու պատկերացումները



Պյութագորասի կիսանդրին, հունական բնօրինակի հռոմեական պատճենը

Գեղեցկության մեկնաբանության փորձերը կարելի է բաժանել երկու խմբի: Դրանք գեղեցկության հաճելի ապրումը բնորոշում են տարբեր ձևերով: Առաջինը պյութագորասյան ավանդույթն է, որը սկիզբ է առել Հին Հունաստանում: Դրա ակունքում հույն մաթեմատիկոս և փիլիսոփա Պյութագորասը (մոտ. 570–495 մ.թ.ա.) և նրա հետևորդներն են: Նրանց կարծիքով **գեղեցկության հարուցած հաճույքը պետք է ունենա սթափ բնույթ և առանձնանա որոշակի հատկություններով**: Օրինակ՝ նրանք համոզված էին, որ «աշխարհը գեղեցիկ է, քանի որ կա որոշակի չափ, համամասնություն, կարգ և ներդաշնակություն* նրա տարրերի միջև»: Նրանք նաև կարծում էին, որ երաժշտության մեջ կան նույն ներդաշնակությունները (հարմոնիա), որ ընկած են բնության հիմքում, և որ դրանք կարող են արտահայտվել թվերի միջոցով:



Էպիկուրոսի կիսանդրին, հունական բնօրինակի հռոմեական պատճենը

Մյուսներն ընդունում են, որ **մարդու զգացած բոլոր տեսակի հաճույքները կարող են առաջ գալ գեղեցկության շնորհիվ**: Այս ուղղությունը ևս ծնվել է Հին Հունաստանում: Այն կապվում է սոփեստների (փիլիսոփայական դպրոց կամ ուղղություն Հին Հունաստանում) և փիլիսոփա Էպիկուրոսի (341–270 մ.թ.ա.) հետևորդների հետ:

Մի կողմից գեղեցկությունը կարելի է բնութագրել այն հաճույքով, որ գեղեցիկ առարկայից ստանում է մարդը, իսկ մյուս կողմից՝ մատնանշելով այն հատկությունները, որոնք դարձնում են տվյալ առարկան գեղեցիկ: Ավելի ուշ շրջանում գեղեցկության ըմբռնումը ներառեց այս երկուսն էլ՝ թե՛ մարդու ստացած հաճույքի գաղափարը, թե՛ առարկայի հատկությունները:

Գեղեցկությունը հարուցում է հաճելի արձագանք, բայց, ինչպես գիտենք, հաճույք պատճառող ամեն բան չէ, որ գեղեցիկ է: Ուստի հարց է առաջանում՝ հնարավո՞ր է տարբերել գեղեցկության պատճառած հաճույքը ուրիշ տեսակի հաճույքներից: Մենք հաճախ ենք լսում «հոգևոր բավականություն», «գեղագիտական հաճույք» արտահայտությունները, որոնցով առանձնացվում են բավականության կամ հաճույքի տեսակները: Բայց իրականում հաճույքի տեսակներն իրարից տարբերելն այդքան էլ հեշտ գործ չէ:

Երկրորդ կարևոր հարցը հետևյալն է: Կարելի՞ է որոշել այն հատկությունները, որ անհրաժեշտ են, որպեսզի դրանք ունեցող առարկան համարվի գեղեցիկ: Նման հատկություններ գտնելու բոլոր փորձերը ձախողվել են տարբեր պատճառներով: Օրինակ՝ պատկերացնենք, որ իմացել ենք որևէ գեղեցիկ առարկայի բոլոր

հատկությունները, որոնց շնորհիվ այդ առարկան գեղեցիկ է: Պարզվում է, որ կարելի է գտնել մեկ ուրիշ առարկա, որն ունի այդ նույն հատկությունները, բայց գեղեցիկ չէ, այլ ճանձրալի: Կարող է լինել նաև մի երրորդ առարկա, որը գեղեցիկ է, բայց չունի այդ հատկությունները: Ուստի եզրակացնում ենք, որ առայժմ չի գտնվել գեղեցկությունը որոշելու որևէ հստակ կանոն:

Ի՞նչ է տգեղը

Գեղեցկության մասին մեր քննարկումը թերի կլինի, եթե չխոսենք տգեղության մասին: «Տգեղ» բառով բնորոշում ենք իրարից բավականին տարբեր բաներ: Տգեղ կարող է համարվել բնության առարկան, ճարտարապետական կառույցը, անհանդուրժելի հասարակական երևույթը, մարդու անվայելուչ արարքը:

Ամեն դեպքում տգեղությունը սովորաբար հասկացվում է որպես գեղեցկության հակադրություն: Եթե մեկը գնահատվում է որպես դրական արժեք, մյուսը համարվում է բացասական արժեք: Գեղեցիկը մարդուն տալիս է դրական, իսկ տգեղը՝ բացասական հույզեր՝ տհաճություն, հակակրանք, զզվանք: Եթե գեղեցիկ առարկան ձգում-գրավում է մեզ, ապա տգեղը վանում է: Այն աններդաշնակ է, կոպիտ, տձև, անճոռնի և այլն: Այդուհանդերձ, այստեղ չկա հստակ բաժանում: Նույն առարկան ոմանց թվում է տգեղ, ոմանց՝ գեղեցիկ:

Կա բանավեճ այն մասին, թե արդյոք բնությունը կարող է լինել տգեղ: Գուցե տգեղությունն առաջին հերթին մարդկանց գործունեության հետևանք է՝ քաղաքային աղբանոցները, հանքարդյունաբերության պատճառով աղճատված լեռներն ու պոչամբարների տակ մեռած բնությունը, օվկիանոսներում գոյացած պլաստիկե առարկաների բլուրները...

Ն1 Երևանի կասկադը և Թամանյան պուրակը

Առաջադրանք

1. Կասկադը Երևանի ամենագրավիչ վայրերից մեկն է թե՛ քաղաքի բնակիչների, թե՛ հյուրերի համար: **Նկարագրիր**, թե հատկապես ինչն է դարձնում Կասկադը գրավիչ: Ի՞նչ գիտես այնտեղ ցուցադրված արվեստի գործերի մասին: Արդյոք դրանք նպաստո՞ւմ են Կասկադի գրավչությանը:

2. **Բացատրիր**, թե ինչի մասին է «ոսկե հատում» արտահայտությունը, երբ է առաջ եկել: Գտե՛ք համացանցում նյութեր և **քննարկե՛ք** «ոսկե հատման» կիրառությունները արվեստի տարբեր ճյուղերում:

3. Գուցե նկատել եք, որ մարզական մեկնաբանները հաճախ են օգտագործում «գեղեցիկ» բառը՝ «գեղեցիկ հարված», «գեղեցիկ հնարք», «գեղեցիկ ցատկ», նույնիսկ՝ «գեղեցիկ հաղթանակ»: Կան այնպիսի մարզաձևեր, որոնց անունն արդեն հուշում է, որ դրանցում կա գեղեցկության տարր՝ գեղարվեստական մարմնամարզություն, գեղասահք: **Քննարկե՛ք** այն հարցը, թե կարող են գեղեցիկ լինել սպորտի ուրիշ ձևեր, օրինակ՝ ֆուտբոլը, բռնցքամարտը, թռիչք բարձրությունը, ջրացատկը, արագավազքը և այլ մարզաձևեր: Եթե այո՛, ապա ինչո՞վ: Ի՞նչ նշանավոր մարզիկներ գիտեք, որ մարմնավորում են գեղեցկությունը սպորտում:

5.2 Գեղեցկությունն արվեստում և բնության մեջ

Շատ փիլիսոփաներ և արվեստագետներ համարում են, որ գեղեցկության բարձրագույն մարմնացումը կարելի է գտնել արվեստում: Հռիփսիմեի տաճարին նայելիս, Կոմիտասի «Անտունին» լսելիս, Միսաք Մեծարենցի բանաստեղծությունները կարդալիս, Երևանի մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանի բարձրաքանդակները դիտելիս (քանդակագործ՝ Արտաշես Հովսեփյան) մարդիկ կարող են դրանք նկարագրել «գեղեցիկ» բառով: Ինչո՞ւ ենք մարդկանց ձեռքով պատրաստված այս և բազմաթիվ այլ առարկաներ, այդ թվում՝ ուրիշ մշակույթներում և տարբեր դարաշրջաններում ստեղծված, համարում գեղեցիկ:

Մենք արդեն բավականաչափ խոսել ենք գեղեցկության մասին: Մասնավորապես՝ նշել ենք Պյութագորասին և նրա հետևորդներին վերագրվող հայտնագործության մասին: Այն է՝ կա համապատասխանություն հիմնական երաժշտական ակորդների և որոշակի ամբողջ թվերի հարաբերությունների միջև: Եվ նրանք կարծում էին, որ գեղեցկությունը, այդ թվում՝ բնության մեջ, գալիս է **ներդաշնակությունից**:

Հին Հունաստանի մեկ ուրիշ մտածող՝ Արիստոտելը, ևս կարծում էր, որ գեղեցկությունը չափի և կարգի հարց է, որ առավել գեղեցիկն ի հայտ է գալիս այնտեղ, որտեղ մեծությունը զուգակցվում է բարձր կարգի հետ: Նա նաև զարգացնում է այն գաղափարը, թե արվեստի գործերը ստեղծվում են որպես իրական աշխարհում գտնվող իրերի նմանեցումներ: Այսինքն՝ ինչ-որ ձևով կրկնում են աշխարհում արդեն եղածը: Բայց ինչո՞ւ է արվեստի գործն ավելի գեղեցիկ, քան բնական առարկան: Քանի որ, ըստ Արիստոտելի, արվեստի գործի մեջ արվեստագետը կարող է ի մի բերել այնպիսի տարրեր, որոնք իրական աշխարհում ցրված են տարբեր իրերում: Այսպիսով, նա կստեղծի ավելի ամբողջական ու գեղեցիկ գործ: Արվեստի գործի ամբողջականությունն այստեղ գեղեցկությունը կազմող կարևոր հատկությունն է:

Գեղեցկությունն արվեստում

Սակայն **գեղեցկության մասին պատկերացումներն ու նախապատվությունները տարբեր մշակույթներում տարբեր են**: Ներկա հայկական մշակույթն ունի ավելի շուտ արևմտյան, քան արևելյան կողմնորոշում: Մենք համեմատաբար քիչ բան գիտենք Հնդկաստանի, Չինաստանի, Ճապոնիայի, Կորեայի մշակույթների՝ երաժշտության, նկարչության, պոեզիայի, թատրոնի և այլնի մասին: Օրինակ՝ ավանդական չինական երաժշտությունը մեզ կարող է լավագույն դեպքում անսովոր թվալ: Բայց մշակութային նախասիրությունները փոխվում են նաև ժամանակաշրջանից ժամանակաշրջան, սերնդից սերունդ: Մանավանդ մեր օրերում դա կատարվում է բավականին արագ:

Քսաներորդ դարում արվեստի մեջ առաջ եկած նոր ուղղությունները լիովին փոխեցին արվեստի մասին մեր պատկերացումները: «Ի՞նչն է դարձնում արվեստի գործը գեղեցիկ» հարցի փոխարեն կարևոր են դարձել ուրիշ հարցեր: Օրինակ՝ «Ի՞նչն է դարձնում արվեստի գործը իմաստալից կամ հասարակության համար արժեքավոր»:

Մենք կարող ենք հարցնել՝ մի՞թե արվեստն արժեքավոր չէ այն բանով, որ հաճույք է պատճառում մարդկանց, որ արվեստի գործերը մեզ հաղորդում են ամենատարբեր հույզեր: Բայց գիտենք, որ աշխարհում կան շատ ուրիշ բաներ, որ և՛ հաճույք են պատճառում, և՛ հույզեր հաղորդում: Մենք կարող ենք ասել և ճիշտ կլինենք, որ արվեստից ստացած հաճույքն ու հույզերն առանձնահատուկ են: Կարող ենք ավելացնել, որ արվեստին հանդիպելը կատարելագործում, նրբացնում է մեր զգայարաններն ու ապրումները: Բայց ոմանք էլ ցանկանում են, որ արվեստի գործերը նաև օգնեն մարդկանց՝ ուրիշ կողմից նայելու իրենց կյանքի փորձին, ավելի լավ հասկանալու այն:

Ինչևէ, արվեստի գեղեցկությունը դեռևս նշանակալի դեր է խաղում մեր կյանքում: Նրա ուժն է, որ շարունակում է մեզ ձգել դեպի թանգարաններ ու ցուցասրահներ, օպերային թատրոններ ու համերգային դահլիճներ:

Ն2 «Սասնա ծռերը» արվեստի ու գրականության մեջ

«Սասունցի Դավիթ» («Սասնա ծռեր») էպոսին անդրադարձել են բազմաթիվ հայ գրողներ և արվեստագետներ: Էպոսի գրական մշակումներից ամենահայտնին Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» պոեմն է: Շատ հայտնի են այդ պոեմի համար նկարիչ Հակոբ Կոջոյանի կատարած նկարազարդումները:

«Սասունցի Դավթի»՝ Հակոբ Կոջոյանի նկարազարդումներից

Թերևս ամենահայտնին քանդակագործ Երվանդ Քոչարի ստեղծած «Սասունցի Դավիթ» արձանն է, որը տեղադրված է Երևանի երկաթգծի կայարանի հարևանությամբ:

Սասունցի Դավթի արձանը Երևանի երկաթգծի կայարանի հարևանությամբ, 1959 թ., քանդակագործ՝ Երվանդ Քոչար, ճարտարապետ՝ Միքայել Մազմանյան

Պակաս հայտնի են քանդակագործ Արտաշես Հովսեփյանի ստեղծած բարձրաքանդակները, որ գտնվում են Երևանի մետրոյի «Սասունցի Դավիթ» կայարանում:



Հատված Արտաշես Հովսեփյանի բարձրաքանդակներից, 1981 թ.

«Սասունցի Դավթի»՝ Երվանդ Քոչարի նկարազարդումներից

Ոչ բոլորը գիտեն նաև էպոսի համար Քոչարի կատարած նկարազարդումների մասին:

Այսպիսով, մենք հիշատակեցինք էպոսին վերաբերող երկու նկարազարդման, մեկ արձանի և բարձրաքանդակների մասին: Սրանք բոլորն էլ արվեստի իսկական գործեր են, բայց իրարից շատ տարբեր ձևերով են պատմում էպոսի, էպոսի գլխավոր հերոսի՝ Դավթի մասին:

Առաջադրանք

1. Համարվում է, որ արվեստի գործերի մասին գիտելիքն օգնում է ավելի լավ հասկանալ արվեստը, ավելի խոր զգալ արվեստի գործերի գեղեցկությունը: **Նշիր**, թե ինչ ես կարդացել կամ ինչ գրքեր գիտես մեծ արվեստագետների, գրողների ու երաժիշտների, արվեստի նշանավոր գործերի մասին: Կամ ինչ ֆիլմեր ես դիտել դրանց մասին: **Վերապատմիր**, թե ինչ նշանավոր թանգարանների մասին ես լսել կամ կարդացել:

2. **Նշիր**, թե ինչ միջոցներով (գրքեր, հեռուստատեսություն, համացանց, այց թանգարան) ես ծանոթացել արվեստի ստեղծագործություններին, և թե ովքեր ու ինչպես են քեզ օգնել այդ հարցում:

3. Արդյոք երբևէ լսե՞լ ես արևելյան (օրինակ՝ չինական) կամ արևմտյան (օրինակ՝ իտալական) երաժշտություն: **Նկարագրիր** քո տպավորությունները: **Նկարագրիր**, թե ինչ տարբերություններ կան ժողովրդական և դասական երաժշտությունների միջև:

4. Կատարե՛ք հարցումներ, զրուցե՛ք մեծահասակների հետ և դասարանում **քննարկե՛ք**, թե ինչ տարբերություններ կան ձեր և ավագ սերնդի մշակութային նախապատվությունների՝ սիրելի կինոնկարների, երաժշտության, տեսանյութերի, խաղերի և այլնի միջև:

5. Մի քանի բառով **բնորոշե՛ք** Ն2 -ում նշված աշխատանքներից յուրաքանչյուրը (ահա որոշ բառեր՝ հերոսական, առնական, հզոր, անողոք, մեղմ, սովորական, ժողովրդական, քնարական), **համեմատե՛ք** աշխատանքները և **հակադրե՛ք** իրար: Ո՞ր գործերն են ձեզ ավելի հարազատ. **մեկնաբանե՛ք** ձեր մոտեցումը:

Գեղեցկությունը բնության մեջ

Բնությունը եղել և բնության գեղեցկությունն էլ գնահատվել է արվեստից առաջ: Բայց պատմության ընթացքում շատ ավելի մեծ ուշադրություն է դարձվել արվեստի գեղեցկությանը: Այս իրադրությունը որոշ չափով փոխվեց բնապահպանական շարժումների, բնության ու շրջակա միջավայրի նկատմամբ ձևավորված նոր վերաբերմունքի արդյունքում: Իհարկե, այդ շարժումները բնության արժեքը չէին կապում միայն գեղեցկության հետ: Բայց դրանց շնորհիվ բնության գեղեցկությանը վերաբերող հարցերը նոր կարևորություն ստացան թե՛ գիտնականների, թե՛ առհասարակ հասարակությունների համար:

Բնության գեղագիտական գնահատումը որոշվում է այն հաճույքով կամ հիացմունքով, որ ստանում ենք բնության գեղեցկությունից: Իսկ հիմնականում ի՞նչ լեզվով, ի՞նչ բառերով ենք արտահայտում այդ գնահատումը: Թերևս առավել հաճախ օգտագործվում են «տեսարժան վայր», «գեղատեսիլ վայր», «բնության գեղեցիկ տեսարան» արտահայտությունները: Տեսարժան վայրը սովորաբար ենթադրում է նաև ինչ-որ ճարտարապետական կառույց, հին եկեղեցի կամ տաճար: Այս անվանումները երբեմն խոսում են ոչ միայն բնության գեղեցկության մասին, այլև օգտագործվում են որպես զբոսաշրջության գովազդի մաս: Ցավոք, նման տեսարժան վայրերում հանգիստը երբեմն հանգեցնում է ոչ թե բնության նկատմամբ սիրո և հոգատար վերաբերմունքի, այլ աղտոտման ու բնության շահագործման:

Մենք հաճախ լսում ենք նաև բնության **վեհության** մասին: Գրականության մեջ գովերգվում է հատկապես լեռների ու լեռնաշղթաների վեհությունը: Դրա համար հայերենում կան բազմաթիվ բառեր՝ վեհապանծ, վեհաշուք, վեհափառ, վեհատեսիլ, վեհասքանչ և այլն: Վեհությունն ավելին է, քան գեղեցկությունը և պատճառում է ո՛չ միայն հաճույք: Այն նշանակում է շատ ավելի մեծ մի բան. ասենք՝ բնության անսահմանությունը: Դրանից մարդ կարող է ստանալ մեծագույն բավականություն, բայց կարող է նաև

S1

Մարտիրոս Սարյան, Գազելներ, 1926 թ., պահվում է Մոսկվայի պետական Տրետյակովյան պատկերասրահում

Բնանկարները կերպարվեստում

Բնանկարը այն նկարն է, որում պատկերված է բնության ինչ-որ հատված: Տարբեր երկրներում ապրել և ստեղծագործել են բնանկարի բազմաթիվ հայտնի վարպետներ: Բնանկարներ ստեղծել են նաև հայ նկարիչները՝ Գևորգ Բաշինջաղյանը, Մարտիրոս Սարյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ: Նրանց աշխատանքներին կարելի է ծանոթանալ՝ այցելելով թանգարաններ, գտնելով ու դիտելով դրանք համացանցում և գրքերում:

իրեն զգալ փոքր, աննշան արարած այդ վեհության առաջ: Վեհությունը կարող է նույնիսկ տագնապ հարուցել, եթե նրա մեջ տեսնենք բնության ավերիչ ուժերը, որ արտահայտվում են բնական աղետների՝ փոթորիկների, ջրհեղեղների, երկրաշարժերի տեսքով:

Բնության գեղեցկություններին կարելի է ծանոթանալ արշավի միջոցով՝ քայլելով լեռներով ու անտառներով, լճերում նավակով լողալով, թռչնի թռիչքի բարձրությունից բնությունը դիտելով (լեռան գագաթին կանգնած, պարաշյուտով թռչելիս): Մյուս կողմից՝ նույնիսկ ամենաժամանակակից քաղաքում, ապրում ենք բնության մեջ: Մեր շուրջը փողոցի երկայնքով աճող ծառեր են, թռչուններ ու կենդանիներ: Մենք կարող ենք հիանալ արևածագով կամ մայրամուտով բարձրահարկ շենքի մեր բնակարանից կամ ավտոմեքենայի միջից: Բնության գեղեցկությունը մեզ շրջապատում է ամենուրեք:

Առաջադրանք

1. Գտի՛ր և **նկարագրի՛ր** S1-ում նշված հայ նկարիչների բնանկարները:
2. **Համեմատի՛ր**, օրինակ, Սարյանի և Հակոբյանի բնանկարները: **Բացատրի՛ր** դրանց տարբերությունը, **տարբերակի՛ր** պատկերված բնության գեղեցկության կողմերը:
3. Բնության անհաշիվ նկարագրություններ կան գեղարվեստական գրականության մեջ: **Առանձնացրո՛ւ** այնպիսի բանաստեղծություններ, որոնցում կան բնության պատկերներ: **Պարզաբանի՛ր**՝ դրանք ավելի շուտ բնության գեղեցկությա՞ն մասին են, թե՞ վեհության:
4. Մարդիկ գեղեցկություն գտնում են Երկիր մոլորակի բազմազան բնության բոլոր անկյուններում՝ լեռնային վայրում, անտառում, անապատում, օվկիանոսի ափին, տունդրայում: Հայաստանում նույնպես բնությունը բազմազան է: **Համեմատե՛ք** և **մեկնաբանե՛ք** բնության գեղեցկությունը մեր երկրի տարբեր շրջաններում: Ընտրե՛ք, օրինակ, Արարատյան դաշտը, Լոռին, Սյունիքը կամ այլ մարզեր, համայնքներ ու վայրեր: Այդ նպատակով գտե՛ք կամ ինքներդ արե՛ք լուսանկարներ:

5.3 Բարձր արվեստ և ցածր արվեստ

Ընդունված է իրարից տարբերել արվեստի երկու տեսակ՝ «բարձր արվեստ» և «ցածր արվեստ»: Ծանոթանանք այս տարբերակման մասին գոյություն ունեցող կարծիքներին:

Բարձր արվեստի մեջ մտնում են հռչակավոր թանգարաններում պահվող գեղանկարները, դասական երաժշտությունը, պոեզիան և այլն: Համարվում է, որ բարձր արվեստը մեզնից պահանջում է որոշակի գիտելիք, կենտրոնացում, ուշադրություն, գուցե նաև երևակայություն և այլն, որոնց կարիքը չի զգում ցածր արվեստը:

Ավելի դժվար է սահմանել երկրորդը, այսպես կոչված՝ ցածր արվեստը: Ամեն դեպքում այն աչքի է ընկնում պարզությամբ, հույզեր առաջացնելու անմիջականությամբ ու հեշտությամբ: Հայաստանում ցածր արվեստի կամ մշակույթի դեմ ուղղված քննադատության մեջ առավել հաճախ հիշատակվում են թերևս «ռաբիզ» երաժշտությունը և հեռուստատեսային սերիալները:

Նկատենք, որ ոմանք, խուսափելով վիրավորական «ցածր» բառից, գերադասում են այդ արվեստն անվանել «հանրամատչելի»: Ավելի քննադատական վերաբերմունք ունեցողները, ընդհակառակը, այն անվանում են «ոչ արվեստ»: Կա նաև փոքր-ինչ տարբեր իմաստ ունեցող մեկ այլ անվանում՝ «զանգվածային արվեստ», որը վերջին շրջանում հաճախ նույնացվում է ցածր արվեստի հետ:

Իհարկե, «բարձր» և «ցածր» ածականները պարզորոշ մատնանշում են հակադիր հատկություններ: Բայց այս տարբերակումը չպետք է նույնացնել լավի և վատի միջև բաժանման հետ: Բարձր արվեստի մեջ կան բազմաթիվ գեղանկարներ, բանաստեղծություններ, դասական երաժշտության գործեր, որ զուրկ են յուրահատկությունից, անհետաքրքիր են: Մյուս կողմից՝ ցածր կոչվող արվեստն ամբողջովին վատը չէ: Օրինակ՝ «Բիթլզ», «Փինք Ֆլոյդ» ռոք խմբերի, ֆրանսիական շանսոնի ներկայացուցիչներ Շառլ Ազնավուրի և Ժակ Բրելի բազմաթիվ ձայնագրություններ արվեստի հաջողված ու կարևոր նմուշներ են:

Բարձր արվեստի և ցածր արվեստի միջև սահմանը երբեք հստակ չի եղել: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ, օրինակ, մասսայական երգերը մտել են դասական կոմպոզիտորների գործեր: Մյուս կողմից՝ դասական երաժշտությունից վերցված շատ թեմաներ հնչում են կինոնկարներում, հայտնի նկարիչների նկարները հայտնվում են վերնաշապիկների վրա, օգտագործվում կենցաղային իրերի ձևավորման համար:

Ն3 Դասական և հանրամատչելի երաժշտություն

Դու հավանաբար լսել ես նշանավոր օպերային երգիչների՝ Լուչիանո Պավարոտտիի, Պլասիդո Դոմինգոյի և Խոսե Կարերասի համերգները, ասենք, հեռուստացույցով: Նրանք հանդես են եկել բազմաթիվ երկրներում՝ կատարելով ոչ միայն օպերային արիաներ, այլև ժողովրդական և այլ տեսակի երգեր: Դրա շնորհիվ նրանց կատարումները շատ ավելի լայն ընդունելության են արժանացել, քան հնարավոր կլիներ միայն օպերաներում հանդես գալով: Ոմանք կարծում են, որ դրանով նրանք արժեզրկում էին իրենց արվեստը: Մինչդեռ ուրիշները բարձր են գնահատում նրանց աշխատանքը՝ մարդկանց լայն շրջանակին հասցնելու բարձր արվեստի նմուշները: Նրանց ձայնը կոչվում է տենոր, որը երգչի ձայնի տեսակ է:

Ն4 Կերպարվեստ և լուսանկարչություն

Նիսեֆոր Նյեպսի «Տեսարան Լե Գրա առանձնատան պատուհանից» (1825/1826). լուսանկարը (հելիոգրաֆ) համարվում է ամենահինը պահպանվածների շարքում, պահվում է Հարի Ռենսոնի կենտրոնում, Տեխաս

Լուսանկարչության գյուտը կատարվել է մոտ 200 տարի առաջ: Ժամանակի ընթացքում այն բազմաթիվ տեխնոլոգիական փոփոխություններ է կրել: Փոխվել են նաև պատկերացումները լուսանկարչության բնույթի մասին: Այն երբեմն համեմատվում, երբեմն էլ հակադրվում է կերպարվեստին: Շատերին հետաքրքրող հարցերից մեկը հետևյալն է՝ արդյոք լուսանկարչությունն արվե՞ստ է: Այս հարցին դրական պատասխան փորձում է տալ «գեղարվեստական լուսանկարչություն» կոչվող ուղղությունը, որը հակադրվում է վավերագրական լուսանկարչությանը:

Առաջադրանք

1. **Մշակի՛ր** նյութեր և գրի՛ր փոքրիկ պատմություն այն մասին, թե ինչպես է Արամ Խաչատրյանն իր ստեղծագործություններում և մասնավորապես՝ դաշնամուրի ու նվագախմբի համար կոնցերտում օգտագործել ժողովրդական երգեր:
2. Պատմի՛ր, թե ինչ գիտես Ն3-ում նկարագրված տենորների եռյակի մասին, ինչպես ես ծանոթացել նրանց արվեստին: Համացանցում գտի՛ր նյութեր և թվարկի՛ր, թե տղամարդու և կնոջ ձայնի ուրիշ ինչ տեսակներ կան: **Համեմատի՛ր** դրանք:
3. **Կշռադատի՛ր**, թե Ն4-ում նշված ուղղության լուսանկարներն իսկապե՞ս կարող են համեմատվել գեղանկարչական գործերի հետ: Ստեղծի՛ր փոքրիկ պատմություն այս ուղղության մասին:

5.4 Ի՞նչ է ճաշակը. լավ ճաշակ և վատ ճաշակ

Վերջապես ժամանակն է վերադառնալու ճաշակի հարցին: Գուցե բարձր արվեստի և ցածր արվեստի միջև բաժանումը կարելի է բացատրել հենց լավ ճաշակի և վատ ճաշակի տեր մարդկանց գոյությամբ:

Ճաշակի մասին խոսում են թե՛ արվեստի մասին քննարկումներում, թե՛ առօրյա շփման մեջ: Մարդիկ գնահատանքի են արժանանում, երբ ի ցույց են դնում լավ ճաշակ արվեստում, հագուստի կամ ժամանցի ձևերի ընտրության մեջ: Եվ հակառակը, նրանք կարող են քննադատության ենթարկվել կասկածելի նախապատվությունների համար: Ճիշտ այդպես «անճաշակության» մեղադրանքով կարող են բացասական վերաբերմունքի արժանանալ հանրամատչելի մշակույթի որոշ ձևեր, օրինակ՝ հեռուստատեսային սերիալները: Սա նշանակում է, որ տվյալ հասարակության մեջ կան որոշակի հաստատված պատկերացումներ ճաշակի և անճաշակության մասին:

Մյուս կողմից, ինչպես տեսանք, ճաշակը համարվում է խիստ անհատական, որի մասին չեն վիճում: Արվեստի հայտնի գործերը, որ բավականություն են պատճառում շատերին, կարող են անտարբեր թողնել ուրիշներին: Ոմանք էլ հաճույք են ստանում այնպիսի բաներից, որոնք կրում են «վատ ճաշակ» պիտակը: Ինչպես գեղեցկության դեպքում, այստեղ էլ կարող ենք հարցնել՝ ինչպե՞ս են ձևավորվում ճաշակի չափանիշները: Արդյոք դրանք կախված են միայն մարդկանց գնահատականների՞ց: Իսկ գուցե իսկապես ավելի շուտ հաշվի են առնվում արվեստի գործի որոշակի հատկություններ՝ ներդաշնակություն, հավասարակշռություն, ուժ և այլն:

Ընդհանուր առմամբ ճաշակը կարող ենք նկարագրել որպես առարկաների նուրբ հատկությունները նկատելու, իսկ ավելի որոշակի՝ գեղեցիկը զգալու և այն տգեղից տարբերելու ընդունակություն:

Սննդի, խմիչքի և ըմպելիքների որակը գնահատող վարպետ համտեսողը կարող է դրանց մեջ նկատել այնպիսի հատկություններ, որոնք աննկատելի են ուրիշների համար: Ճիշտ այդպես էլ արվեստում լավ ճաշակ ունեցողը կարող է տարբերել բարձր որակներ ունեցող արվեստի գործերը՝ բանաստեղծությունը, գեղանկարը, երաժշտությունը:

Փաստորեն, սերտ կապ կա ճաշակի ու հաճույքի միջև: Եթե կա լավ և վատ ճաշակ, պետք է որ լինեն նաև հաճույքի տարբեր տեսակներ: Սովորաբար, հեշտ հաճույքի աղբյուրը շուտ էլ սպառվում է: Կան հաճույքներ, որ ավելի դժվարությամբ են ձեռք բերվում, բայց փոխարենը մնում են երկար ժամանակ: Դա ավելի շուտ վերաբերում է բարձր արվեստին: Ուրեմն իսկապե՞ս կարելի է խոսել հաճույքի տարբեր տեսակների, օրինակ՝ բարձր, «արժեքավոր» հաճույքի մասին: Իրականում տարբեր հաճույքների միջև սահմաններ գծելը՝ դասակարգելով բարձր արվեստից ստացած հաճույքը որպես բարձր, շատ դժվար է:

Ն5 Ի՞նչն է ազդում ճաշակի վրա

Մեր ճաշակը ձևավորվում և փոփոխվում է տարբեր ազդեցությունների շնորհիվ, որ կրում ենք առաջին հերթին ընտանիքում, ապա ու ավելի լայն միջավայրում, որտեղ ապրում ենք: Ժամանակակից մարդու կյանքում մեծ դեր է խաղում գովազդը: Այն մեզ հասնում է փողոցներում, համացանցում, հեռուստատեսությամբ: Լավ հայտնի է, որ գովազդը տարբեր իրերի ու ծառայությունների նկատմամբ վերաբերմունք ձևավորող հզոր միջոց է: Բայց այն ազդում է նաև մեր ճաշակի, գեղեցկության մասին պատկերացումների վրա, թեև հնարավոր է, որ մենք դա չենք էլ նկատում: Երբևէ մտածե՞լ ես քո ճաշակի մասին: Այն մասին, թե ինչ տեսակի գրականություն, երաժշտություն, նկարչություն, կինոնկարներ կամ հաղորդումներ ես սիրում և ինչու:

Առաջադրանք

1. **Նկարագրի՛ր**, թե ինչ չափով է արվեստը ներկա քո կյանքում:
2. **Բացատրի՛ր**, թե ինչ հանգամանքներ կամ ովքեր են ազդել քո ճաշակի ձևավորման վրա: Իսկ ի՞նչ կուզենայիր փոխել քո նախապատվությունների մեջ:
3. Օգտվելով Ն5 -ից՝ գտե՛ք և դասարանում **քննարկե՛ք** համացանցային, հեռուստատեսային կամ փողոցային գովազդի օրինակներ, որոնցում խոսվում է գեղեցկության, նուրբ ճաշակի, հաճույքի մասին: **Բացատրե՛ք**, թե ինչ չափով են դրանք ընդունակ դաստիարակելու լավ ճաշակ:
4. Կազմի՛ր քո մշակութային նախասիրությունների ցանկը և **գնահատի՛ր** ճաշակդ ըստ բարձր-ցածր սանդղակի:

ԳԼՈՒԽ 6

Մարդ և իրավունք

Ուսումնասիրելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1 | ներկայացնել իրավունքի իմաստն ու պատմական ճանապարհը.

2 | մեկնաբանել, թե ինչպես է իրավունքն ազդում մեր կյանքի վրա.

3 | առանձնացնել մարդու՝ տարիքով պայմանավորված իրավունքները.

4 | տարբերակել իրավական ու բարոյական նորմերը, օրենքների նշանակությունը.

5 | քննարկել մարդու հիմնարար իրավունքներն ու ազատությունները:

Հաճախ ենք լսում. «Դու իրավունք չունես անելու ինչ-որ բան»: Բայց ի՞նչ է իրավունքը: Ի՞նչ կապ ունի այն մեր կյանքի հետ: Ծուտով կբացահայտենք, որ իրավունքի հետ գործ ենք ունենում ամեն քայլափոխի:

6.1 Ի՞նչ է իրավունքը

Իրավունքի իմաստն ու դերը

Հասարակության մեջ մարդիկ ունենում են տարբեր ցանկություններ և կարիքներ: Այդ պատճառով հաճախ ծագում են բախումներ՝ վեճեր ու հակասություններ: Որպեսզի «ուժեղները» չպարտադրեն իրենց կամքը «թույլերին», անհրաժեշտ է պայմանավորվել միասին ապրելու՝ համակեցության կանոնների մասին: Այդ կանոնների շնորհիվ է, որ «ուժեղի իրավունքի» փոխարեն գործում է «իրավունքի ուժը»: Այսպիսով, կանոնները մարդկանց միջև պայմանավորվածություններ են, որոնք մեկ բառով անվանում են իրավունք:

ԻՐԱՎՈՒՆՔ

Այն կանոնների ամբողջություն է, որոնց միջոցով մարդիկ կարգավորում են միմյանց միջև հարաբերությունները: Իրավունքը թույլ է տալիս կենսագործել մեր ազատությունները և ճանաչել պարտականությունները: «Իրավ» բառը նշանակում է *ճշմարիտ*, իսկ «իրավունք» բառը՝ *ճշմարիտ կամ իրավացի լինել*:

Իրավական նշանակում է *իրավունքի վրա հիմնված*:

Իրավունքները լինում են տարբեր: Օրինակ՝ երեխաների իրավունքներ, աշխատանքային իրավունքներ, բնական իրավունքներ, հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքներ և այլն:

Ն1 **Իրավունքը մեր առօրյայում**

Այստեղ պատկերված են տարբեր իրավիճակներ, որոնցում խախտվում են կանոնները:

Չափահաս մարդ և հասուն քաղաքացի

Չափահաս մարդը 18 տարեկան դարձած մարդն է: Այդ տարիքից նա արդեն գործունակ է, կարող է աշխատել և պատասխանատու լինել իր բոլոր արարքների համար: Նա սկսում է օգտվել քաղաքացու բոլոր իրավունքներից և մասնակցել ընտրություններին:

Չափահասության տարիքը տարբեր երկրներում կարող է տարբեր լինել:

Հասուն քաղաքացին այն մարդն է, որը ոչ միայն չափահաս է, այլև ունակ ինքնորոշվել և դատողություններ անել: Նա դատողունակ է և կարող է պատասխանատվություն ստանձնել ոչ միայն իր, այլև սեփական հասարակության համար: Ժողովրդավարական երկիրը, ինչպիսին Հայաստանն է, հենվում է հասուն քաղաքացիների վրա, ովքեր հետաքրքրվում են պետության քաղաքական հարցերով և մասնակցում այդ հարցերի լուծմանը: Սեփական իրավունքները գիտակցող քաղաքացուն համարում են **իրավագիտակից քաղաքացի**:

Ն2 Իրավական հասունացման աստիճանները



Իրավունքի ընկալումը տարբեր երկրներում

Միևնույն իրավունքը կարող է տարբեր երկրներում ուրիշ կերպ ընկալվել և կիրառվել: Օրինակ՝ երեխայի լսված լինելու իրավունքը: Հայաստանում այդ իրավունքը վերապահում են 10 տարին լրացած երեխաներին, այն էլ՝ սահմանափակ թվով հարցերի շուրջ: Ֆինլանդիայում, Դանիայում, Ծվեդիայում՝ լսված լինելու իրավունք ունի ցանկացած տարիքի երեխա, որը կարող է գիտակցաբար արտահայտվել: Իսկ Պակիստանում այս իրավունքը մեկնաբանում են անչափահասության սահմաններում և խիստ վերապահումով են լսում երեխաներին:

ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է: Ծննդյան պահից մարդն ունենում է իրավունքներ, սակայն որոշ իրավունքներ ձեռք է բերում տարիքի ընթացքում:

ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, պայմանագրեր կնքելու և աշխատանքային պարտականություններ ստանձնելու ունակությունն է:

ՀՀ օրենք երեխայի իրավունքների մասին (29 մայիսի, 1996 թ.)

ՀՀ ընտանեկան օրենսգիրք (9 նոյեմբերի, 2004 թ.)

Առաջադրանք

1. **Ն1**-ում պատկերված են տարբեր կանոնների խախտումներ:

   ա) Բնութագրիր այդ խախտումների ծանրությունը:

   բ) Դասակարգիր այդ խախտումներն ըստ ծանրության չափանիշի (1-ը՝ ծանրագույն խախտում, 5-ը՝ ամենաթեթև խախտում):

   գ) Հիմնավորիր քո ընտրած դասավորությունը:

   դ) Համեմատիր այդ դասավորությունն ընկերներիդ ընտրության հետ:

2. **Նկարագրիր**, թե ինչու են կանոնները կարևոր հասարակության մեջ մարդկանց համակեցության (միասին ապրելու) համար:

3. **Ն2**-ի օգնությամբ **նշիր** անչափահաս մարդուն թույլատրված մի քանի գործարքներ:

4. Քո բառերով **բացատրիր**, թե ինչ է իրավունքը:

5. Կարդա՛ և **մեկնաբանիր** Հ. Թումանյանի «Չարի վերջը» հեքիաթը իրավագիտակցության տեսանկյունից:

6.2 Իրավական և բարոյական նորմեր

Երբ կանոնն ամրագրվում է օրենքում, այն դառնում է իրավական **նորմ՝** օրինականացված կանոն: **Իսկ նորմատիվ նշանակում է կանոններ՝ նորմեր սահմանող**:

Կան **պարտադիր և ոչ պարտադիր կանոններ՝** իրավական և բարոյական նորմեր: Օրինակ՝ եթե խախտես **սեղանի շուրջը նստելու կանոնները**, մարդիկ քեզ ցույց կտան, որ դու սխալ ես անում, բայց դա պատասխանատվություն չի ենթադրում: Դրանք կոչվում են բարոյական նորմեր, որոնք ձևավորում են մարդիկ իրենց համակեցության ընթացքում:

Կարևոր է, որպեսզի որոշ իրավունքներ ու նորմեր ամրագրված լինեն պետության օրենքներում: Օրենքները պարտադիր կարգավորումներ են, որոնք սահմանում են միասին ապրելու կանոններն իրավական պետության մեջ: Պարտադիր են միայն այն իրավունքներն ու նորմերը, որոնք ամրագրված են օրենքներում: Դրանք կոչվում են իրավական նորմեր: Օրինակ՝ եթե խախտես ճանապարհային երթևեկության կամ առևտրի կանոնները, ապա կարող ես տույժի ենթարկվել օրենքում գրված չափով: Օրենքներն ընդունում է ժողովրդի ընտրած օրենսդիր մարմինը՝ Ազգային ժողովը: Պետությունների մեծ մասն ունի մայր օրենք, որը կոչվում է Սահմանադրություն: Ոչ մի օրենք չի կարող հակասել Սահմանադրությանը, քանի որ այն իրավաբանորեն բարձր է բոլոր օրենքներից:

Եթե ինչ-որ մեկը խախտում է ընդունված օրենքը, ապա պետությունը կարող է հարկադրանք գործադրել և պատասխանատվության ենթարկել, բայց միայն օրենքով նախատեսված ձևով ու չափով: Դա անում են պետական մարմինները՝ ոստիկանությունը կամ դատարանները: Սովորաբար տարբեր մարդկանց միջև վիճելի հարցերը քննվում են դատարանում:

Ն3 Իրավունքի աղբյուրները

Կանոնները ստեղծվում են սովորություններից, ավանդույթներից կամ կենցաղից և ցույց են տալիս, թե այդ հասարակության համար ինչն է համարվում ճիշտ կամ ցանկալի վարքագիծ: Իրավունքի աղբյուրներից են **նորմատիվ-իրավական ակտերը***, **իրավական սովորույթն ու նախադեպը**:

Նորմատիվ-իրավական ակտեր են օրենքները, կառավարության որոշումները, նախագահի հրամանագրերը, նախարարների հրամանները, ավագանու որոշումները կամ այլ մարմինների և պաշտոնատար անձանց կողմից ընդունված փաստաթղթերը, որոնք պարունակում են վարքագծի պարտադիր կանոններ

անորոշ թվով մարդկանց համար: Օրինակ՝ նորմատիվ-իրավական ակտ է Երեխայի իրավունքների մասին ՀՀ օրենքը, Հանրակրթության մասին ՀՀ օրենքը:

Իրավական սովորույթը պատմությունից եկած վարքի այն չգրված կանոններն են, որոնք այնքան հաճախ են կիրառվել, որ պետությունն ընդունել է դրանք: Իրավական սովորույթը չի կարգավորվում իրավունքով, այն փոխանցվում է սերնդեսերունդ և կիրառվում մարդկանց կողմից սովորության ուժով: Սովորության հեղինակությունը հիմնվում է հետևյալ բանաձևի վրա. այդպես գործել են բոլորը և միշտ: Այդ կանոնները միասին անվանում են սովորութային իրավունք: Օրինակ՝ սովորութային իրավունք է նախնական պայմանավորվածությունը գործարք կնքելու վերաբերյալ առանց դրա փաստաթղթավորման:

Նախադեպն անցյալում եղած այն դեպքն է, որի պատճառով փոխվում են վարքագծի կանոնները: Հիմնականում նախադեպ է դառնում դատարանի կողմից կոնկրետ գործի վերաբերյալ կայացրած որոշումը, որը սահմանում, փոփոխում կամ չեղյալ է համարում իրավական նորմերը և դրանից հետո կրում համապարտադիր բնույթ նմանատիպ գործերի լուծման համար: Օրինակ՝ նախադեպ է համարվում որոշ երկրներում 10 տարին չլրացած (ինչպես պահանջում է օրենքը)՝ 8 տարեկան երեխայի կարծիքը հաշվի առնելը ծնողների ամուսնալուծության դեպքում, թե որ ծնողի հետ է ցանկանում ապրել երեխան:

Առաջադրանք

1. **Նշիր** բարոյական և իրավական նորմերի օրինակներ:
2. **Նկարագրիր**, թե ինչպես են փոխվել իրավունքները ժամանակի ընթացքում:
3. **Բնութագրիր** իրավունքի ընկալումներն աշխարհի տարբեր ծայրերում:
4. **Պարզաբանիր**, թե ինչ նորմերով են կարգավորվում մարդկանց միջև հարաբերությունները:
5. **Բացատրիր**, թե երբ է առաջանում մարդկանց հարաբերություններն իրավունքով կարգավորելու անհրաժեշտությունը:
6. Համացանցից գտիր **Ն3**-ում նշված իրավունքի աղբյուրների օրինակներ և **քննարկիր** դրանց նշանակությունը մեր կյանքում:

6.3 Մարդու իրավունքների և ազատությունների պատմությունը

Իրավունքները միշտ տրված չեն եղել: Մարդիկ պատմության ընթացքում շատ իրավունքներ նվաճել են երկարատև պայքարի արդյունքում:

Մարդու իրավունքների գաղափարը տարածում է գտել Հին Բաբելոնից մինչև Հնդկաստան, Անտիկ կամ Հին Հունաստան և Հին Հռոմ: Փիլիսոփաներ Արիստոտելն ու Պլատոնը, խոսելով բնական իրավունքի մասին, համարում էին, որ մարդն ի ծնե ունի բնական իրավունքներ: Մարդու իրավունքների առաջին փաստաթուղթը Պարսկաստանի թագավոր Կյուրոս Մեծի կողմից մ.թ.ա. 539 թվականին հայտարարված և կավե գլանի վրա փորագրված հռչակագիրն է: Գրավելով Բաբելոն քաղաքը՝ նա ազատեց ստրուկներին, հայտարարեց, որ բոլոր մարդիկ իրավունք ունեն ընտրելու իրենց կրոնը, և սահմանեց հավասարություն: Իրավունքների համար կարևոր հետք է թողել Անգլիայում 1215 թվականին ընդունված Ազատությունների մեծ խարտիան (լատիներեն՝ Magna Carta Libertatum): Անգլիայի Հովհան Անհող թագավորին ազնվականները ստիպեցին ստորագրել մի հրովարտակ, որը սահմանում էր քաղաքացիների սեփականության, ժառանգության և այլ իրավունքներ, սակայն միայն ազնվականների համար:

Ն4 Իրավունքների նվաճման ժամանակագրությունը

մ.թ.ա. 539
Կյուրոս Մեծի հռչակագիր

1215 թ.
Ազատությունների մեծ խարտիա

1773 թ.
Որոգայթ Փառաց, Շահամիր Շահամիրյան

1776 թ.
ԱՄՆ անկախության հռչակագիր

1789 թ.
Ֆրանսիական հեղափոխություն
Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր

1948թ.
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

Հիմնարար իրավունքների մասին հայկական առաջին նախագիծը

Հայկական իրականության մեջ սահմանադրական իրավունքի նորմերի առաջին ամբողջական փաստաթուղթն է համարվում 1773 թվականին հայ լուսավորիչ Շահամիր Շահամիրյանի հրատարակած «Որոգայթ Փառաց» աշխատանքը: Այն լույս է տեսել Հնդկաստանի Մադրաս քաղաքում և ներկայացնում է ապագա անկախ Հայաստանի հասարակական-պետական կառուցվածքը, քաղաքացիների իրավունքներն ու պարտականությունները:

Ամերիկայի անկախության հռչակագիրը

Իրավունքների համար պայքարը սովորաբար սկսվում է այն ժամանակ, երբ իշխանությունները չարաշահում են իրենց ուժն ու ազդեցությունը: 1776 թվականին Ամերիկան նվաճեց իր անկախությունը՝ ազատվելով Անգլիայի գաղութատիրությունից և պարտադրված բարձր հարկերից: Ամերիկայի անկախության հռչակագրում տեղ է գտել հետևյալ դրույթը. «Բոլոր մարդիկ ստեղծված են հավասար և Արարչից օժտված են որոշակի անօտարելի իրավունքներով, որոնց շարքին են դասվում կյանքի, ազատության և երջանկության ձգտելու իրավունքները»:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ ամերիկյան տարբեր նահանգներում դեռ երկար տասնամյակներ մարդիկ պայքարում էին ստրկության դեմ՝ մինչև 1865 թվականին այն ամբողջությամբ վերացվեց:

Ֆրանսիական հեղափոխությունն ու քաղաքացու իրավունքները

Գրեթե նույն ժամանակ Ֆրանսիայում մարդիկ դուրս եկան պայքարի միապետության դեմ՝ հանուն ազատության, հավասարության և եղբայրության: Ֆրանսիական հեղափոխության այս արժեքները 1789 թվականի օգոստոսի 26-ին ամրագրվեցին Ազգային ժողովի ընդունած *Մարդու և քաղաքացու իրավունքների* հռչակագրում: Դրանով ճանաչվեց մարդու ազատությունն ու հավասարությունը ծնված օրվանից, բոլորի հավասարությունն օրենքի առաջ, մտքի և արտահայտվելու ազատությունը:

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը

1948 թվականի դեկտեմբերի 10-ին Միացյալ ազգերի կազմակերպության (ՄԱԿ) Գլխավոր ասամբլեայում ընդունվեց Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Այն նպատակ ուներ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավերածություններից հետո այլևս թույլ չտալ նման բան: Առաջին հոդվածում ասվում է. «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով»: Մինչև օրս պետություններն իրենց Սահմանադրությունների* և օրենքների համար օգտվում են այս Հռչակագրից՝ որպես մարդու իրավունքների հիմնական փաստաթուղթ:

Ն5

Մարդկանց համընդհանուր իրավունքները

Այս իրավունքների մի մասն ամրագրված է օրենքներում և միջազգային համաձայնագրերում: Սակայն իրավունքների համար պայքարը շարունակվում է ամեն օր:

1 | Ազատության և կյանքի իրավունք
2 | Ստրկության արգելում
3 | Խտրականության արգելում
4 | Խոշտանգման* արգելում
5 | Քաղաքացիության իրավունք
6 | Սեփականության իրավունք
7 | Խղճի ազատության իրավունք
8 | Խոսքի ազատության իրավունք
9 | Հավաքների ազատության իրավունք
10 | Ընտրելու իրավունք
11 | Կրթության իրավունք

Առողջ շրջակա միջավայրի և կրթության իրավունք

Աշխարհի շատ երկրներում մարդիկ զրկված են մաքուր խմելու ջուր ու առողջ շրջակա միջավայր ունենալու հնարավորությունից և պայքարում են վնասակար գործարանների աշխատանքի դեմ: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 2022 թ. հուլիսի 28-ին ընդունել է մի որոշում, որի համաձայն՝ մաքուր, առողջ և կայուն շրջակա միջավայրի հասանելիությունը հռչակվում է որպես մարդու համընդհանուր իրավունք:

Կրթություն ստանալու անհավասար հնարավորությունները հանգեցնում են անարդարության հասարակության մեջ: Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 38-րդ հոդվածը սահմանում է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է»:

Ն6 Մաշտոցի պուրակի պայքարը

2012 թ. հունվարին Երևանի քաղաքապետը որոշեց Մաշտոցի պուրակի կանաչ տարածքում կառուցել խանութներ: Դրանք վնասում էին զբոսայգու ծառերին: Լսելով այդ մասին՝ մի քանի քաղաքացի կազմակերպեց բողոքի ցույց՝ պահանջելով չփչացնել կանաչ այգին: Շուտով նրանց միացան հարյուրավոր այլ քաղաքացիներ, սկսվեց անժամկետ նստացույց շինարարական հրապարակում: Մասնակիցներն իրենց անվանում էին ինքնորոշված քաղաքացիներ: Նրանք հիշեցնում էին առողջ միջավայրում ապրելու ու հանրային տարածք ունենալու իրենց իրավունքի մասին և մատնանշում էին այդ իրավունքներն ամրագրող օրենքները: Մարտի 8-ին պայքարին մասնակցող կանայք գրավեցին Մաշտոցի պուրակում կառուցվող կրպակները՝ կրկնելով այգին ազատագրելու իրենց պահանջը: Այգում ամեն օր

ինքնաբուխ համերգներ ու ցուցահանդեսներ էին կազմակերպվում: Ոստիկանությունը շուրջօրյա հերթապահում էր պուրակում: Ի վերջո, երեք ամիս տևած նստացույցից հետո քաղաքապետարանը չեղարկեց իր որոշումը: Մայիսի 1-ին կիսակառույց կրպակները քանդվեցին:

Այժմ էլ պուրակում տեղադրված հուշաքարը վկայում է 90-օրյա պայքարի մասին՝ հանուն իրավունքների վերահաստատման:

Առաջադրանք

1. **Ն4**-ի օգնությամբ **ներկայացրու** իրավունքների նվաճման կարևոր իրադարձությունները և **մեկնաբանիր** դրանց պատմական նշանակությունը:
2. **Գտիր տեղեկություններ** համացանցից **Ն5**-ում նշված իրավունքների մասին և **ներկայացրու** դրանք:
3. **Դասակարգիր** իրավունքներն ըստ կարևորության և **հիմնավորիր** քո դիրքորոշումը:
4. **Ուսումնասիրիր** և մյուսների հետ պաստառի վրա կազմիր մտապատկեր մարդկության պատմության մեջ մարդու իրավունքների և դրանց հիմքում ընկած արժեքների մասին:
5. Կարդա՛ և **մեկնաբանիր** Հ. Թումանյանի «Իմ ընկեր Նեսոն» պատմվածքը կրթության իրավունքի տեսանկյունից:
6. **Մեկնաբանիր** այն իրավունքները, որոնց նվաճման համար տեղի ունեցավ Մաշտոցի պուրակի պայքարը՝ օգտվելով **Ն6**-ից:
7. **Գտե՛ք** **Ն6**-ի նմանությամբ օրինակներ Ձեր համայնքում և **մշակե՛ք** լուծումներ այդ խնդրի համար:
8. **Քննարկե՛ք** մարդու իրավունքներն ու դրանց հիմքում ընկած արժեքների և իրավահավասարության հետ կապված հարցերը: Գրե՛ք վերլուծական աշխատանք այդ մասին:

ԳԼՈՒԽ 7

Մարդ և տնտեսություն

Ուսումնասիրելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1| բացատրել, թե ինչպես կարելի է համադրել քո և ուրիշների կարիքները, ցանկություններն ու պահանջմունքներն այն պայմաններում, երբ ռեսուրսները սակավ են.

2 | նկարագրել արտադրության, բաշխման, փոխանակման և սպառման գործընթացները.

3 | համադրել անձնական և ընտանեկան եկամուտներն ու ծախսերը, բյուջե պլանավորել՝ հաշվի առնելով հնարավոր վտանգները.

4 | բացատրել ապագայի համար ներկայում խնայողություններ անելու նշանակությունը:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ



ԲԱՐԻՔՆԵՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Երբևէ մտածե՞լ ես, թե որտեղից խանութներում այն բոլոր ապրանքները, որ դու գնում ես: Ո՞վ է թխում հացը, ինչի՞ց է պատրաստված գրիչը, ո՞վ և որտեղի՞ց է բերում խնձորը կամ կաթը: Երբ քո ծնողները կամ տատիկն ու պապիկը գնում են գործի և փող վաստակում, ինչո՞վ են նրանք այնտեղ զբաղվում, ի՞նչ արդյունք է տալիս նրանց արած աշխատանքը, ո՞ւմ է հարկավոր այդ արդյունքը, և ինչպե՞ս են այն օգտագործում: Այս բոլոր հարցերը վերաբերում են մարդկային կյանքի մի ոլորտի, որն անվանում ենք տնտեսություն: Իսկ թե ինչպես է տնտեսությունն աշխատում, ինչ գործընթացներ է ներառում և ինչպես է փոփոխվում ժամանակի ընթացքում, կիմանաս շուտով:

7.1 Տնտեսության նշանակությունը մարդու կյանքում և մեր դերը տնտեսության մեջ

Մեր դերը տնտեսության մեջ

Որքան ավարտին են մոտենում դպրոցական տարիները, այնքան ավելի հաճախ են աշակերտին հարցնում՝ **բա ի՞նչ ես դառնալու**, այլ կերպ ասած՝ **ի՞նչ մասնագիտություն ես ընտրելու**: Մասնագիտության ընտրությունը շատ կարևոր նշանակություն ունի մեր կյանքում. **այն որոշում է, թե ապագայում ինչ դեր ենք ունենալու տնտեսության մեջ**:

Հայտնի է ատամիատիկի ծեսը, որը կատարվում է մանկան առաջին ատամը դուրս գալուց հետո: Երեխայի դիմաց դնում են տարբեր առարկաներ, և որին նա առաջինն է ձեռք տալիս, այն էլ խորհրդանշում է ապագա մասնագիտությունը: Նաև գիտենք, որ հաճախ ծնողներն են փորձում երեխայի փոխարեն որոշել, թե նա ինչով պետք է զբաղվի ապագայում:

7-րդ դասարանի աշակերտը դեռ բավարար ժամանակ ունի մասնագիտություն ընտրելու համար, բայց եթե փորձեք ավելի ինքնուրույն լինել ու ավելի լուրջ վերաբերվել խնդրին, պետք է այժմվանից քիչ-քիչ մտածեք մասնագիտության ընտրության մասին:

Ն1 Փորձենք մեր ուժերը

Ձեռնարկենք մի քանի քայլ, որոնք մեզ կօգնեն նախնական կողմնորոշվել մասնագիտության ընտրության հարցում:

ՔԱՅԼ 1. ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄ

Սկզբում գնահատում ենք, թե ինչն է մեզ հետաքրքրում, ինչն ենք ամենաշատն արժևորում: Այս գնահատականները չե՛ն սահմանափակում մեզ, դրանք պարզապես հեշտացնում են մեր գործը:



Հմտություններ | Հաղորդակցվելու հմտությունները, օրինակ, օգտակար են բոլոր մասնագիտություններում: Եթե դու հեշտ ես շփվում մարդկանց հետ, դա կօգնի քեզ ավելի արդյունավետ աշխատել:

Հետաքրքրություններ | Հետաքրքրությունները կարող են փոխվել ժամանակի ընթացքում: Մենք կարող ենք հետևել ինքներս մեզ՝ տալով այս հարցերը.

1 | Գործունեության ո՞ր տեսակներն են ձգում մեզ, ի՞նչն է մեզ գրավում դրանց մեջ:

2 | Ո՞ր հարցերը կամ շարժառիթներն են ամենակարևորը մեզ համար:

3 | Ե՞րբ ենք կյանքում ամենաերջանիկը եղել, ի՞նչ էինք անում այդ պահին:

4 | Ո՞ր դասերն ենք ամենաշատը սիրում, ի՞նչն է մեզ գրավում այդ դասերի մեջ՝ քիմիա՞, մաթեմատիկա՞, լեզունե՞ր, կենսաբանությո՞ւն, նկարչությո՞ւն:

5 | Ո՞ւմ կատարած աշխատանքով ենք հիանում և ինչո՞ւ:

Անհատականություն | Քո անձի առանձնահատկություններն ազդում են մտքերիդ, վարքիդ, որոշումներիդ վրա: Մեկ անձի համար կատարյալ թվացող աշխատանքը կարող է անցանկալի լինել մյուսի համար.

1 | Քո նախընտրած աշխատանքի ընթացքում որքա՞ն է հարկավոր շփվել ուրիշ մարդկանց հետ՝ շա՞տ, քի՞չ, թե՞ միջին չափով:

2 | Նախընտրում ես օգտագործել երևակայությունդ կամ լինել գյուտարա՞ր, թե՞ քեզ դուր է գալիս զբաղվել գործնական հարցերով, որոնց արդյունքը արագ տեսնում ու շոշափում ես:

Արժեքներ | Կարևոր է, որ ընտրություն կատարենք մեր արժեքների համաձայն, այլապես աշխատանքը կարող է բավականություն չպատճառել մեզ և դառնալ տանջանք: Ժամանակ հատկացրու՝ որոշելու համար, թե ինչ նշանակություն ունեն արժեքները քեզ համար: Օրինակ՝ կյանքը դեպի լավը փոխելու ցանկությունը հաճախ նշվում է որպես աշխատանքի հետ կապված արժեք, բայց այն կարող է տարբեր բաներ նշանակել ամեն մարդու համար (արժեքների վերաբերյալ արդեն խոսել ենք բարոյականության մասին դասերի ժամանակ):

ՔԱՅԼ 2. ՀԵՏԱԶՈՏԻՐ ԵՎ ԻՄԱՑԻՐ ՀՆԱՐԱՎՈՐ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Բժշկի և ուսուցչի աշխատանքը մեզ արդեն ծանոթ է: Բայց կան բազմաթիվ այլ աշխատատեղեր, և շատերն էլ նոր են ստեղծվում արդյունաբերության զարգացմանը զուգընթաց: Բացահայտի՛ր կարիերայի ընտրության բոլոր հնարավորությունները և մի՛ սահմանափակվիր այն մասնագիտություններով, որոնք արդեն ծանոթ են:

ՔԱՅԼ 3. ԱՐԺԵՎՈՐԵԼ ԵՎ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼ

Կարևոր է ստուգել յուրաքանչյուր ոլորտ, որը քեզ հետաքրքրում է: Ինքդ քեզ տո՛ւր հետևյալ հարցերը.

1 | Ինչպիսի՞ն է իմ նախնական տպավորությունն այն մասնագիտությունից, որն ուսումնասիրում եմ:

2 | Ի՞նչն է ինձ գրավում այդ ոլորտում: Ի՞նչն ինձ չի գրավում: Թվարկի՛ր դրական և բացասական կողմերը:

3 | Ի՞նչ հմտություններ, գիտելիք և փորձառություն կպահանջվի ինձնից այս ոլորտում, ես բավականաչափ հետաքրքրվա՞ծ եմ արդյոք դրանով, որ այդ հմտությունները կամ գիտելիքները զարգացնեմ:

4 | Ի՞նչ չափով պիտի հարմարվեմ այդ աշխատանքին:

Ոչ մի աշխատանք կարող է կատարյալ չլինել քեզ համար, բայց պետք է ուշադիր լինես, որ անցանկալի բաղադրիչները քիչ լինեն:

Եթե պարզես, որ ինչ-որ ոլորտ քեզ այդքան էլ համար չէ, կարող ես փորձել նույն քայլերը կատարել մեկ այլ մասնագիտության վերաբերյալ: Նաև հաշվի առ, թե քո նախընտրած մասնագիտությունն ինչ օգուտ կարող է տալ այլ մարդկանց (բարոյականության վերաբերյալ դասերից հիշում ենք էգոիզմի և ալտրուիզմի թեման):



Այժմվանից ուշադիր եղիր, փորձիր լավ սովորել և տարբեր հմտություններ ձեռք բերել: Դա կհեշտացնի քո ընտրությունն ապագայում:

Առաջադրանք

1. **Նկարագրիր**, թե ինչ է տալիս տնտեսությունն անհատին և ինչ դեր ունի անհատը տնտեսության մեջ:
2. **Պարզաբանիր** **Ն1** -ի երկու նկարը, ինչի՞ մասին են դրանք:
3. Օգտվելով **Ն1** -ից՝ **հիմնավորիր**, թե որ մասնագիտությունը կամ մասնագիտությունները կնախընտրես:
4. **Կշռադատիր**, թե ինչ կտա քեզ այդ մասնագիտությունն ապագայում և ի՞նչ ջանքեր կպահանջի քեզնից:

Արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում

Երբ տնտեսագետներն ուսումնասիրում են ցանկացած երկիր, հաշվի են առնում բնակչության քանակը, բնակչության մեջ հարուստների, միջին կարողության տեր մարդկանց և աղքատների տոկոսը, գյուղերում ու քաղաքներում ապրողների քանակի հարաբերությունը և նրանց զբաղմունքը: Նրանք նաև քննում են արտադրության տարբեր ճյուղերի դերը երկրի ամբողջ տնտեսության մեջ, համեմատում են ապրանքների արտահանումն ու ներմուծումը, մեկ տարվա ընթացքում արտադրված և սպառված ապրանքի քանակը, դիտարկում ապրանքների գները և այլն: Այժմ ծանոթանանք, թե ինչպես է աշխատում տնտեսությունը: Դա թույլ կտա մեզ ավելի լավ հասկանալ վերևում նշվածը:

Տնտեսության աշխատանքը կարելի է բաժանել 4 օղակի՝ **արտադրություն, բաշխում, փոխանակում և սպառում**:

1. Արտադրության ընթացքում հասարակության անդամները բնությունից վերցրած կամ վերամշակված հումքը հարմարեցնում են մարդու կարիքներին: Արտադրությունը ստեղծում է առարկաներ մարդու կարիքների համար:
2. Բաշխման միջոցով որոշվում է, թե ով ինչպես և ինչքան է ստանալու արտադրության ժամանակ ստեղծված արդյունքներից: Բաշխումը բաժանում է արդյունքները տվյալ հասարակության օրենքների համաձայն:
3. Փոխանակության միջոցով մարդը ձեռք է բերում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնց հետ կամենում է փոխանակել բաշխումից հետո իրեն հասած բաժինը: Փոխանակությունը երկրորդ անգամ է բաժանում արդեն բաժանածն ըստ մարդկանց կարիքների:
4. Սպառման ժամանակ արտադրության արդյունքները դառնում են մարդկանց համար անհատական օգտագործման առարկաներ: Երբ մարդիկ օգտագործում են ապրանքները, դրանք դուրս են գալիս հասարակական շրջանառությունից և բավարարում մարդկանց կարիքը:

Այսպիսով, **արտադրությունը սկզբնակետն է, սպառումը՝ վերջնակետը, բաշխումն ու փոխանակությունը՝ միջին օղակները:**

Տնտեսության ելակետը հասարակության մեջ ապրող անհատների աշխատանքի արդյունքում ստեղծվող **արտադրությունն է**: Արտադրությունը հնարավոր չէ դիտարկել առանձնացված մարդու օրինակով: Եթե հայացք նետենք մարդկության պատմությանը, կտեսնենք, որ հենց սկզբից երեխան բնական կապով կապված է ընտանիքի ու ազգականների հետ: Իսկ հետագայում նա սկսում է կապվել տոհմերի միաձուլումից առաջ եկած հասարակության զանազան ձևերի հետ: Մարդն իրեն շրջապատող հասարակության ծնունդն է և նրա աշխատանքի արդյունքում արտադրվող ամեն բան տարբեր թելերով կապված է ուրիշների աշխատանքի արդյունքին: Ինչպես որ մեր լեզուն է

ձևավորվում իրար հետ ապրելով և խոսելով, այնպես էլ տնտեսությունն է ձևավորվում համատեղ կյանքով:

Արտադրության ընթացքում մարդու, տարբեր գործիքների աշխատանքը վերածվում է առարկայի կամ ծառայության: Դրա համար անհրաժեշտ է նախ կուտակել բնական ռեսուրսներ, օրինակ՝ երկրի ընդերքից հանված մետաղներ, հատված ծառեր, հանքից հայթայթված ավազ, հորից հանված նավթ և բազմաթիվ այլ նյութեր, որ տնտեսության համար իբրև հումք են ծառայում: Հարկավոր է ներգրավել մարդկային աշխատուժ, ունենալ աշխատանքային գործիքներ և համապատասխան տարածքներ:

Երբ արտադրանքն արդեն պատրաստ է, մարդու աշխատանքի արդյունքի վերադարձը կախված է մյուս անհատների հետ հարաբերություններից: Կոշկակարին անձնական օգտագործման համար մեկ զույգ կոշիկից ավել հարկավոր չէ, նա փոխանակում է իր արտադրած մյուս կոշիկներն այլ ապրանքների հետ: Արդյունքի անմիջական յուրացումը կամ սպառումը նպատակահարմար չէ, եթե մարդն արտադրում է հասարակության մեջ: Արտադրողի և արդյունքի միջև հանդես է գալիս **բաշխումը**, որը հասարակական օրենքներով որոշում է, թե ամեն արտադրողի ինչ բաժին է հասնում արդյունքների աշխարհից:

Բաշխման ժամանակ հասարակությունը դառնում է միջնորդ արտադրության ու սպառման միջև տվյալ հասարակության հաստատած օրենքներով: Եթե գործ



ունենք ժամանակակից մասնավոր ձեռնարկության հետ, ապա հենց բաշխումն է որոշում, թե դրա արտադրությունից.

- որքան շահույթ է մնում սեփականատերերին, և որ մասն է նորից ներդրվում գործի մեջ,
- որքան է հասնում տարածքի տիրոջն իբրև վարձակալության վճար,
- որքան են ստանում վարձու աշխատողները՝ իբրև աշխատավարձ,
- քանի տոկոսն է հարկի* տեսքով գնում պետական բյուջե*,
- պետությունը բյուջեից ինչպես է վերաբաշխում այդ գումարը և այլն:

Բաշխումից է կախված նաև, թե նոր կյանք մտնող մարդուն ինչ պայմաններ և միջոցներ են բաժին հասնում, ծնողները կամ պետությունը կարողանո՞ւմ են նրա համար բարենպաստ պայմաններ ապահովել, թե՞ ոչ, նա տիրապետո՞ւմ է մասնավոր կամ հանրային սեփականության*, թե՞ ոչ:

Փոխանակումը միջնորդ դեր է կատարում արտադրության, բաշխման ու սպառման միջև: Փոխանակության ժամանակ կարևոր է յուրաքանչյուր անհատի ընտրությունը: Նա է որոշում, թե ինչ է գնում իր աշխատանքի դիմաց ստացած փողով կամ ինչ ծառայություններից է օգտվում: Օրինակ՝ տվյալ պահին նոր արդո՞ւկ գնել, թե՞ բավարարվել հնով և եղած գումարով բուժել ատամը: Եվ եթե նա որոշում է արդուկ գնել, ապա վաճառքի հանված արդուկների միջից ո՞ր ֆիրմայի արտադրանքն է նախընտրելի: Սակայն փոխանակումը նույնպես տեղի է ունենում տվյալ հասարակությունում հաստատված կարգի համաձայն, և այդ կարգը կախված չէ ամեն առանձին անհատից: Չկա փոխանակություն առանց **աշխատանքի բաժանման***: Ինչքան բարդ է աշխատանքի բաժանումը, նույնքան բարդ է բաշխումը: Փոխանակությունն էլ իր հերթին որոշվում է արտադրության կազմակերպությամբ: Օրինակ՝ փոխանակությունը քաղաքի ու գյուղի միջև, փոխանակությունը գյուղի ներսում, փոխանակությունը քաղաքի ներսում պայմանավորված են արտադրության բնույթով և առաջացող կարիք-ներով: Քաղաքում չկա բնամթերք, գյուղում չկա կոշիկ և այլն:

Հայաստանի Հանրապետությունում հաստատված փոխանակման միջոցը ՀՀ դրամն է: Արգելվում է այլ արժույթով (դոլարով, եվրոյով, ռուբլիով և այլն) ապրանք գնել խանութից: Գնորդը ստիպված է իր ունեցած արտարժույթը բանկում փոխարկել դրամի և դրանով առևտուր անել խանութից: Ապրանքների գներն էլ սովորաբար ուղղակիորեն կախված չեն գնորդի ցանկություններից, այլ ձևավորվում են արտադրողների որոշումների, շուկայի* թելադրած պայ-մանների և գները վերահսկող պետական մարմինների ազդեցությամբ:

Սպառման ժամանակ մի մարդու պատրաստած առարկան կամ տրամադրած ծառայությունը դառնում է մեկ այլ մարդու կարիքների բավարարման միջոց:

S1

Հռոմեական կայսրության մետաղադրամներ

Փողի և փոխանակման ձևերի մասին

Տնտեսական օրենքներն ու օրինաչափությունները ձևավորվել են հազարամյակների ընթացքում: Փողը շատ վաղուց է սկսել կարևոր դեր խաղալ, բայց նույնիսկ ամենազարգացած հնադարում՝ Հռոմեական կայսրության ծաղկուն շրջանում, տնտեսական հարաբերությունների հիմքը կազմում էին բնական մթերքով գանձվող հարկը և բնական ծառայությունները: Ստրուկներն ընդհանրապես զրկված էին իրավունքներից և իրենց կատարած աշխատանքի դիմաց ընդամենը որոշ սնունդ էին ստանում: Սակայն զինվորներին ծառայության դիմաց մետաղական դրամներով էին վճարում, և դրամական տնտեսությունը լիովին զարգացած էր միայն բանակում: Փողը երբեք չէր ներթափանցել աշխատանքային ամբողջ գործընթաց:

Օրենքներն ու օրինաչափությունները հիմա էլ շարունակաբար զարգանում են և ապագայում անպայման կտարբերվեն այսօրվա վիճակից: Իսկ անցյալում ավելի մեծ տարածում ունեցող ձևերն այսօր էլ մասամբ պահպանվում են: Օրինակ՝ հաճախ կարող եք հանդիպել, որ երկու մարդ իրար հետ ապրանք փոխանակեն: Օրինակ՝ մեկը մյուսին տա 5 կիլոգրամ կարտոֆիլ և փոխարենը ստանա, ասենք, 3 կիլոգրամ խնձոր: Փոխանակման այս ձևը, որ դուրս է դրամաշրջանառությունից, կոչվում է *բարտեր*:

Երբ խանութից գնում ենք պայուսակ, ձեռք ենք բերում առարկա: Այն բավարարում է մեր կարիքը. դրա մեջ տեղավորում ենք մեր գրքերն ու տետրերը և գնում դպրոց: Իսկ երբ այցելում ենք բժշկի և բուժում ստանում, օգտվում ենք ծառայությունից: Դրա շնորհիվ պահպանում ենք մեր առողջությունը և բավարարում լավ ինքնազգացողություն ունենալու կարիքը:

Առանց սպառման չկա արտադրություն, որովհետև այդ դեպքում արտադրությունն աննպատակ կլիներ: Սպառման պահին արտադրանքը դառնում է իրական արդյունք: Օրինակ՝ քանի դեռ ինչ-որ մեկը չի հագնում շապիկը, այն հագուստ է միայն իր ներուժով: Շապիկն իրական հագուստ է դառնում միայն այն ժամանակ, երբ ինչ-որ մեկը սկսում է հագնել: Սպառումը խթանում է արտադրությունը:

Ն2 Տնտեսական 3 հիմնական հարցը

Մենք մանրամասն անդրադարձանք *արտադրությանը, բաշխմանը, փոխանակությանը* և *սպառմանը*: Հենց այդ գործընթացներից էլ բխում է տնտեսագիտության* երեք հիմնական հարցը.

1. Ի՞նչ արտադրել

Այս հարցում կարևորը պարզելն է, թե ինչ արտադրել: Թեև մեր ցանկություններն անսահմանափակ են, մեզ հասանելի ռեսուրսները սահմանափակ են: Ռեսուրսները ներառում են հումք, մարդկային աշխատանք, գործիքներ ու ֆինանսներ: Սահմանափակ ռեսուրսների դեպքում անհնար է ունենալ այն ամենը, ինչ ցանկանում ենք: Շուկայական տնտեսության պայմաններում հարկավոր է հաշվի առնել շուկայի կարիքները նոր ապրանք թողարկելիս: Ընկերությունները պետք է ուսումնասիրեն, թե ինչն է բացակայում կամ ինչը բարելավման կարիք ունի շուկայում: Դա տալիս է որոշ երաշխիք, որ ապրանքը կվաճառվի, և հիմք է ստեղծում շահույթի համար:

2. Ինչպե՞ս արտադրել

Երբ որոշումն արդեն կայացված է, թե ինչ է հարկավոր արտադրել, հաջորդ քայլը պարզելն է, թե ինչպես արտադրել: Արտադրության համար պետք են ռեսուրսներ, հող, աշխատուժ, անհրաժեշտ նյութեր և ձեռնարկատիրական գործունեություն: Արժի նաև հաշվի առնել արտադրության ու ապրանքի վերջնական հավաքման մեթոդը: Արտադրության ընթացքում կարող է փոխվել ռեսուրսների հասանելիությունը, ինչն ազդում է վերջնական արտադրանքի քանակի ու արժեքի վրա: Փոփոխությունների ընթացքում հաճախ կարիք է լինում արտադրության այլընտրանքային պլան մշակել:

3. Ո՞ւմ համար արտադրել

Տնտեսության վերջին հիմնական հարցը հետևյալն է. ո՞ւմ համար են արտադրվում ապրանքները: Այս հարցն ավելի կարևոր է, քան կարող է թվալ, քանի որ պատասխանը նաև օգնում է սահմանել ապրանքի գինը: Արդյոք արտադրանքն ուղղված է հարուստների՞ն, թե՞ աղքատներին: Արդյոք մարդիկ պատրաստ են սպասել տվյալ արտադրանքին, թե՞ հնարավորության դեպքում կգնեն այլ արտադրողի առաջարկած ավելի էժան այլընտրանք: Օրինակ՝ շալվար արտադրող ընկերությունը նկատի կունենա՞

հնարավոր գնորդների խումբն ապրանքի գինը սահմանելիս: Եթե կտորն ու թելը շատ թանկ չեն, սպառողները կարող են շատ լինել, իսկ ընկերությունն էլ մեծ քանակի շնորհիվ կարող է շահույթ ստանալ: Իսկ եթե կտորն ու թելը թանկ են, նրանք պետք է բարձր գին սահմանեն շահույթ ստանալու համար: Այս դեպքում շուկան կարող է լինել փոքր, քանի որ մարդիկ հնարավոր է՝ չցանկանան թանկ գնով տաբատ ունենալ, այլ նախընտրեն էժան տարբերակը:

Տնտեսության 3 հիմնական հարցի իմացությունը կարևոր է մեր օրերում, քանի որ օգնում է կողմնորոշվել շատ ու շատ հարցերում:

Որոշի՛ր քո նախընտրած արտադրության ոլորտը և հարցերի դիմացի վանդակներում լրացրո՛ւ պատասխանները:

Հարց	Պատասխան
Ի՞նչ արտադրել	
Ինչպե՞ս արտադրել	
Ո՞ւմ համար արտադրել	

Ն3 Ինչպե՞ս իրականացնել բաշխումը

Փորձենք պատասխանել այն հարցին, թե ինչ հիմունքներով է հարկավոր իրականացնել բաշխումը: Դիտարկենք հնարավոր տարբերակները.

1 | Բնածին հավասարություն | Բոլոր անհատները հավասար իրավունք ունեն բարիքների նկատմամբ՝ անկախ այն բանից, թե նրանք հասարակությանն ինչքան նպաստ են բերում:

2 | Կարիք | Անհատները հավասար օգուտներ ստանալու իրավունք ունեն, ինչը նշանակում է անհավասար բաշխում, քանի որ կարիքները տարբեր են:

3 | Ժառանգական իրավունք | Անհատի իրավունքը որոշվում է ըստ նախորդ սերունդներից ստացած սեփականության և այլ իրավունքների:

4 | Արժանիք | Հասանելիք բարիքները կարող են կախված լինել դժվարության աստիճանից, որ հաղթահարվում է արտադրության ժամանակ: Օրինակ՝ ովքեր երկար ժամանակ են տրամադրել ուսմանը, ինչպիսիք են վիրաբույժները, ավելի շատ իրավունք ունեն, քան մյուսները:

5 | Նպաստ ընդհանուր բարիքին | Այն անհատները, որոնց գործունեությունն օգուտ է բերել շատ մարդկանց, ավելի մեծ հասանելիք ունեն, քան նրանք, ում գործունեությունն օգուտ է բերել քիչ մարդկանց:

6 | Իրական արտադրական նպաստ | Անհատները, որոնք ավելի շատ արտադրանք են տվել, ավելի շատ իրավունք ունեն, քան քիչ արտադրանք տվողները:

7 | Ջանք և զոհողություն | Անհատները, որոնք մեծ ջանքեր են գործադրել կամ գնացել մեծ զոհողությունների՝ համեմատ իրենց բնական կարողությունների, պետք է ավելի շատ պարգևատրվեն, քան նրանք, ովքեր քիչ ջանք են գործադրել և գնացել քիչ զոհողությունների:

Առաջադրանք

1. **Նշի՛ր**, թե ինչ գործընթացների է բաժանվում տնտեսությունը:
2. Պատկերելու միջոցով **ցո՛ւյց տուր**, թե ինչպես է տնտեսության 4 գործընթացը կապակցված մեկը մյուսին:
3. Դասարանում **ներկայացրե՛ք** **Ն2** -ի աղյուսակի ձեր տարբերակը և դասընկերներով **ստուգե՛ք** միմյանց աշխատանքը: Գտե՛ք սխալները, եթե դրանք կան:
4. **Գնահատի՛ր**, թե **Ն3** -ում նշված տարբերակներից որոնք են նախընտրելի քեզ համար և որքանով են կիրառելի:
5. Համացանցում ինքնուրույն գտի՛ր նյութեր ջրի ու ադամանդի պարադոքսի (Սմիթի պարադոքս) մասին, **մշակի՛ր** դրանք և **մեկնաբանի՛ր**, թե ինչ կապ ունի այն այս դասի թեմայի հետ:
6. Մենք գիտենք, որ խորհրդային տարիներին Հայաստանում արգելված է եղել մասնավոր սեփականությունը*, իսկ անկախության տարիներին լայնորեն խրախուսվել է: **Գնահատի՛ր** այս հարցի վերաբերյալ մարդկանց դիրքորոշումը՝ քո ընտանիքում, հարևանների շրջանում ու համայնքում գտնելով 3 մարդ, որոնք ապրել են խորհրդային տարիներին և տո՛ւր նրանց հետևյալ 4 հարցը.

   1) Ի՞նչ առավելություններ ուներ խորհրդային ժամանակի տնտեսությունը:

   2) Ի՞նչ թերություններ ուներ խորհրդային շրջանի տնտեսությունը:

   3) Ի՞նչ առավելություններ ունի անկախության ժամանակի տնտեսությունը:

   4) Ի՞նչ թերություններ ունի անկախության շրջանի տնտեսությունը:

   Արդյունքներն **ամփոփի՛ր** և **ներկայացրո՛ւ** դասարանում: Վերջում բաժանվե՛ք երկու խմբի և բանավեճ կազմակերպե՛ք՝ խորհրդային ժամանակների տնտեսությո՞ւնն էր ավելի բարենպաստ, թե՞ անկախության շրջանի տնտեսությունը:

7.2 Մեր պահանջմունքները, կարիքներն ու ցանկությունները

Պահանջմունքներ ասելով այստեղ նկատի ունենք կենսաբանական պահանջները, որ ապահովում են մարդու օրգանիզմի գոյատևումը՝ շնչելու օդ, ծարավը հագեցնող ջուր, քաղցը հագեցնելու համար անհրաժեշտ սնունդ, ուժերը վերականգնելու համար անհրաժեշտ քուն, մարմինը ցրտից պաշտպանող հագուստ, կացարան ցրտից, շոգից պաշտպանվելու և անվտանգ քնելու համար և այլն: Սրանք բոլորը բնական պահանջմունքներ են, որ տրված են ի ծնե և հատուկ են մարդ տեսակի բոլոր առանձնյակներին: Բնածին պահանջմունքների բավարարումն անհրաժեշտ է օրգանիզմի նորմալ կենսագործունեության պահպանման համար:

«Կարիք» բառը հաճախ հանդես է գալիս իբրև «պահանջմունք» բառի հոմանիշ, լսած կլինեք՝ «բնական կարիքներ», բայց այն ավելի հաճախ վերաբերում է հասարակական, ոչ թե բնական երևույթներին: **Կարիքները** կապված են մարդկային գիտակցության հետ: Հասարակության ձևափոխման հետ փոփոխվում է նաև կարիքի գիտակցումը: Փորձենք հասկանալ, թե կարիքը կոնկրետ ինչին է վերաբերում և ինչպես է առաջանում: Եթե չհաշվենք սնունդն ու կացարանը, որ արդեն ընդգրկել ենք պահանջմունքների թվում, առավել կայուն կարիքներն են.

1 | բուժօգնություն,

2 | կրթություն,

3 | սոցիալական և շրջակա միջավայրին վերաբերող ծառայություններ՝ աղբահանություն, էլեկտրամատակարարում, ջրամատակարարում,

4 | սպառողական բարիքներ (բացի սննդից ու հագուստից, որ ավելի շատ պահանջմունքին են վերաբերում, սպառողական բարիք են նաև գազի կաթսան, փոշեկուլը, սեղանը, որոնք արդեն կարիքին են վերաբերում),

5 | հանգստի հնարավորություններ՝ մարզասրահ, առողջարան,

6 | թաղային հարմարություններ՝ մայթ, ճանապարհ, զբոսայգի,

7 | տրանսպորտային ծառայություններ:

Սրանցից յուրաքանչյուրի նվազագույն քանակը և որակը, այսինքն՝ կարիքը, կարող է փոփոխվել ըստ տվյալ ժամանակաշրջանի և տեղի հասարակական նորմերի: Կտարբերվեն նաև այդ կարիքները բավարարելու ձևերը:

Տնտեսության մասին խոսելիս «ցանկություն» բառն ունի մի նշանակություն, որը տարբերվում է այդ բառի սովորական նշանակությունից: **Ցանկություն** ենք անվանում այն ապրանքներն ու ծառայությունները, որոնք ուզում ենք,

բայց որոնք անհրաժեշտ կամ հրատապ չեն: Երբեմն թանկարժեք ցանկություններն անվանում ենք «շքեղություն» բառով: Հաճախ լսած կլինեք՝ «իրեն շքեղություն է թույլ տալիս»: Այսինքն՝ ձեռք է բերում ապրանքներ կամ օգտվում ծառայություններից, որոնք ամենևին անհրաժեշտ չեն: Ցանկության բավարարում կարող է համարվել պլաստիկ վիրաբուժության ծառայությունից օգտվելը, կարուսել նստելը: Օրինակ՝ քաղցրավենիքը ցանկությունների շարքին է պատկանում, ոչ թե օրգանիզմի համար անհրաժեշտ սննդի: Ցանկությունների թվին է պատկանում նաև խաղային համակարգիչը. մենք հանգիստ կարող ենք ապրել առանց դրա: Ցանկությունները կարող են ձևավորվել մարդու ներքին մղումներից, բայց նաև գովազդի, զանգվածային տեղեկատվամիջոցների* և շրջապատի ազդեցության տակ: Ցանկությունն ավելի շատ կապված է զգացմունքային բավականության հետ:

Ամփոփենք: **Պահանջմունքները** կապված են մարդու օրգանիզմի բնականոն աշխատանքն ապահովելուն: Պահանջմունքների չբավարարումը կարող է ծանր հետևանքներ ունենալ մարդու համար՝ հիվանդություն, ընդհուպ մահ: **Կարիքները** կապված են մարդու՝ հասարակության մեջ նորմալ պայմաններում ապրելուն: Եթե մարդու կարիքները չեն բավարարվում, նա կարող է դուրս մնալ հասարակական կյանքից և բախվել լրացուցիչ դժվարությունների: Իսկ **ցանկությունները** չեն վերաբերում մարդու՝ իբրև բնական և սոցիալական էակի բնականոն կյանքի ապահովմանը, այլ ավելի շատ կապված են հաճույքի հետ:

Ն4 Ինչպե՞ս սահմանել առողջապահական կարիքը

Ոչ ոք չի ժխտի, որ բժշկական օգնություն ստանալը մարդու հիմնական կարիքներից մեկն է: Սակայն այդ կարիքն այնքան էլ հեշտ չէ սահմանել ու չափել: Օրինակ՝ «առողջապահական ծառայություններ» ասվածը ներառում է շատ ենթաբաժիններ, որոնցից կոսմետիկ վիրաբուժությունը, մերսումները և մի շարք այլ ծառայություններ այսօրվա հասարակությունում կարող են համարվել ոչ էական: Ուրեմն հարկավոր է ճշտել, թե ինչպես կարելի է սահմանել կարիքը առողջապահության մեջ.

1 | Առողջապահական կարիքը հնարավոր է սահմանել ըստ շուկայի պահանջարկի*: Եթե որևէ տեղ կոնկրետ բժշկական ծառայություններ տրամադրող բուժանձնակազմը աշխատում է իր առավելագույն հնարավորության եզրին, ապա կարող ենք համարել, որ չբավարարված կարիքներ կան բնակչության շրջանում, և այդպիսով արդարացնել բժշկական ծառայությունների ընդլայնմանն ուղղված միջոցների տրամադրումը: Ուրեմն պահանջարկն ավելի մեծ է, քան բժշկական օգնության հնարավորությունը:

2 | Կարիքը կարելի է սահմանել զրկանքի միջոցով: Անհատներն իրենց զուրկ կարող են համարել, եթե չեն օգտվում ծառայություններից, բայց տեսնում են, որ ուրիշներն օգտվում են: Մեզ կենցաղից ծանոթ է «զուրկ մնալ» արտահայտությունը: Որևէ խմբի կամ անհատի առողջապահական ակնկալիքների և իրականում ստացած ծառայությունների միջև տարբերությունը տալիս է զրկանքի չափը: Սակայն մշտապես վատ սպասարկվող խմբերի՝ կարիք զգալու չափանիշը սովորաբար շատ ցածր է լինում: Այլ այլ կերպ ասած՝ մինչև դանակը ոսկորին չի հասնում, նրանք չեն դիմում բժշկի:

3 | Կարիքը կարող է սահմանվել ըստ առողջությունը վտանգող գործոնների: Ովքեր ապրում են խիստ աղտոտված օդի պայմաններում, ունենում են ավելի խիստ առողջապահական վերահսկման կարիք: Նույնը կարելի է ասել հանքարդյունաբերության ոլորտում աշխատող բանվորների մասին:

4 | Մենք նաև կարող ենք փորձել սահմանել կարիքները՝ խորհրդակցելով ոլորտի մասնագետների հետ: Մասնագետները հակված են սահմանել կարիքը՝ նկատի ունենալով հասանելի ռեսուրսները*, որոնցով կարելի է բավարարել դրանք: Բայց հետազոտվող համայնքում երկար ժամանակ ապրող ու աշխատող

մարդիկ էլ կարող են իրենց փորձի հիման վրա տալ սուբյեկտիվ գնահատականներ, որոնք նույնպես կարիքի լավ ցուցիչներ են:

Ամփոփենք: Օրինակ՝ մեզանում հիմա տարածված է տարին մեկ անգամ ընդհանուր բժշկական ստուգման գնալը: Որոշ հիմնարկություններ տրամադրում են այդ հնարավորությունն իրենց աշխատողներին առողջապահական ապահովագրության շրջանակում: Որոշ անհատներ էլ ուղղակի փողով գնում են այդ ծառայությունը: Տարեկան ստուգումը նպաստում է առողջական խնդիրների վաղաժամ հայտնաբերմանն ու կանխարգելմանը: Երբեմն դրա շնորհիվ հաջողվում է փրկել մարդկային կյանքեր: Հետևաբար տարեկան ստուգումը կարող է անհրաժեշտություն համարվել: Սակայն մեր հասարակության մեջ կան անհատներ և ընտանիքներ, որոնք ֆինանսապես չեն կարող իրենց թույլ տալ տարեկան ստուգում: Երբեմն նրանց ունեցած գումարը նույնիսկ չի հերիքում արդեն հայտնաբերված հիվանդությունները բուժելուն, էլ ուր մնաց՝ տարեկան ստուգումների անհրաժեշտություն տեսնեն: Ուրեմն համոզվեցինք, որ **այն, ինչը մարդկանց մի խումբը կարող է կարիք համարել, մյուս խումբը կարող է նույնիսկ չգիտակցել որպես կարիք**:



Ն5 Սպառողականություն և սպառողական հասարակություն

Ժամանակակից հասարակությունները բնորոշվում են մի շարք արտահայտություններով՝ սպառողական հասարակություն, սպառողական մշակույթ, սպառողական վարք, սպառողականություն և այլն: Սպառողական հասարակության տնտեսական և սոցիալական արմատները կարելի է գտնել տարբեր դարաշրջաններում՝ զանգվածային արտադրություն, գիտատեխնիկական առաջընթաց, քաղաքների աճ, մեծաթիվ ու բազմազան ապրանքների առկայություն, գրագիտության աճ և այլն: Հասարակության փոփոխություններն ուղեկցվում էին նոր ապրելակերպերի, արժեքների ու նորմերի ձևավորմամբ: Առաջնային անհրաժեշտություն չունեցող ապրանքների սպառման աճը անկարելի կլիներ առանց զանգվածային տեղեկատվամիջոցների և գովազդի:

Սակայն միայն Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո առաջ եկավ այն միտքը, որ արևմտյան հասարակությունները դարձել են «սպառողական»: Առաջ եկավ «ցուցադրական սպառում» արտահայտությունը, որը նկարագրում է որոշակի ապրելակերպ, որն ի ցույց է դնում կարգավիճակ ու պրեստիժ՝ ուրիշ սոցիալական խմբերի հետ մրցակցելիս: Իրական կարիքների բավարարմանը չծառայող սպառումը քաղաքային պայմաններում դառնում է մյուսներից տարբերվելու միջոց:

Այսպիսով ուռճացված սպառումը համեմատաբար նոր երևույթ է, որ հակասում է խնայողության ու համեստության մասին ավանդական պատկերացումներին: Ինչպե՞ս է արդարացվում այդ ուռճացված սպառումը: Սպառման կողմնակիցներն այն համարում են սոցիալական կյանքի կարևոր բաղադրիչ, ժամանակակից երևույթ ու նորաձևությունից հետ չմնալու պայման: Սպառելով կարող ենք վստահ լինել, որ նպաստում ենք տնտեսության աճին, մասնակցում տեխնոլոգիական առաջընթացին: Այս տեսանկյունից սպառումը

Մոլ Երևան քաղաքում, 2023 թ.

տրամաբանված վարք է՝ հիմնավորված ռացիոնալ որոշմամբ: Սպառման և սպառողական հասարակության օգտին հավելյալ փաստարկներ են շոփինգի բուժական նշանակության մասին պնդումները, ժամանակակից արևմտյան հասարակություններում մարդկանց երկարակեցությունը և այլն:

Ըստ հակառակ կարծիքի՝ ժամանակակից զարգացած հասարակություններում արմատացած գերսպառումը արատավոր պրակտիկա է, որ կատարվել և կատարվում է աղքատ երկրների (Երրորդ

աշխարհի) բնակչության հաշվին՝ ի վերջո հանգեցնելով մոլորակի պաշարների հյուծման և էկոլոգիական աղետների: Հատկապես բարեկեցիկ հասարակություններում տարածված են սպառման անկառավարելի, հիվանդագին ձևեր: Սպառումը հանգեցնում է նյութապաշտության, իսկ մարդու անձնական երջանկությունը հավասարեցվում է նրա սպառողական կարողություններին: Սպառողական հասարակության մեջ ոչ ոք դուրս չի մնում սպառումից: Նույնիսկ նրանք, ովքեր միջոցներ չունեն իրենց ցանկություններն իրականացնելու համար: Սպառում են բոլորը՝ առնվազն իրենց երևակայության ու երազանքների մեջ: Սպառողը կորցնում է կառավարումն ապրանքների ընտրության նկատմամբ, չի կարողանում գնահատել ապրանքն ըստ իրական օգտակարության և չգնել անօգուտ ապրանք: Քսաներորդ դարում գովազդի և զանգվածային տեղեկատվամիջոցների զորեղ ազդեցության պայմաններում սպառման վերահսկողությունը մեծապես անցնում է արտադրողներին, որոնք մարդկանց կարող են համոզել գնել այն, ինչ ցանկանում են վաճառել:

Հայաստանում 2000-ականներից ի վեր նույնպես հետզհետե արմատավորվեց սպառողականությունը: Այս պայմաններում սպառողը պետք է լինի գրագետ, որպեսզի կարողանա հասկանալ սպառման համակարգը և կողմնորոշվել՝ ինչ սպառել, ինչ չսպառել:

Տնտեսական որոշումների կայացում, սակավության հիմնախնդիր

Երբեմն մեր կայացրած որոշումները չեն բխում մեր կամքից, այլ պայմանավորված են արտաքին հանգամանքներով: Մեր ուզածն ու եղած վիճակը հաճախ չեն համընկնում: Եվ սա վերաբերում է նաև տնտեսությանը: **Տնտեսական որոշումներ** ասելով՝ հասկանում ենք անհատների, ձեռնարկությունների և կառավարությունների ընդունած բոլոր որոշումները, որ վերաբերում են արտադրությանը, սպառմանը և ռեսուրսների բաշխմանը:

Պետության մակարդակում տնտեսական որոշման օրինակ է, երբ կառավարությունը վարում է հանրության բարօրությանն ուղղված քաղաքականություն: Ասենք՝ կառավարությունները հաճախ ավելացնում են պետական ծախսերը, եթե ցանկանում են մեծացնել երկրի ընդհանուր պահանջարկը և համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ*): Պետական մակարդակում որոշումները կարող են կապված լինել նաև բնական հանգամանքների հետ և հատվել մասնավոր ընկերությունների որոշումներին: Օրինակ՝ Հայաստանի ընդերքը

հարուստ է պղնձով, և արտահանվում է երկրից: Փոխարենը մենք չունենք գազ և վառելիքային սակավությունը ստիպում է այն ձեռք բերել հարևան Իրանից և ռուսաստանյան մասնավոր ընկերությունից:

Ձեռնարկատիրական ընկերությունների տնտեսական որոշումները սովորաբար վերաբերում են իրենց առանձին գործունեությանը, բայց դրանք մեծապես կախված են մի շարք հանգամանքներից: Երբ ինչ-որ թաղամաս գերբեռնվում է բնակչությամբ, բարեխիղճ կառուցապատող ընկերությունը չի շարունակի ներդրում անել այդտեղ և կփնտրի կառուցապատման համար ավելի հարմար վայրեր:

Անհատական տնտեսական որոշման պարզ օրինակ է նոր համակարգիչ գնելը որոշակի գնով: Տվյալ անհատը պետք է մտածի, թե արժի արդյոք իր փողը հատկացնել համակարգիչ գնելուն: **Ընտանեկան տնտեսական որոշումը** համարյա նույնն է, բայց այս անգամ վերաբերում է մի քանի անհատի, ոչ թե մեկ: Սակայն կարիքավորների ընտրությունն ավելի սահմանափակ է, քան բարեկեցիկ կյանքով ապրողներինը: Չունևորները ստիպված են իրենց որոշումները կայացնել ֆինանսական ծանր պայմաններում, որոնք կարող են ազդել արդյունավետության վրա և ավելի խորացնել աղքատությունը:

Սակավությունը տնտեսագիտության մեջ կիրառվող բառ է, որի նշանակությունը բխում է մեր կյանքի հիմնական փաստերից մեկից. մենք ապրում ենք սահմանափակ ռեսուրսների աշխարհում, որը ստիպում է ընտրել, թե դրանք ինչպես պետք է բաշխվեն: Այդ առումով յուրաքանչյուր ապրանք, նույնիսկ մի տուփ ծամոնը կամ լուցկին, սակավ է, որովհետև ինչ-որ մեկը դրանք արտադրելիս ծախսել է ռեսուրսներ, որոնք կարող էին օգտագործվել որևէ այլ տեղ: Եթե պատկերացնենք մի աշխարհ, որտեղ արժեքավոր ամեն ինչ՝ սննդից ու ջրից մինչև արվեստի գլուխգործոցներ, այնքան առատ է, որ ոչ մի գին չունի, տնտեսագետներն ուսումնասիրելու ոչինչ չեն ունենա: Այդ դեպքում ռեսուրսների բաշխման վերաբերյալ որոշումներ կայացնելու կարիք չէր լինի: Սակայն իրական աշխարհում արտադրության բոլոր գործոնները գին ունեն, հետևաբար՝ գին ունի յուրաքանչյուր ապրանք: Եթե մի բանում ներդրում ենք անում, ապա չենք անում մեկ այլ բանի մեջ: Այսպես է բացատրվում ներդրումների սակավությունը: Նույնիսկ առատ հանրային ռեսուրսները, որոնք երկար ժամանակ սպառվում են զրոյական գնով, ի վերջո անսահման չեն: Օրինակ՝ կլիման շոշափելի ունեցվածք չէ, և դրա արժեքը դժվար է հաշվարկել, սակայն կլիմայի փոփոխության պատճառած ծախսերը ձեռնարկությունների, ինչպես նաև հասարակության համար չափազանց իրական են: Օդն անվճար է, բայց մաքուր օդը գին ունի, քանի որ դրա աղտոտումը կանխելու համար հաճախ սահմանափակվում են տնտեսական գործունեությունները: Օրինակ՝ 2018 թ. դադարեցվեց Հայաստանի Ալավերդի քաղաքի պղնձաձուլարանի գործունեությունը, քանի որ վնասակար արտանետումները գերազանցում

էին թույլատրելի չափը: Կառավարությունները կարող են պահանջել արտադրողներից նաև ներդրումներ կատարել աղտոտման վերահսկման մեջ կամ անցնել էներգիայի ավելի մաքուր աղբյուրների գործածման: Այլ կերպ ասած՝ մաքուր օդ շնչելն այդքան էլ անվճար չէ, մենք նույնիսկ մեկնում ենք հանգստի՝ հաճախ նախապատվություն տալով մաքուր օդ ունեցող վայրերին:

Ն6 Սակավության այլընտրանքային մեկնաբանություն

Սակավության այլընտրանքային մեկնաբանությունն այն ուղղակիորեն կապում է շուկայական տնտեսության համակարգի գործունեության հետ: Շուկայական համակարգը գործում է միայն այն դեպքում, երբ յուրաքանչյուր ապրանք կամ ծառայություն առաջին հերթին դիտարկում ենք իբրև մի բան, որը կարելի է փոխանակել փողի հետ: Իսկ այդ ապրանքի կամ ծառայության գինը ձևավորվում է սակավության պայմաններում: Եթե որևէ ապրանքի մեծ քանակի դեպքում ամբողջը միանգամից հանվի վաճառքի, դրա գինը կընկնի և կսկսի մոտենալ ինքնարժեքին, և հնարավոր չի լինի շահույթ* ստանալ: Սա հիմք է տալիս ենթադրել, որ կարող է լինել ոչ միայն բնականորեն, այլև արհեստականորեն ստեղծված սակավություն, որի արդյունքում ապրանքի գինը շուկայում բարձրանում է՝ լրացուցիչ շահույթ ապահովելով: Այն, ինչի քանակը քիչ է, ավելի թանկ է վաճառվում:



Կա տեսակետ, թե շուկաները պարզապես գոյանում են սակավության հարցերը լուծելու համար: Բայց կա նաև տեսակետ, թե տնտեսության մեջ սակավությունը հասարակական կարգավորումների արդյունք է, որպեսզի շուկան կարողանա գործել: Մենք ասում ենք, որ աշխատատեղերը քիչ են, երբ շատ աշխատանք կա անելու, տարածությունը սահմանափակ է, երբ շատ տեղերում հողը պարապ ընկած է, սնունդը պակաս է, երբ ահագին չօգտագործված սնունդ է փչանում: Սակավությունը ստեղծվում և վերահսկվում է հասարակության մեջ, որովհետև առանց դրա շուկաները չեն կարող գին որոշել: Արտադրանքի բաշխումը պետք է նմանապես վերահսկվի, ինչը նույնպես կարող է սակավություն առաջացնել: Այսինքն՝ պետք է հասկանալ, թե որ սակավությունն է բնական, որը՝ արհեստական: Շուկայական տնտեսությունը թելադրում է, որ բոլորն ապրանքին նայեն որպես մի բանի, որի դիմաց կարելի է գումար ստանալ, այլ ոչ թե միտված է միայն մարդկային կարիքների բավարարմանը: Այսպիսով, եթե շուկայական համակարգի աշխատանքի համար էական է ապրանքների սակավությունը, ուրեմն շուկայի հետ է կապված նաև զրկանքը, որը սակավության հետևանք է:

Առաջադրանք

1. **Նշի՛ր** մարդու պահանջմունքները, կարիքները և ցանկությունները:
2. Կազմի՛ր աղյուսակ և մի սյունակում գրի՛ր ձեր տան այն առարկաները, որոնք վերաբերում են պահանջմունքներին, մյուսում այն առարկաները, որոնք կարիքները բավարարելու համար են, երրորդում նշի՛ր ցանկություններին վերաբերող առարկաները: Համեմատելով երեք սյունակի պարունակությունը՝ աղյուսակի հիման վրա **պարզաբանի՛ր** պահանջմունքների, կարիքների և ցանկությունների տարբերությունը:
3. **Ն4**-ի հիման վրա **առանձնացրո՛ւ** ամենաշատը հանդիպող բժշկական կարիքները:
4. **Ն5**-ի հիման վրա **դիրքորոշո՛ւմ հայտնիր** սպառողականության վերաբերյալ՝ բերելով կոնկրետ օրինակներ և փաստարկելով դիրքորոշումդ:
5. **Բացատրի՛ր** սակավության մասին երկու տեսակետների տարբերությունը: Դասարանում բոլորով **քննարկե՛ք**՝ ի՞նչ կլիներ, եթե ռեսուրսները լինեին անսահմանափակ և սակավություն չլիներ, արդյոք հնարավո՞ր է նման բան:

7.3 Անձնական բյուջե, եկամտի բաշխում, խնայողությունների դերը ներկայում և ապագայում

Ֆինանսները տնօրինելու գործում շատ կարևոր է պլանավորումը: Այժմ կծանոթանանք ֆինանսական պլանավորման տարբեր կողմերին:

Անձնական բյուջե, եկամտի բաշխում

Անձնական դրամական միջոցները լավ կառավարելու նախապայմանը հավասարակշռությունն է: Հարկավոր է հավասարակշռել եկամուտներն ու ծախսերը:

ԵԿԱՄՈՒՏ ԵՎ ԾԱԽՍ

Եկամուտը մեր ստացած գումարն է կատարած աշխատանքի, մատուցած ծառայությունների դիմաց: **Ծախսը** մեր կատարած գնումների դիմաց վճարվող գումարն է:

Անհրաժեշտ ապրանքներ գնելու, կացարան ունենալու, կրթություն ստանալու և այլ պահանջմունքների ու կարիքների համար մարդիկ գումար են վաստակում: Աշխատելն ու գումար վաստակելը կարևոր են, բայց նաև կարևոր է այդ գումարը խելամիտ ծախսելը:

Եղե՞լ են դեպքեր, երբ քեզ գումար են տվել որոշ ժամանակի համար, բայց փողը մինչև ժամկետի ավարտը չի հերիքել: Ինչո՞ւ են մարդիկ մինչև ամսվա վերջին աշխատավարձ ստանալը ստիպված լինում պարտք վերցնել: Իսկ եղե՞լ են իրավիճակներ, երբ դու ծախսել ես գումարը ոչ այն բանի վրա, ինչի համար ձեզ տվել են: Կամ երբ գումար ես ծախսել մի բանի վրա, բայց հետո հասկացել, որ ավելի կարևոր ծախսեր կային: Ինչո՞ւ է այդպես եղել: Այսպիսի իրավիճակներում կարող ենք հայտնվել բոլորս, սակայն ֆինանսական դժվարությունները հնարավոր է կրճատել մեր եկամուտներն ու ծախսերը նախապես պլանավորելու միջոցով:



Բյուջե կարելի է կազմել անհատի, ընտանիքի, կազմակերպության կամ պետության համար: Բյուջեն պլանավորելիս միշտ անհրաժեշտ է գումար հատկացնել չպլանավորված ծախսերին, քանի որ չենք կարող բոլոր ծախսերի մասին նախապես իմանալ: Իսկ ամսվա վերջին կարելի է հաշվարկել արդեն տեղի ունեցածն ու համադրել՝ ո՞ր կետերն են համապատասխանում մեր պլանավորածին, և ինչն է շեղվել մեր ֆինանսական պլանից:

Ունեցած գումարն արդյունավետ ծախսելու համար տարբեր մոտեցումներ են մշակվել: Այդ մոտեցումներից մեկը մեզ ասում է, որ ֆինանսների աշխարհում հավասարակշռված առաջ շարժվելու, ապագայում նպատակներին հասնելու համար հարկավոր է առաջնորդվել վերևի պատկերում ցուցադրված սկզբունքով:

Ն7 Անձնական բյուջեի պլանավորում

Դիտարկենք Աբովյան քաղաքում ապրող ձեր տարեկից Սամվելի անձնական բյուջեն մեկ ամսվա համար: Օրինակն իրական է, սակայն դա չի նշանակում, թե դուք հենց նույնությամբ պետք է պլանավորեք ձեր բյուջեն: Այն պարզապես ցույց է տալիս անձնական բյուջե կազմելու ձևը:

Եկամուտներ		**Ծախսեր**	
ընտանիքի ավագ անդամներից ստացած գումար	33 000	խնայողություն խնայարկղում	3000
օլիմպիադան հաղթելու կապակցությամբ ստացած մրցանակ	40 000	դպրոցում սնվելու համար գումար՝ օրական 300 դրամ	7500
ընտանիքի հանձնարարությամբ կատարված առևտրից մնացած մանրադրամներ	3500	գրենական պարագաներ	1500
		տրանսպորտի ծախս	8000
		պարապմունքի վճար	10 000
		էքսկուրսիայի վճար	10 000
		հագուստ և կոշիկ	29 000
		ընկերոջ ծնունդի նվեր	2500
		այլ գնումներ	5000
Ընդամենը	**76 500**	**Ընդամենը**	**76 500**

Խնայողությունների դերը ներկայում և ապագայում

Ֆինանսների ոլորտում փորձառու մարդիկ վստահեցնում են, որ գումար ստանալուց հետո հարկավոր է անմիջապես մի մասն առանձնացնել ձեր ապագայի համար, այլապես ընթացիկ ծախսերից հետո գումար չի մնա: Վերևի օրինակում Սամվելն իր ստացած գումարի մի մասը հենց սկզբից գցում է խնայարկղի մեջ, որպեսզի մի օր հեծանիվ գնի: 76 500 գումարից 3000 դրամը նա նվիրեց իր մեծ ցանկության իրականացմանը: Այլ բառերով ասած՝ Սամվելը **խնայողություն կատարեց ապագայի համար**:

Խնայողությունները մեզ օգնում են **չնախատեսված իրավիճակներում**: Օրինակ՝ երբ ընկերներից մեկը հրավիրում է ծննդին, և հարկավոր է նվեր գնել, երբ առողջական խնդիր է առաջանում ու պետք է շտապ դեղ գնել: **Խնայողություններն անհրաժեշտ են նաև ներկայում չնախատեսված իրավիճակների համար:**

Եթե ֆինանսական նպատակն իրագործելու համար 78 000 դրամ է պետք, դա չի նշանակում, որ հենց հիմա պետք է այդքան գումար գտնել: Այս գումարը կարող է ձևավորվել մեկ տարվա ընթացքում՝ ամեն շաբաթ 1500 դրամ կուտակելով:

Խնայել կարող ենք սկսել խնայարկղում, իսկ հետագայում կարող ենք օգտվել բանկային տարբեր ծառայություններից:

Առաջադրանք

1. **Նկարագրիր**, թե ինչ եկամուտներ ունես դու կամ քո տարեկիցները, և ինչ եկամուտներ ունեն մեծահասակները: **Նշիր** դպրոցականի և մեծահասակի եկամուտների հիմնական տարբերությունները:
2. **Պարզաբանիր** **Ն7** -ում ներկայացված բյուջեն: Որո՞նք են բյուջեում պահանջմունքներ կամ կարիքներ, որո՞նք՝ ցանկություններ: **Բացատրիր**, թե ինչու է Սամվելի բյուջեում ծախսերի առաջին տողը հենց խնայողությունը:
3. Ամսվա սկզբին պլանավորիր քո բյուջեն՝ առանձնացնելով եկամուտները և դրանց աղբյուրը: **Առանձնացրու** նաև ծախսերն՝ ըստ առաջնահերթությունների և **նշիր** խնայողությունները: Ամսվա ընթացքում գրանցիր եկամուտներն ու ծախսերը: Ամսվա վերջին **համեմատիր** պլանավորածն իրականի հետ, գտիր շեղումներն ու դրանց պատճառները: **Մշակիր լուծում**, թե ինչպես կարելի է բարելավել քո ֆինանսական վիճակը:

ԳԼՈՒԽ 8

Մարդ և քաղաքականություն

Ուսումնասիրելով այս գլխի բովանդակությունը՝ կկարողանաս.

1 | հիմնավորել քաղաքականության կարևորությունը մարդու կյանքում.

2 | բացատրել քաղաքականության և հասարակական կյանքի այլ ոլորտների փոխադարձ կապերը:

Ինչպե՞ս են կայացվում հասարակության կյանքը կարգավորող որոշումները, ովքե՞ր են որոշում կայացնողները, ի՞նչ ազդեցություն ունենք այդ որոշումների վրա, որքանո՞վ են դրանք անդրադառնում մարդու անձնական կյանքի վրա: Ինչո՞ւ ենք լրատվամիջոցներով այդքան հաճախ լսում կուսակցությունների, քաղաքական գործիչների, պետական տարբեր հիմնարկությունների գործունեության մասին: Բոլոր այս հարցերի պատասխանները կիմանաս, եթե ուսումնասիրես այս գլխի բովանդակությունը:

8.1 Մարդը որպես քաղաքական էակ

«Քաղաքականություն» բառը ծագում է «քաղաք» բառից: Սա մեզ հուշում է մի միտք. երբ մեծ քանակի մարդիկ հավաքվում են մեկ վայրում, առաջանում է միասին ապրելու հնարներ փնտրելու անհրաժեշտություն: Միասին ապրելու երևույթը մեկ բառով անվանում ենք **համակեցություն**: Մարդը դուրս է գալիս իր ընտանիքի և նախապես իրեն շրջապատող միջավայրից և հայտնվում այլ մարդկանց հետ ավելի մեծ համայնքում ապրելու խնդրի առջև: Պարզ է, որ այդ պայմաններում կառաջանան քաոս և խառնաշփոթ, եթե մարդիկ չկարգավորեն համատեղ կյանքը:

Մենք հաճախ ենք լսում «քաղաքացի» բառը: Քաղաքացին քաղաքական համայնքի անդամ է, որն օգտվում է անդամության իրավունքներից և համայնքի առաջ ստանձնում պարտականություններ: Այդ առումով Հայաստանը քաղաքական համայնքի տեսակ է՝ հանրապետություն: Դրա համար էլ ասում ենք՝ Հայաստանի Հանրապետություն: Իսկ մենք բոլորս Հայաստանի Հանրապետության քաղաքացի ենք, ինչն ամրագրվում է ծննդյան վկայականով ու անձնագրով: Դա նշանակում է, որ օգտվում ենք պետության տրամադրած իրավունքներից և ստանձնում որոշակի պարտականություններ: Սակայն մենք գիտենք՝ ամեն ինչ այդքան պարզունակ չէ: Այժմ հարկավոր է հասկանալ, թե մեզնից յուրաքանչյուրը ինչ վերաբերմունք ունի քաղաքականության տարբեր դրսևորումների նկատմամբ: Ուրեմն շարժվենք առաջ և պատրաստ լինենք իմանալ ինչպես սպասելի, այնպես էլ անսպասելի բաներ:

Դեռևս հույն փիլիսոփա Արիստոտելը (մ.թ.ա. 384–322) «Քաղաքականություն» («Պոլիտիկա») աշխատության մեջ մարդուն կեսկատակ անվանում է «քաղաքական կենդանի»: Հին Հունաստանում գոյություն ունեին քաղաք-պետություններ, որ մեկ բառով անվանվում էին «պոլիս»: Դրանք իրարից անկախ էին և նույնիսկ կարող էին կռվել իրար դեմ: Արիստոտելը համարում էր, որ մարդու բնույթից է բխում երջանկության ձգտումը: Իսկ երջանկության հասնելու համար մարդու բնական վիճակը քաղաք-պետության մեջ ապրելն է: Մարդիկ ունեն

ներքին հակում՝ ապրելու այդպիսի կյանքով. բնական մղումով նրանք խմբվում են ընտանիքի, գյուղի և պետության մեջ: Ընտանիքը, գյուղը, պետությունն ինքնաբուխ բնական ստեղծագործություններ են, որ հեշտացնում են մարդու բնույթին անհրաժեշտ ապրանքների ու ծառայությունների փոխանակումը, եթե նրանք ցանկանում են լավ կյանքով ապրել: Այստեղից էլ Արիստոտելի նշանավոր նկարագրությունը մարդու մասին՝ որպես «քաղաքական կենդանի» (պոլիտիկոն զուն), որը բնականորեն ապրում է պետության մեջ՝ պոլիսում:

Ն1



Հատված Արիստոտելի «Քաղաքականություն» (Պոլիտիկա) երկից

(պարզեցված և կրճատումներով)

Հույն քանդակագործ Լիսիպոսի հեղինակած Արիստոտելի բրոնզե կիսանդրու (մ.թ.ա. 325 թ. հետո) հռոմեական պատճենը մարմարից (մ.թ.ա. 2-րդ դար), պահպանվում է Հռոմի ազգային թանգարանում, Իտալիա:

Պետության ձևավորում

Մի քանի գյուղից կազմված վերջնական միավորումը պետությունն (պոլիս) է: Բոլոր գործնական նպատակների համար գործընթացն այժմ ավարտված է. ձեռք է բերվել ինքնաբավություն: Ու թեև պետությունը ձևավորվել է որպես հենց կյանքն ապահովելու միջոց, այն շարունակում է իր գոյությունը նաև լավ կյանք ապահովելու նպատակով: Հետևաբար, յուրաքանչյուր պետություն գոյություն ունի բնականորեն, ինչպես որ նախկին միավորումներն էին բնական: Այս միավորումն ազդարարում է նախորդների ավարտը, իսկ բնությունն ինքնին մի ավարտունություն է, որովհետև ինչ էլ որ լինի ստեղծվող առարկայի վերջնական արդյունքը, անվանում ենք այդ առարկայի բնույթ. օրինակ՝ մարդու, ձիու կամ մի տնային տնտեսության: Ավելին՝ նպատակը և վերջնակետը կատարելությունն է. իսկ ինքնաբավությունը միաժամանակ ավարտությունն է և կատարելությունը: Այդ կետից այն-կողմ, սակայն, լավ կյանքի պայմանները հարկավոր է

պարզել՝ մասամբ փորձի ճանապարհով, մասամբ փիլիսոփայի մտորումների միջոցով մարդու հասարակական ու քաղաքական փորձառությունների վերաբերյալ:

Պետությունն ու անհատը

Այստեղից հետևում է, որ պետությունը պատկանում է բնականորեն գոյություն ունեցող բաների դասին, իսկ մարդն էլ իր բնույթով քաղաքական կենդանի է: Բայց ակնհայտ է, որ մարդը քաղաքական կենդանի է մի առումով, որով չէ մեղուն կամ հոտերով ու երամներով ապրող ցանկացած ուրիշ կենդանի: Բնությունը, ինչպես ասում են, ոչինչ չի անում առանց որոշ նպատակի, և այն կենդանիների մեջ միայն մարդուն է օժտել խոսքի զորությամբ: Խոսքը տարբեր է ձայնից, որին տիրապետում են նաև այլ կենդանիներ և գործի են դնում ցավ կամ հաճույք արտահայտելու համար. քանի որ նրանց բնույթն իսկապես հնարավորություն է տալիս ոչ միայն հաճույք և ցավ զգալ, այլև հաղորդել այդ զգացմունքների մասին միմյանց: Խոսքը, մյուս կողմից, ծառայում է՝ նշելու համար, թե ինչն է օգտակար և ինչը՝ վնասակար, ինչպես նաև՝ ինչն է արդար և ինչն է անարդար: Քանի որ մարդու և այլ կենդանիների միջև իրական տարբերությունն այն է, որ միայն մարդիկ ունեն բարու և չարի, արդարի և անարդարի ընկալում: Այս հարցերում ընդհանուր տեսակետ ունենալն է, որ թույլ է տալիս ստեղծել ընտանիք ու պետություն:

Ավելին՝ պետությունը բնական առաջնահերթություն ունի ընտանիքների և մեզնից յուրաքանչյուրի նկատմամբ: Առանձնացրե՛ք ձեռքը կամ ոտքը ամբողջ մարմնից, և դրանք այլևս ձեռք ու ոտք չեն լինի, միայն դրանց անունը կմնա ձեռք կամ ոտք, ինչպես որ կարելի է խոսել քարից քանդակած «ձեռքի» կամ «ոտքի» մասին: Դա կլինի փչացած ձեռք, որն այլևս չունի այն կարողությունն ու գործառույթը, որը հատուկ է ձեռքին: Այսպիսով, թեև մենք կարող ենք ասել, որ վերջույթներն ունեն նույն անունը, չենք կարող ասել, որ այդ վիճակում նույն բանն են: Ուրեմն պարզ է, որ պետությունը և՛ բնական է, և՛ անհատի համեմատ առաջնային: Որովհետև եթե անհատն առանձին վիճակում լիովին ինքնաբավ չէ, հասարակության համեմատ կլինի նույն հարաբերության մեջ, ինչ առանձին վերջույթներն ամբողջ մարմնի համեմատ: Այն, ինչն ի վիճակի չէ մասնակցելու միությանը, որը մենք անվանում ենք պետություն, օրինակ՝ անլեզու կենդանին, նաև այն, ինչը լիովին ինքնաբավ է և այդ մասնակցության կարիքը չունի (օրինակ՝ աստված), ամենևին էլ պետության մաս չէ:

Այսպիսով, բոլոր մարդկանց մեջ կա բնական մղում դեպի այս տեսակի միությունը, և առաջին մարդը, որ կառուցեց պետություն, արժանի է շնորհի մյուսներին մեծ օգուտներ տալու համար: Քանի որ ինչպես մարդն է լավագույնը բոլոր կենդանիներից, երբ հասել է իր լիակատար զարգացմանը, այնպես էլ նա ամենից վատն է, երբ հեռու է մնում օրենքից ու արդարությունից: Զինված անարդարության հետ ամենադժվարն է գործ ունենալ, ու թեև մարդը ծնվում է զենքերով, որ կարող է օգտագործել գործնական իմաստությանն ու առաքինությանը ծառայելու, նրա համար չափազանց հեշտ է դրանք օգտագործել հակառակ նպատակների համար: Հետևաբար, առաքինություն չունեցող մարդն ամենադաժանն է, ամենաանարդարը և ամենավատը: Արդարության արժանիքը պետության առանձնահատկությունն է. քանի որ արդարությունը քաղաքական միության [պետության] կարգն է, և արդարության զգացումն է որոշում, թե ինչն է արդար:

Առաջադրանք

1. **Նկարագրի՛ր** քաղաքականության ծագման հանգամանքները:
2. **Բնորոշի՛ր** Հայաստանը որպես քաղաքական միավոր: Բացատրի՛ր, թե ինչ դեր ունենք բոլորս այդ քաղաքական միավորի մեջ:
3. **Քննի՛ր**, թե **Ն1** -ում ինչ փոխհարաբերության մեջ են պետությունն ու անհատը:
4. **Դիրքորոշո՛ւմ հայտնիր՝** համաձա՞յն ես **Ն1** -ում արտահայտված մոտեցմանը, թե՞ ոչ, ինչո՞ւ:

8.2 Քաղաքականության նշանակությունը հասարակական հարաբերություններում

Մենք հաճախ ինչ-որ բան անվանում ենք «քաղաքական», երբ այն կապակցված է լինում անհատների կամ խմբերի միջև իշխանության* համար պայքարին: Սա նշանակում է, որ քաղաքականությունը տարբեր հակադիր շահեր պաշտպանելու դաշտ է: Այդտեղ է որոշվում, թե ով ինչ է ստանում, երբ և ինչպես: Քաղաքական ասպարեզը հնարավոր է մեկնաբանել որպես **օգուտ ու շահ հետապնդող որոշումների, ընտրությունների հանրագումար**: Քաղաքական ասպարեզում հանդես եկող և շահ հետապնդող միավորները ոչ միայն **անհատներն** են, այլև **կուսակցությունները**, տարբեր **դաշինքները**, **պետությունները**, **խոշոր ընկերությունները** և այլ կառույցներ: Քաղաքականի շրջանակում առաջ են քաշվում ու շրջանառվում պահանջներ, ձևակերպվում շահեր: Այս առումով քաղաքականությունը պայքար է հանուն իշխանության և ռեսուրսների բաշխումը վերահսկելու: Այն արտացոլում է տարբեր մարդկանց, խմբերի ու կառույցների շահերի հակադրությունը կամ համընկնումը: Ուրեմն հնարավոր է քաղաքականությունը մեկնաբանել նաև որպես անհատների, խմբերի ու կառույցների միջև համագործակցություն: Այդ համագործակցությունը կարող է լինել շահերի համընկնման հետևանք:

S1

Ինչպե՞ս են մրցակից շահերը վերածվում քաղաքականության: Բազմակուսակցական ժողովրդավարական երկրներում այս հարցի պատասխանն ընտրություններն են:

Ներկայացուցչական ժողովրդավարության մասին

Ընտրությունները ձայն ստացած կուսակցություններին հնարավորություն են տալիս իրականացնել իրենց ծրագրերը: Ժողովրդավարության այս տեսակը հենց դրա համար էլ կոչվում է ներկայացուցչական, քանի որ ընտրողների փոխարեն որոշումներ են կայացնում նրանց ընտրած ներկայացուցիչները: Սակայն ընտրությունների ժամանակ մրցակցության ճնշման տակ հաճախ կուսակցությունները կամ անհատ քաղաքական գործիչները տալիս են խոստումներ, որոնք ընտրվելուց հետո ի վիճակի չեն լինում իրականացնել:

Բոլորովին այլ վերաբերմունք է քաղաքականությանը, երբ տարբեր անհատներ, խմբեր ու կառույցներ համագործակցում, դաշինքներ են կազմում ընդհանուր **քաղաքական համոզմունքների** հիման վրա: Եվ ամենևին պարտադիր չէ, որ այդ համոզմունքներից բխող նպատակները տեղավորվեն շահ

Բողոքի ցույց ընդդեմ Թեղուտի հանքավայրի շահագործման, Վանաձոր, Հայաստան, 2012 թ.

ստանալու պարզունակ տրամաբանության մեջ: Այդ նպատակները կարող են պաշտպանել հանրային շահը, ոչ թե մասնավոր շահը: Օրինակ՝ մարդիկ, որոնք համարում են, որ չի կարելի չարաշահել բնական ռեսուրսները կարճաժամկետ շահ ստանալու համար, կարող են միավորվել, կազմել խմբեր, կուսակցություններ ու դաշինքներ և քաղաքական ասպարեզում պաշտպանել իրենց տեսակետը: Կամ բոլոր նրանք, ովքեր համարում են, որ քաղաքներում հանրային այգիներն ու պուրակները չարժի մասնավորեցնել և կառուցապատել, կարող են քաղաքականության միջոցով առաջ հրել իրենց տեսակետը: Նրանց մոտեցումը կհակասի այն մարդկանց ու խմբերի մոտեցմանը, ովքեր կարճ ժամկետում դրամական շահ ստանալը դնում են առաջին տեղում: Այս մոտեցումը նույնպես վերաբերում է ռեսուրսների բաշխմանը, սակայն արտահայտում է շահի մասին բոլորովին այլ պատկերացում:

Իհարկե, կոնկրետ քաղաքական ուժերի միջև **պայքարը կամ համագործակցությունը կարող է ժամանակավոր լինել**: Բանակցությունները, իրար փոխադարձ մի բան զիջելը՝ փոխզիջումները, ընտրությունները, բանավեճերը, նույն շահերն ունեցող խմբերի համագործակցությունը, կոալիցիոն կառավարություն* կազմելը կամ կոալիցիայից դուրս գալը, քաղաքական գործընթացի բնականոն դրսևորումներ են:

S2

Քաղաքականությունը և լրատվամիջոցները

Քաղաքական պայքարի վառ դրսևորում է քաղաքական ուժերի ազդեցությունը լրատվամիջոցների վրա կամ հենց կուսակցություններին պատկանող լրատվամիջոցների հիմնումը: Լրատվամիջոցների օգնությամբ քաղաքական ուժերը փորձում են տարածել այս կամ այն հարցի վերաբերյալ իրենց տեսակետը, համոզել մարդկանց, որ իրենց մոտեցումն ավելի լավն է, քան մյուսներինը: Լրատվամիջոցները նաև մեծապես օգտագործվում են մրցակիցներին և նրանց տեսակետը վատաբանելու համար: Գրագետ քաղաքացին, եթե չի ուզում խաբվել, նախ իմանում է, թե որ լրատվամիջոցն ում է պատկանում: Այնուհետև դիտում է նույն իրադարձության կամ երևույթի մասին տարբեր հեռուստաալիքների և ինտերնետային լրատվամիջոցների ռեպորտաժները, կարդում տարբեր տպագիր ու էլեկտրոնային թերթերի լուսաբանումն իրեն հետաքրքրող բանի վերաբերյալ, համադրում և վերլուծում ամբողջ տեղեկատվությունը, նոր միայն փորձում հիմնավոր կարծիք կազմել:

Այն տեսակետը, թե քաղաքականությունը հիմնականում առնչվում է ռեսուրսների բաշխմանը, հատկապես վիճելի է դարձել վերջին տասնամյակների ընթացքում: Արժեքների և ապրելակերպի շուրջ աճող վիճաբանությունը հուշում է, որ քաղաքականությունը նաև ինքնությանն* ու մշակույթին է վերաբերում: Քաղաքականությունը գաղափարների կռիվ է, որի մասնակիցները փորձում են առաջ տանել իրենց կարծիքը՝ օգտագործելով խոր արմատներ ունեցող մարդկային համոզմունքները: Եվ միշտ չէ, որ այդ կարծիքներն ու տեսակետներն ուղղակիորեն առնչվում են ռեսուրսների համար պայքարին: Օրինակ՝ ժողովրդավարական երկրների կառավարման մեջ կանանց տեղեր հատկացնելը համեմատաբար նոր երևույթ է: Այն ուղիղ կապ չունի ռեսուրսների բաշխման համար կուսակցությունների կամ խոշոր ընկերությունների մղած պայքարի հետ: Այլ ավելի շատ հիմնված է այն համոզմունքի վրա, որ կանայք տղամարդկանց հավասար իրավունքներ ունեն և պետք է ներգրավված լինեն պետության կառավարման մեջ:

Ն2 Քաղաքականության բովանդակությունը

Քաղաքականությունն անհնար է առանց բովանդակության: Այն ենթադրում է ձևակերպված ծրագրեր, խնդիրներ ու նպատակներ, ինչպես նաև ակնկալվող արդյունքներ: Այդ ծրագրերը, խնդիրներն ու նպատակները ձևակերպում են քաղաքական դաշտում գործող անձինք, կուսակցությունները և այլ կառույցները՝ դրանք իրականացնելու նպատակով: Մենք հաճախ լուրերով լսում ենք կառավարության կամ ինչ-որ կուսակցության առաջ քաշած գործողության ծրագրի, խնդրի կամ նպատակի մասին: **Այդ ծրագրերը, խնդիրներն ու նպատակները կարող են վերաբերել տնտեսությանը, մշակույթին, առողջապահությանը, բնապահպանությանը, այլ երկրների հետ հարաբերություններին, կրթությանը և այլն: Հետևաբար ասում ենք՝ տնտեսական քաղաքականություն, մշակութային քաղաքականություն, առողջապահական քաղաքականություն, բնապահպանական քաղաքականություն, արտաքին քաղաքականություն, կրթության ոլորտում քաղաքական ծրագրեր կամ նպատակներ:** Այս առումով քաղաքական գործողություններն ու գործընթացները ուղղորդվում են ձևակերպված ու հայտարարված ծրագրերով, խնդիրներով ու նպատակներով:

Սակայն կիրառական մակարդակում քաղաքական գործողություններն ու գործընթացները երբեմն խստորեն չեն հետևում քաղաքական ծրագրերին ու նպատակներին, նորմերին, կանոններին ու ընթացակարգերին: Քաղաքական ծրագրերն ու

նպատակները, նորմերն ու կանոնները միանշանակ կերպով չեն պայմանավորում քաղաքական գործողություններն ու գործընթացները: Ավելին՝ երբեմն դրանք կարող են միմյանց հետ անհամատեղելի լինել: Օրինակ՝ կրթության ու գիտության ոլորտներում դրված խնդիրներն ու հայտարարված նպատակները և իրականում ծավալված գործընթացները կարող են չհամապատասխանել իրար: Նման անհամապատասխանությունները վկայում են այն բանի մասին, որ քաղաքական ասպարեզում ամեն ինչ չէ, որ ըստ պլանավորածի է տեղի ունենում:

Գտնվելով զարգացող փոխազդեցությունների մեջ՝ քաղաքական գործողություններն ու գործընթացները, ծրագրերն ու նպատակները փոխում են քաղաքական հաստատությունները: Իսկ քաղաքական հաստատություններն իրենց հերթին պայմանավորում են գալիք քաղաքական գործողությունների ու գործընթացների, ծրագրերի ու նպատակների բնույթը:

Առաջադրանք

1. **Բնութագրի՛ր** քաղաքականության և լրատվության կապը:
2. **Վերապատմի՛ր**, թե ինչ մոտեցումներ կան քաղաքականության հանդեպ, և ինչ նշանակություն են դրանք ստանում հասարակական հարաբերություններում:
3. **Ն2**-ի հիման վրա **բացատրի՛ր** քաղաքականության բովանդակությունը:
4. 2021 թ. փետրվարի 4-ին ՀՀ Կառավարությունը հաստատեց հանրակրթության պետական նոր չափորոշիչ, որը շատ է տարբերվում մինչ այդ եղած չափորոշչից: Այդտեղ կգտնեք հետևյալ տողերը. «Շրջանավարտներին ներկայացվող որակական պահանջներ՝ ըստ կրթական աստիճանների (կարողունակություններ (կոմպետենցիաներ) և ըստ կրթական աստիճանների ուսումնառության՝ ակնկալվող վերջնարդյունքներ)». օգտվելով **Ն2**-ի նկարից և համացանցից քաղված նյութերից՝ **պարզաբանի՛ր**, թե ինչ են նշանակում այս տողերը, ինչ կապ ունեն կրթական քաղաքականության հետ:
5. Համացանցից ինքնուրույն տեղեկատվություն հավաքիր Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի մասին և **մշակի՛ր** այն: **Վերլուծի՛ր**, թե հանքի վերաբերյալ ինչ հակադիր քաղաքական մոտեցումներ են եղել, գրառի՛ր դրանք: Դասարանում **քննարկե՛ք**, թե քաղաքականությունն ինչպես է ազդել Թեղուտ և Շնող գյուղերի սոցիալական միջավայրի վրա՝ ուշադրություն դարձնելով քաղաքականության, տնտեսության և բնապահպանության կապերին:

Բացատրական բառարան

ԳԼՈՒԽ 1 ՄԱՐԴ ԵՎ ԲՆՈՒԹՅՈՒՆ

Արգելոց | Բնության տարածքների հատուկ պահպանման տեղամասեր, որոնք ունեն գիտական, մշակութային, պատմական և կենդանիներին ու բույսերը պաշտպանելու նշանակություն:

Արդյունաբերություն | Արտադրական աշխատանք, որի նպատակն է հում նյութեր արտադրել կամ դրանք մշակել ու վերամշակել հատուկ ձեռնարկություններում: Հիմնականում բաժանվում է երկու ճյուղի՝ ծանր արդյունաբերություն (մեքենաներ, հաստոցներ, էլեկտրաէներգիա և այլն) և թեթև արդյունաբերություն (կտորեղեն, կաշի, թուղթ և այլն):

Արտադրողականություն | Արտադրելու կարողություն՝ ընդունակություն:

Էվոլյուցիա | Օրգանական ձևերի (կենդանիների և բույսերի) կամ հասարակական կարգի հետզհետե բնականոն զարգացումը (առանց թռիչքի), բարեշրջում:

Հանրույթ | Հանրություն, հանրագումար:

Հասարակություն | Նյութական կյանքի պատմական կոնկրետ պայմանների ընդհանրությամբ միավորված մարդկանց ամբողջություն:

Շահագործում | Գործադրություն, օգտագործում, որևէ նպատակի համար ինչ-որ բան համակարգված կերպով օգտագործելը:

Սոցիալական | Հասարակությանը հատուկ, հասարակության մեջ մարդկանց հարաբերություններին ու կյանքին վերաբերող:

Սպառող | Որևէ մեկի, ինչ-որ երկրի կամ ձեռնարկության արտադրանքը գործածելու համար վերցնող, առնող մարդ կամ կազմակերպություն:

ԳԼՈՒԽ 2 ՄԱՐԴ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աղքատություն | Աղքատ լինելը, տվյալ հասարակության մեջ ընդունված կյանքի նվազագույն մակարդակն ապահովելու անկարողությունը:

Առաջնային սոցիալական խումբ | Մարդկանց ոչ մեծ խումբ, որոնց միջև կան անմիջական հարաբերություններ և հուզական կապ:

Երկրորդային սոցիալական խումբ | Համեմատաբար մեծ թվով մարդկանց խումբ, որոնց միավորում է որոշակի գործնական նպատակ կամ ընդհանուր անելիք:

Ծառայություններ | Օգտակար աշխատանքային գործունեության տեսակներ, որ բավարարում են մարդկանց անձնական և հասարակական պահանջմունքները: Ծառայությունները կարող են արտադրվել ինչպես մարդկանց, այնպես էլ սարքավորումների միջոցով, կարող են ուղղված լինել ինչպես սե-

փական պահանջմունքների, այնպես էլ կազմակերպության կարիքների բավարարմանը, ունենալ ինչպես առևտրային, այնպես էլ ոչ առևտրային բնույթ, կազմակերպվել պետական կամ մասնավոր կառույցների կողմից:

Վարչական մարմիններ | Գործադիր իշխանության հանրապետական և տարածքային կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինները:

ԳԼՈՒԽ 3 ՄԱՐԴ, ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ

Զգացմունք | Ինչը, որ մարդ զգում է հոգու մեջ, ներքին գիտակցություն, հոգու տրամադրություն:

Ինքնադիտում | Սեփական մտքերի, զգացմունքների ու գործողությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելու մարդու ունակությունը:

Համոզմունք | Հավատ, վստահություն, որ հիմնված է ակներև փաստերի և առողջ դատողության վրա:

Հուզական արձագանք | Հուզական պատասխան, ինչպես օրինակ՝ ուրախություն, տխրություն կամ վախ, արտաքին իրադարձություններին:

Սպասում | Սպասելը, հույս, ակնկալիք:

ԳԼՈՒԽ 4 ՄԱՐԴ ԵՎ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էթնոս | Մարդկանց խումբ, որոնք նույնականացվում են միմյանց հետ ընդունված ընդհանուր հատկանիշների հիման վրա, որ տարբերում են նրանց այլ խմբերից: Այդ հատկանիշները կարող են ներառել ընդհանուր ավանդույթներ, ծագումնաբանություն, լեզու, պատմություն, հասարակություն, ազգություն, կրոն կամ սոցիալական որոշակի վարք իրենց բնակության տարածքում: Հայերեն երբեմն «էթնոս» բառի փոխարեն օգտագործում են «ժողովուրդ» բառը:

Խտրականություն | Մարդկանց որևէ խմբի կամ անհատի, ինչպես նաև որևէ երևույթի նկատմամբ ինչ-որ հատկանիշի հիմքով ջոկողություն, կանխակալ բացասական վերաբերմունք, ոչ հավասար վերաբերմունք:

Նորմ | 1. Ընդհանուր կանոն, որով պետք է առաջնորդվել բոլոր դեպքերում: 2. Սահմանված չափ կամ քանակ:

Ռացիոնալ | Բանական, խելքին մոտ, հիմնավորված, նպատակահարմար, հաշվարկված:

Օրենք | Կարգ, որով ղեկավարվում են մարդիկ փոխադարձ հարաբերությունների մեջ:

ԳԼՈՒԽ 5 ՄԱՐԴ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտորեն, Ակնհայտ կերպով, բացահայտ կերպով:

Ներդաշնակություն, Մասերի, բաղադրիչների և տարրերի համաչափ ու համամասն լինելը:

ԳԼՈՒԽ 6 ՄԱՐԴ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔ

Խոշտանգում | Գործողություն, որով որևէ անձի դիտավորությամբ պատճառվում է մարմնական կամ մտավոր ուժեղ ցավ կամ տառապանք:

Նորմատիվ-իրավական ակտ | Վարքագծի պարտադիր կանոններ նախատեսող և ժողովրդի կողմից հանրաքվեով կամ Սահմանադրությամբ նախատեսված մարմինների կամ պաշտոնատար անձանց կողմից ընդունած գրավոր ակտեր: Այդպիսիք են համարվում օրենքները, որոշումները, հրամանները, հրամանագրերը և այլն:

Սահմանադրություն | Պետության հիմնական օրենք, որը սահմանում է պետության կառուցվածքը, կառավարման մարմիններն ու քաղաքացիական իրավունքները: Սահմանադրությունը բարձր է մնացած բոլոր օրենքներից: «Սահմանադրություն» բառը ծագել է լատիներեն constitutio բառից, որը նշանակում է «սահմանել»:

ԳԼՈՒԽ 7 ՄԱՐԴ ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ազատ շուկա | Տնտեսական փոխանակման չկարգավորված համակարգ, որտեղ հարկերը, որակի հսկողությունը, ժամկետային սահմանափակումները, սակագները և կառավարության կենտրոնացված միջամտությունների այլ ձևերը կա՛մ գոյություն չունեն, կա՛մ նվազագույն են:

Աշխատանքի բաժանում | Աշխատանքային գործընթացի տարանջատում մի շարք անելիքների, որոնցից յուրաքանչյուրը կատարում է առանձին անհատ կամ անձանց խումբ:

Առաջարկ | Ապրանքները շուկա հանելը:

Բյուջե | Նախահաշիվ ելքի և մուտքի՝ մի որոշակի ժամանակահատվածի համար, ծախսելիք և ստանալիք գումարի նախահաշիվը որոշակի ժամանակահատվածի համար:

Զանգվածային տեղեկատվամիջոց | Զանգվածային հաղորդակցության եղանակներ, որոնց միջոցով տեղեկատվությունը, կարծիքը, ջատագովությունը, քարոզչությունը, գովազդը, արվեստի գործերը, զվարճանքները և արտահայտ-

ման այլ ձևեր փոխանցվում են շատ մեծ լսարանի: Ամենաընդհանուր իմաստով զանգվածային տեղեկատվամիջոցները ներառում են տպագրությունը, ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, վիդեոն, ձայնագրությունները և համացանցը, մասնավորապես՝ սոցիալական ցանցերը:

Հանրային սեփականություն | Հող, շենք-շինություն և այլ գույք, որ պատկանում է համայնքին կամ պետությանը:

Հարկ | Ընդհանուր անուն տարբեր պարտադիր տուրքերի, որ բնակչությունը վճարում է պետությանը՝ պետական ծախսերը հոգալու համար: Ուղղակի հարկեր, որ վճարում է տվյալ անհատը իբրև գլխահարկ, եկամտային հարկ, առևտրի պատենտ և այլն: Անուղղակի հարկեր, որ դրվում են իրերի վրա, որոնցից մարդիկ օգտվում են՝ իբրև ակցիզ, մաքս, երկաթուղային տոմսի լրացուցիչ վճար և այլն:

ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) | Որոշակի ժամանակահատվածում տվյալ երկրի արտադրած և վաճառած բոլոր ապրանքների ու ծառայությունների շուկայական արժեքի դրամական չափում:

Մասնավոր սեփականություն | Որևէ ունեցվածք, որ պատկանում է մի անհատի կամ ձեռնարկության:

Պահանջարկ | Ապրանքների պահանջ:

Ռեսուրս | Միջոցների աղբյուր, պահեստ:

Շահույթ | Շահ՝ օգուտ առևտրից կամ արդյունաբերությունից:

Տնտեսագիտություն | Հասարակության տնտեսական գործունեության և տնտեսական հարաբերությունների ուսումնասիրությամբ զբաղվող գիտությունների ամբողջությունը:

ԳԼՈՒԽ 8 ՄԱՐԴ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ինքնություն | 1. Անձի կամ իրի ով կամ ինչ լինելու փաստը: 2. Որոշակի տեսակի մարդ լինելու կամ զգալու փաստը: 3. Այն հատկությունները, որոնք մարդուն, կազմակերպությունը և այլ բաները տարբերում են մյուսներից:

Իշխանություն | 1. Իրավունք, ուժ և հնարավորություն մի բան անելու ըստ իր կամքի կամ պաշտոնի: 2. Վարչություն կամ անձ, որ ըստ պաշտոնի կատարում է այս կամ այն գործը: 3. Տերություն, տիրապետություն:

Կոալիցիոն կառավարություն | Խորհրդարանական կառավարման համակարգում մի մարմին, որը ձևավորվում է, երբ տարբեր քաղաքական կուսակցություններ և ուժեր որոշում են համագործակցել երկրի կամ համայնքի կառավարման և կարգավորման գործում:

Հրաչ Բայադյան **Դավիթ Ստեփանյան** **Վահրամ Սողոմոնյան**

Հասարակագիտություն

Հանրակրթական դպրոցի
7-րդ դասարանի դասագիրք

Հեղինակներ՝ Հրաչ Բայադյան,
Դավիթ Ստեփանյան,
Վահրամ Սողոմոնյան

Խմբագիր՝ Սաթենիկ Մկրտչյան

Ձևավորող՝ Նորա Գալֆայան

Նկարիչ՝ Մեգգի Արարատյան

Կազմի ձևավորող՝ Լուսինե Նավասարդյան

Տառատեսակը՝ «Mardoto», Քրիստիան Ռոբերտսոն,
Վահան Հովհաննիսյան

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 700x100 1/16:
Ծավալը՝ 9 տպագրական մամուլ: Տպագրական գույները՝ 4x4:
Տպաքանակը՝ 2000:
Տպագրվել է «Անտենոր» տպագրատանը, 2023: